

39

5
4-77

Հին Գրքերի Գրադարան

ՄԱՐՏ 1 1861

ՉՈՒՆԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ


Ի հայր և սուրբազան սուրբ և Կենդանի Հոգու
ի Մեծի և ուխտի և Սրբազան սուրբ և Կենդանի
1854:

ՊԵՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1854:

ԲՆԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ պատմութեան անուամբ շատ տեսակ
գիտութիւններ կրնան իմացուիլ: Մեր աս՝ բնական
պատմութենէ առած հատուածները՝ պարզապէս
բնական իրաց զննութեանց վրայ հիմնած ըլլալով,
շատ գիւրրմբունքի են եւ ամենուն առջեւը խիստ
զբօսալի տեսարան մը կը բանան: Իր սահմանը գի-
տութեան կողմանէ անկոպար է, եւ բնագննից ձեռ-
քով՝ կենդանական, տնկական ու հանքային ժո-
ղովածոյից վրայ օրըստօրէ նորանոր անսովոր գիւ-
տեր կ'աւելցուին: Աս գիտութեան ամէն առարկա-
ները, ինչպէս չորքոտանի անասուն մը, թռչուն,
ուռն, ձուկ, ձի ու միջատ, ծաղիկ մը, մետաղի
տոր մը, վանակն մը կամ քար մը, չէ թէ միայն
մեզի համար օգտակար կ'ըլլան՝ երբ որ ճիշդ քնն-
նութեամբ իրենց առանձին յատկութիւնները գիտ-
նալու ըլլանք, այլ նաեւ մեր սիրտն ու հոգին զար-
մանալի եւ նորանոր մտածութեանց կը տանին: Ի-
բրեւ բնութեան զննիչ՝ ամենայն ոք կրնայ բնագէտ
ըլլալ, բարձր կամ նուազ աստիճանի գիտութիւն
ստանալով:

ՉՈՒՆԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Թէպէտ ամէն մարդ կարողութիւն ու բաւական նիւթ եւ առիթ ալ ունի իր մտաւոր զբօսանաց միտ զնելու, ի վերայ այսր ամենայնի շատերը կեանքերնին կ'անցընեն, առանց միտ զնելու իրենց չորս կողմը պատող բնական զարմանալեաց ու անոնց գեղեցկութեան: Այսրենի ու քաղաքակիրթ մարդուն մէջ աս տարբերութիւնը կայ, որ վայրենին ամենեւին միտ չի գներ կենդանական ու անկենդան իրաց՝ որոնց մէջ կը գտնուի. միայն անոր կը նայի որ իր բնական պիտոյքն անոնցմով լեցընէ: Իսկ քաղաքակիրթ մարդը՝ զանոնք իր պիտոյից ու զիւրութեանց ծառայեցընելէն ետքը՝ միանգամայն զանոնք կը քննէ ու անոնց վրայ մտադիր կ'ըլլայ, որով բնական տիեզերաց վրայ գտնուող առարկաներուն իւրաքանչիւր տեսակը, թէ առանձին եւ թէ խմբովին, թէ իբրեւ ամբողջ եւ թէ իբրեւ մաս մը՝ աչաց առջեւ կ'ունենայ. կը ճանչնայ իւրաքանչիւր մասին որոշուած սահմանն ու իր ամբողջին հետ ունեցած արտաքոյ կարգի մեծ պատշաճականութիւնը, եւ վախճանը՝ որուն համար ստեղծուած է, որն որ յայտյանդիման Արարչին իմաստութիւնն ու բարութիւնը կը քարոզէ:

Թէպէտ եւ ամէն բնական երեւոյթներուն վրայ մտադրութիւն ընել պէտք է, բայց աւելի զբօսելի ու օգտակար է մասնաւոր եղանակաւ միտ զնել անոնց՝ որոնք մեզի աւելի մերձաւորութիւն ու բնտանութիւն ունին: Արնանք ալ իրաւամբ զրուցել որ բոլոր տեսանելի տիեզերաց մէջ՝ չկայ ուրիշ ա-

ուարկայ մը՝ որ մեր բողոք մտադրութիւնն իրեն ձգէ,
 ինչպէս կենդանեաց հարուստ գումարութիւնը: Թէ-
 պէտ մարդս պէտք է որ լերանց զարմանալի կազմու-
 թիւնը, վանականց անմեկնելի յօրինուածքն եւ ա-
 նոնց բազմազան պէսպիսութիւնը ճանչնայ ու յար-
 գէ, ի վերայ այսր ամենայնի իրաւամբ պէտք է որ
 իր աչքն աւելի կենդանեաց վրայ դարձնէ, որոնց
 մարմնոց կազմութեան մէջ՝ իր մարմնոյն կազմուած-
 քին հետ շատ մեծ նմանութիւն կը նշմարէ, եւ որոնց
 կամայական շարժմունքներն՝ աւելի զուարճութիւն
 կը պատճառեն իրեն, քան թէ անդամանդին փալ-
 փլուն լուսաւորութիւնն ու կակաջին երփներփն
 գունոց խառնուրդը. որովհետեւ ամենէն գեղեցիկ
 գոհարն ու ամենէն սիրուն ծաղիկն ալ քիչ մը զըն-
 նելէն եւ անոնց ձեւն ու յատկութիւններն իմանա-
 լէն ետքը՝ ալ ուրիշ աւելի ծանօթութիւն մը չենք
 կրնար առնել. նոյն իսկ տնկոց կեանքն ալ կենդա-
 նեաց համեմատութեամբ շատ պարզ ու անոնցմէ
 շատ վար է: Կենդանիներէն շատերը՝ թէպէտ առջի
 անգամուն աչաց այնչափ զուարճութիւն չեն պատ-
 ճառեր՝ որչափ փայլուն վանակն մը իր գեղեցկու-
 թեամբը կամ բազմաթերթ վարդ մը իր հոտովը,
 ի վերայ այսր ամենայնի իրենց կամայական շարժու-
 մը, բնածին բարքը, իրենց կենդանական կեանքը,
 օգուտն ու գործածութիւնը՝ մտադրութեան ու զբօ-
 սանաց շատ աւելի նիւթ կը մատակարարեն, եւ ա-
 ռանց մտաւոր կարողութիւնները յոգնեցընելու՝ ան-
 դադար նորանոր երեւոյթներով միտքը կը զբա-

ղեցընեն. ամենափոքր որդ մը՝ շատ աւելի երկայն
 ժամանակ զմեզ կը զուարճացընէ իրեն պէսպէս
 շարժմունքներովը, քան թէ երկնաբերձ շքեղ ար-
 մաւենին: Աւր որ կենդանութիւն ու շարժում կը
 տեսնենք, սրտերնիս ուրիշ զգացում մը կը զգայ.
 անոր համար դիւրաւ կրնայ մեկնուիլ թէ ինչո՞ւ
 համար գեղեցիկ գիւղական տեսք մը, թէ բնական
 ըլլայ եւ թէ պատկերհանին մոգեցուցիչ վրձնէն
 ելած ըլլայ, զմեզ ըստ բաւականին չիկշտացըներ՝
 քանի որ շարժման կամ կենդանութեան հետք մը
 չենք նշմարեր անոր վրայ:


Աստի ամենէն աւելի պէտք է որ կենդանեաց
 դասը մեր մտադրութիւնը գրգռէ, իրեն մեղի հետ
 ունեցած կապակցութեան եւ մեր երջանկութեան
 ու բարեկեցութեան վրայ ըրած ազդեցութեան հա-
 մար: Ինչպէս դժբախտ կ'ըլլար մարդկային ազգը՝
 առանց այնպիսի մեր ներքին ու արտաքին պիտոյքը
 հոգացող անասնոց: Ա՛րչափ նպաստաւոր կ'ըլլան
 ասոնք տէրութեան կամ ազգի մը ծաղկելուն եւ իր
 ներքին զօրութեան աճելուն. քանի քանի գերդաս-
 տանաց երջանկութեան առիթ եղած են ասոնք ու
 կ'ըլլան: Ա՛րչափ անհրաժեշտ կապակցեալ է մարդ-
 կային ընկերութեան պատուական մէկ անդամին,
 այսինքն՝ երկրագործին վիճակին երջանկութիւնն իր
 կովերուն ու ոչխարաց հօտին հետ: Ա՛րչափ անմար-
 դի անապատ կ'ըլլային շատ կողմեր առանց անասնոց
 օգնականութեան, որոնք հիմայ իրենց հարստու-
 թեամբն ու բերքերովը զմեզ կը զմայլեցընեն: Հո-

լանտա ու շելուետիա՝ Բերուի ու Գալիֆոունիայի
անհատնում ոսկեհանքէն առնուած մուտքէն աւելի
հարուստ մուտք ունին իրենց երջանիկ երկրագոր-
ծութենէն ու կենդանաբուծութենէն: Տարւէ տարի
բոլոր ազգերը Ռուսիայի հարկ մը կը վճարեն անոր
պատուական մուշտակին համար: Անգղիացիք ու
Սպանիացիք իրենց ձիանքէն ու ոչխարաց բրդէն՝
աւելի ապահով շահ մ'ունին, քան թէ մարդկային
արեան գետերով ստացած ու պահած արեւմտեան
ու արեւելեան շնդկաստանին գաղթականութիւն-
ներնէն:

Կենդանեաց վրայ առանձին խօսելու ժամանակ-
նիս՝ կենդանախօսից դրած կարգերուն, ցեղերուն
ու տեսակներուն չենք հետեւիր. մեր վախճանն ան
չէ որ կարգաւորեալ կենդանաբանական բնապատ-
մութիւն մը գրենք, որուն մէջ կենդանեաց ամէն
տեսակներն անվրէպ բովանդակին, այլ նպատակ-
նիս ան է՝ որ կենդանեաց զարմանալի յատկութիւն-
ներն ու ձիրքերն ընթերցողաց առջեւ դնելով՝ կա-
մաց կամաց ընդհանուր բնական գիտութեան ծանօ-
թութեան առաջնորդենք: Աւելի լաւագոյն ու դիւ-
րիմաց կ'ըլլայ՝ երբ որ ուսումնական շեղող մարդը
մասնաւորներէ առ ընդհանուր, քան թէ ընդհան-
րէն՝ առ մասնաւոր կ'երթայ: Գործնական տեղե-
կութիւններն աս եղանակաւ միայն աղէկ կը ստա-
ցուին: Բնազնին մը երբ որ կ'ուզէ բնական ժողո-
վածոյք ունենալ, ամէն տեսակ դժուարագիւտ ու
պատուական նիւթեր կը ժողվէ, զանոնք կրցածին

շափ կարգի կը դնէ, եւ երբ որ նոյն նիւթերը շատ
 բազմաթիւ կ'ըլլան ու շիտթուծիւն պատճառելու
 կը սկսին, ան ատեն զանոնք կարգաւորեալ ու ընդ-
 հանուր կարգի մը մէջ դնելու ձեռք կը զարնէ: Ա-
 եղանակաւ մեր ընթերցողներն ալ երբ որ զանա-
 զան կենդանեաց առանձին յատկութիւնները կը
 ճանչնան, բաժանման մը պատուական յարդը կը
 զգան: Անոր համար երբ որ մէկիկ մէկիկ կենդա-
 նեաց վրայ խօսելէն ետեւ՝ ցրուած նիւթերուն ցան-
 կը գիտնական եղանակաւ մը՝ իրենց կարգերուն ու
 ցեղերուն բաժնուած՝ իբրեւ երկրորդական բան մը
 դրուելու ըլլայ, շատ շահաւէտ կ'ըլլայ, ուր որ ե-
 թէ ասոր հակառակ՝ յառաջ դրուէր, չոր ու անի-
 մանալի կ'ըլլար:





Զ Ո Ի Ե

ԸՆԴՆՅ տարակուսի կրնանք ըսել որ բոլոր կաթնատու կենդանեաց մէջ չկայ մէկը՝ որն որ մարդուն այնչափ բարիք ընէ ինչպէս շունը: Թէպէտ մարդ ոչ անոր միտն ու կաշին կրնայ գործածել, եւ ոչ ալ ուրիշ մէկ մասէն օգուտ կրնայ հանել, ինչպէս որ արջառներէն իր օրըստօրեայ պէտքը կը հոգայ. ի վերայ այսր ամենայնի շունը չէ թէ միայն իր ձրից ու կարողութեանց համար, հապա նաեւ մարդուն ըրած ծառայութեանց համար իրաւամբ միշտ ուրիշ կենդանիներէն վեր կը դասուի: Իր օգնականութեամբն է որ մարդս տէր եղած է հիմակ ընտանի եղած այնչափ կենդանեաց, որոնք թէ զօրութեամբ ու թէ արագութեամբ մեզմէ վեր են. շունն իր սուր զգայարանքներովը, քաջասրտութեամբն ու հաւատարմութեամբը շատ գազաններ նուաճելու օգնած է, զորոնք մարդս առանց անոր օգնութեան՝ երբեք չէր կրնար զսպել եւ իր իշխութեան տակ ձգել:

Իսկ իր բնական ձրից ու մեզի ըրած ծառայութեանց վրայ խօսելէն յառաջ՝ պէտք է քիչ մը իր մարմնոյն ու ձեւին վրայ խօսիլ: Շներն որչափ որ ալ մեծութեամբ ու ձեւով իրարմէ տարբերին, ի վերայ այսր ամենայնի ունին այնպիսի յատկութիւններ՝ որ բաւականապէս կը ցուցնեն թէ նոյն սեռէ յառաջ եկած են: Շան գլուխը քիչ մը երկրնկէկ է ու մարմնոյն հետ հօրիզոնական կը կենայ. դագաթը տափարակ է, եւ շրթանց վերին մասը կը ծածկէ վարի շրթանց երկու կողմերը: Քիթը միշտ խոնաւ ու քիչ մը դուրս ցցուած է: Բերնին չորս կողմը

Տինգ վեց մաս բաժնուած ցանցառ մագեր կան : Աղ-
րաները 42 հատ են . ասոնց մէջ գլխաւորներն են
կողմնական 4 սուր երկայն ու ծռած աղբաները : Աւ-
զուն երկայն , ողորկ ու շատ դիւրաշարժ է : Ականջ-
ներն երբեմն սրածայր , երբեմն կլոր , երբեմն կա-
խուած եւ երբեմն վեր տնկուած են : Մարմինը
կլոր է ու վարի դին երթալով կը բարակնայ : Քա-
ծը (էգ շունը) հասարակօրէն տասը եւ երբեմն ալ
ութը ծիծ կ'ունենայ : Պոչը միշտ տնկուած կամ
կլոր դարձուցած վեր կը բռնէ : Մարմինը երբեմն
թանձր ու թաւուտ , երբեմն ալ բարակ ու կարճ
մագերով ծածկուած է . բայց արեւելքի շներէն
շատերը եւ մանաւանդ Ափրիկէիները լերկ ու շատ
անգամ բորոտ ու տգեղ կ'ըլլան : Մազերնին որոշ
գոյն մը չունի . եւ աս բանս առհասարակ ամէն ըն-
տանի կենդանեաց վրայ ալ կը տեսնենք :

Չայնը զանազան է . ըստ կրից տարբերութեան՝
կը կռնչեն , կը հաջեն , կ'ոռնան ու կը մռնչեն ,
բայց աս վերջինը հասարակօրէն ցած ձայնիւ : Աս
զանազան ձայներով իրենց կիրքը կը յայտնեն , եւ
շատ զարմանալի բան է որ շատ շներ՝ լուսընկայ ժա-
մանակ կամ երբ որ զանգակի ձայն լսելու ըլլան եւ
կամ արտաքոյ կարգի նոր բան մը տեսնելու ըլլան ,
գէշ գէշ կ'ոռնան :

Շունն ամենէն աւելի միս կը սիրէ , բայց ուրիշ
կերակուրներու ալ կը վարժի . տնկային կերակրոց
մէջ ամենէն աւելի սիրով կ'ուտէ հաց ու խմորե-
ղէն . կան շներ՝ որ պտուղ ալ կ'ուտեն . իսկ սենեկի
շնիկները խահուէի այնչափ կը վարժին , մինչեւ ե-
թէ ժամանակին չտրուելու ըլլայ՝ անհանգիստ կ'ըլ-
լան : Շունը շատակեր է , անոր համար ինչ որ գտնէ՝
կ'ուտէ , բայց երկայն ատեն ալ անօթութեան կրնայ
դիմանալ : Անգամ մը տան մէջ մնացած շունը՝ 40
օր ապրած է առանց կերակրոյ՝ միայն անկողնոյ մը

բուրդն ուտելով: Գայլու պէս կէս մը հոտած միս կը սիրէ, ու իր պատուական աղբաներովն ամենակարծր ոսկրները քանի մը վայրկենի մէջ դիւրութեամբ կը կրծէ, որոնք ստամոքսին մէջ ըստ մեծի մասին կը մօրսին, եւ անով շատ գէր կ'ըլլայ: Եւ որպէս զի կերած ոսկրին սուր կտորուանքներն իրեն մնաս մը չտան, խոտ ալ կ'ուտէ, որով ոսկրները խոտին հետ խառնուելով՝ առանց մնասելու դուրս կ'ելեն. աս դարմանը կը գործածէ նոյնպէս երբ որ ստամոքսը շատ կը լեցընէ, որն որ զինքը փսխելու կը գրգռէ: Շունը կերակուր ուտելու ժամանակ ցասկոտ կ'ըլլայ, դիւրաւ կը բարկանայ ու կը խածնէ, չափէն աւելի շուտ կ'ուտէ՝ երբ որ ուրիշ շուն մը քովը կը մօտենայ. շատ անգամ աւելցած կերակուրը կը պահէ կամ կը թաղէ:

Յուրը՝ լեզուն տարգալի ձեւով երկրնցընելով կը խմէ: Չիմէրման կը պատմէ թէ ծարուած շուն մը՝ նեղ ու բարձրկեկ ամանի մը մէջ ջուր տեսնելով եւ ջուրը շատ վար ըլլալուն՝ գլուխը չկրնալով մէջը հասցընել, սկսաւ մէջը քար նետել, որ ջուրը բարձրանայ, եւ այնչափ նետեց՝ մինչեւ ջուրը չափաւոր բարձրութեան մը հասնելով՝ հանգիստ խմեց ծարան անցուց: Շան տէրը հաստատեց որ աս ըրածն ինք իրմէ է, սորվեցուցած կամ վարժեցուցած գործք մը չէ: Բնութիւննին շատ չոր ու տաք է, անոր համար պէտք է միշտ մանաւանդ ամառը՝ խմելու բան մը տալ, որ զովանան, ապա թէ ոչ՝ կը հիւանդանան եւ շատ անգամ կը կատողին:

Շունը շատ երկայն ատեն կրնայ վազել. վազած ատեն արտաքուստ չիքրտնիր, հապա լեզուն երկրնցընելով կը զովանայ, նստելով կամ փորի վրայ պառկելով կը հանգչի: Քնանալու ատեն՝ կը խորթայ, յաճախ երազ կը տեսնէ ու կը հաջէ, բայց դիւրաւ կ'արթըննայ. արթընցած ատեն կը յօրանջէ:

Մաքրութիւն կը սիրէ, ու մարմնոյն վրայի աղտոտութիւնները լվելով կը մաքրէ: Ջերմութիւնն իրեն շատ հաճոյական է ու փափուկ անկողին շատ կը սիրէ, բայց կարծրին վրայ ալ շուտով կը վարժի ու հանգիստ կը քնանայ:

Տարին երկու հեղ կը ձկնէ, եւ ամէն անգամ 3—12 ձագ կը բերէ: Չագերը ծնած ժամանակնին տկար, անկատար ու կոյր կ'ըլլան: Աս կուրութիւնը բնական չէ, ինչպէս որ ռամիկ ժողովուրդը կը կարծէ, այլ արտեւանանց իրարու կպած ըլլալէն յառաջ կու գայ, եւ տասներորդ կամ տասուերկուերորդ օրը բացուելով՝ հասարակ կը տեսնեն: Մայրը շատ սիրով կը նայի ու կը հոգայ ձագերը, եւ թէ որ մէկը տեղերնէն դուրս հանէ թողու, զգուշութեամբ կը վերցընէ տեղը կը տանի. այսպիսի դէպքին՝ ամենէն առաջ վերցուցած ձագն՝ որսորդք ամենէն լաւ ու ընտիր շուն կը համարին: Իր ձագերը թշնամեաց դէմ մեծ քաջութեամբ կը պաշտպանէ. նոյն իսկ ամենափոքր տեսակ շներն ալ իրենց ձագերը պաշտպանելու ատեն իրենցմէ շատ մեծ թշնամեաց դէմ զարմանալի քաջասրտութիւն կը ցուցընեն: — Սաքսոնիայի Լաւսից գաւառին մէջ վաճառականի շան մը վրայ աս նկատմամբ շատ զարմանալի ու գրեթէ անհաւատալի դէպք մը կը պատմուի: Աս վաճառականը Լիփսիայի տօնավաճառը գացած ըլլալով՝ շունն ալ հետը մէկտեղ գացեր էր: Նոյն քաղքէն ելլելէն քանի մը օր յառաջ շունը ձկնած ըլլալով՝ տէրը պանդոկապետին յանձնեց որ մինչեւ ձագերուն մեծնալու ատենը նայի: Տեղը հասնելէն քանի մը օր ետքը իր սիրելի շան ձայնը կը լսէ, դուռը կը բանայ, կը տեսնէ որ շունը լակոտներէն մէկը խածած՝ կը բերէ առջևը կը ձգէ, եւ քիչ մը ատեն աներեւոյթ ըլլալէն ետքը՝ ուրիշ ձագ մ'ալ կը բերէ: Տէրը բանն իմանալով՝ ծառան եւ

տեւէն կը խրկէ, որ երթայ նայի. ծառան կ'երթայ ու երեք մնացած ձագերն ալ մօտերն ապահով տեղ մը դրուած գտնելով՝ կ'առնէ կը բերէ, շունն ալ անոր ետեւէն ուրախութեամբ կու գայ: Ախիսիայի պանդոկապետը շան իր ձագերովը մէկտեղ աներեւոյթ ըլլալը վաճառականին իմացընելով, կը տեսնուի որ շունը տասն անգամ 20 մղոն ճամբայ եկեր գացեր է իր ձագերը բերելու համար: Հարկաւ տասն անգամ Մուլտա գետը լողալով անցած, ճամբան ձագերուն կաթ տուած եւ իրեն համար ալ կերակուր փնտռած պիտի ըլլայ, աս ամէն բան քանի մը օրուան մէջ կատարեր է, իր ձագերը սիրելի հայրենիքը բերելու համար:

Շունը տարւան մը մէջ իր բնական պատշաճ մեծութիւնը ստացած կ'ըլլայ. 14—20 տարի կրնայ ապրիլ, բայց աս հասակին հասնելու որ ըլլայ՝ շատ կը տկարանայ ու զգայութեանց սրութիւնը կը կորսընցընէ: Ճերմակ փայլուն ու սուր ատամունքը կը թխանան ու կը փթանան, երեսին վրայի մազերը կը սկսին մոխրագունի զարնել: Շատակերութիւնն ու ծուլութիւնը շունը ժամանակէն յառաջ կը ծերացընեն, եւ բնութեամբ կայտառ կենդանին կը թուլնայ, շատ կը քնանայ, յաճախ երազ կը տեսնէ, որուն նշաններն են քնոյ ատեն կռնչել, հաջել ու պոչը շարժել՝ երազին համաձայն:

Շան զգայարանաց մէջ ամենէն կատարեալը՝ հոտառութիւնն է, որով խիստ հեռուէն շատ բաներ իմանալով՝ զորոնք մօրդս բնական եղանակաւ չէր կրնար տեսնել կամ իմանալ, նշաններով կ'իմացընեն: Պէնիովսքի անուն նաւապետը դէպ ի ճարոն ճամբորդութիւն ըրած ատեն՝ իր շունը ցամաք մօտենալնին իմանալով՝ բիւրապատիկ ուրախական նշաններով կը յայտնէր, ուր նաւաստիներն եւ ոչ բան մը կը տեսնէին: Նոյն իսկ քանի մը բնական

երեւոյթները յառաջագոյն կրնան գուշակել: Հե-
լուետիայի մէջ շուն մը երկրաշարժէն քանի մը օր
առաջ շատ անհանդարտ կ'երեւար եւ ձեւերովն ու
շարժմունքներովը կարծես թէ կ'ուզէր իր տերանց
ըսել որ տնէն հեռանան երթան. քիչ մը ետքը
շունն աներեւոյթ եղաւ. եւ երկրաշարժը լմըննա-
լէն ու տունը կործանելէն ետքը՝ դարձաւ ու տխրու-
թեամբ մը փլատակաց վրայ նստեցաւ:

Հանց բազմաթիւ տեսակներուն նայելով՝ ոմանք
կարծիք ունեցան որ մէկ շան տեսակէ առաջ եկած
չըլլան: Բայց ասիկա այնչափ հաւանական չ'երեւար,
որովհետեւ ինչպէս փորձով կը տեսնենք՝ չէ թէ
միայն ընտանի վիճակը, այլ նաեւ սնունդն ու օդա-
բաժինը (կլիման) կենդանեաց մարմնոյն եւ ըստ մա-
սին իրենց բնութեան վրայ մեծ ազդեցութիւն կ'ը-
նեն, մանաւանդ օդաբաժինը՝ որ ուրիշ պատճառ-
ներէն աւելի ազդեցութիւն կ'ընէ թէ մարդուն եւ
թէ կենդանեաց գեղեցկութեան կամ տգեղու-
թեան, քաջասրտութեան կամ վատութեան վրայ:
Նաբլանտայի ու Արէօնլանտայի թէ բնակիչներն ու
թէ շները հաւասարապէս տգեղ եւ անշնորհք են.
ասոր հակառակ աւելի բարեխառն երկնից տակ
գեղեցիկ ու աջողակ կ'ըլլան: Գանիայի, Թաթարս-
տանի, Իրլանտայի ու Ալպանիայի կամ Եպիրոսի
շներն ամենէն ազնիւ տեսակներն են. վերջին տե-
սակը հին ժամանակն ալ շատ երեւելի էր: — Ե-
պիրոսի թագաւորը՝ մեծին Աղեքսանդրի աս տեսակ
շուն մը պարգեւ խրկելով, Աղեքսանդր շան զօրու-
թիւնն ու քաջասրտութիւնը փորձել ուզեց, եւ
առջեւն արջ, կինճ ու վայրենի եղջերու հանել տը-
աւ. բայց շունն ամենեւին տեղէն չշարժեցաւ, թէ-
պէտ շատ կը գրգռէին: Աղեքսանդր շան վատու-
թեան վրայ բարկանալով՝ մեռցրնել տուաւ: Եպի-
րոսի թագաւորն աս բանս լսելով՝ ուրիշ մը խրկեց,

խնդրելով որ առջեւն աւելի մեծ ու կատաղի գա-
զաններ հանեն : Աս անգամ շան առջեւն առիւծ մը
կը հանեն . շունն ահեղ գազանին վրայ յարձակե-
լով՝ վայրկենի մը մէջ կը պատուէ : Նոյն փորձը փղի
հետ ալ ընել կու տան , եւ դարձեալ շունն իր քա-
ջութիւնը կը ցուցնէ : Հանդիսատեսք չէին գիտեր
որուն վրայ աւելի զարմանան . շան քաջասրտութեան
ու փղին դէմ յարձակելուն , եթէ փղին ինք զինքը
պաշտպանելուն ու վերջապէս յաղթուելուն վրայ :

Այրեցած գօտւոյն տակ եղող շները իրենց քաջ
բնութիւնը բոլորովին կորսնցուցած են . անոր հա-
մար ան կողմի բնակիչները զիրենք ուտելու կը գործ-
ածեն : Խափշիկ մը շան խորովածն ուրիշ ինչ եւ
իցէ ազնիւ կերակրէ վեր կը դասէ : Նոյնպէս Եգիպ-
տոս շան միսը կ'ուտեն : Ստորին Աուինէայի (Ափրի-
կէ) Անկողաց թագաւորութեան մէջ՝ շներն արջաու-
ներու պէս ընդեղէններով կը սնուցանեն . գիրցած
շուն մը նոյն տեղը 20 գերւոյ գնոյն հաւասար է .
մէկը չիկրնար ազնուականութեան աստիճան առնել՝
մինչեւ որ թագաւորին խոհանոցին քանի մը գիր-
ցած շուն չպարգեւէ : Սանտուիչեան կղզեաց թա-
գաւորն Ամերիկացի Բողոմաք նաւուն պաշտօնակալ-
ները 1831ին սեղանի հրաւիրեց : Պատմիչը կ'ըսէ
որ սեղանին գլուխը՝ ուրիշ բոլոր կերակուրներէն
վեր՝ խորոված շուն մը կար , որուն վրայ խոզի գլուխ
ու ոտքեր կարուած էին : Աս շները , կ'ըսէ , մասնա-
ւոր տեսակ մըն են՝ որ բանջարեղէններով կը սնու-
ցուին . համերնին խոզի մսի համին շատ նման է . աս
տեսակ շուն քիչ կը գտնուի . բայց երեւելի խըն-
ջոյքներու մէջ չեն պակսիր : Քուք նաւապետն ալ
երբ որ առողջ կերակուր չգտնելով՝ ծանր հիւան-
դացաւ , նաւուն մէջ ուրիշ կենդանի անասուն չըլ-
լալով՝ շան մը արգանակով կեանքն ազատեց : Նոյն-
պէս Կարքեղոնացիք շան միս կ'ուտէին :

Բայց թէ շան որ տեսակը մէկալ տեսակներուն
 իբրեւ նախահայր կրնայ դրուիլ, ասիկա բնազնինք
 դեռ չեն կրցած որոշել: Ոմանք ընտանեցած գայլը
 կամ ոսկեգոյն գայլը (շոփուլ) շան սկիզբ կը համարին:
 Պիւֆոն զննութիւն ընելով՝ կրթութենէ յառաջ
 եկած փոփոխութիւննին կորսընցուցած ու բոլորովին
 վայրենացած շանց վրայ, զորոնք Ամերիկայի նոր
 գտնուած ժամանակը Սպանիացիք թող տուած էին եւ
 հիմայ վայրենի եղած են, նոյնպէս Քոնկոյի մէջ
 գտնուած վայրենի շանց վրայ, որոնք գունդ գունդ
 եղած՝ արջառաց ու փղաց վրայ կը յարձակին, անոնց
 վրայ ահանջին ձեւին ու դրիցը, մազերուն, պոչին ու
 բնութեան կողմանէ՝ Հովուաց շան հետ շատ նմանութիւն
 կը գտնէ, եւ ասկից կը հետեւցընէ որ աս
 Հովուաց շուն ըսուած տեսակը՝ բուն նախնական
 տեսակն եղած ըլլայ, եւ մէկալ տեսակներն
 ասկից սերած ըլլան: Բայց աւելի նոր բնազնինք՝
 երբ որ շան գլխուն ձեւին միտ դնելու սկսան,
 տեսան որ շանց շատ տեսակները մեծ նմանութիւն
 ունին Տիւրք ըսուած նոր Հոլանտայի կէս մ'ընտանեցած
 շան հետ, որն որ վայրենութեան որոշ նկարագիրը
 դեռ պահած է: Անոր համար քիւֆիէ մեծ
 բնագէտը շանց գլխուն ձեւին, ծնօտին եւ ցոռակին
 երկայնութեան ու կարճութեան նայելով՝ շանց բոլոր
 տեսակներն երեք դասի կ'ամփոփէ, որն որ
 Պիւֆոնին դրած կարգէն շատ տարբեր եւ միանգամայն
 աւելի բնական ու մտաց համաձայն է: Մենք
 հիմայ շանց կարգը հոս դնելու զանց կ'ընենք՝
 վերջը թող տալով, եւ կը սկսինք անոնց երեւելիներուն
 վրայ խօսիլ:

Կէս մը ընտանեցած շանց կարգը կրնայ դրուիլ Նոր Հոլանտայի կամ Աւստրալիայի Տիեզերացի ըսուած շուներ: Ասիկա մեծ, զօրաւոր ու կատաղի շուն մըն է, մարմնոյն երկայնութիւնը՝ պոչը դուրս թող տալով՝ երկու մինչեւ երեք ոտք է. պոչին ոսկրները 18 կտոր են, ուր որ ուրիշ շանցը՝ 19 կտոր: Կերպարանքն ու մարմնոյն կազմածքը՝ հովուաց շան հետ շատ նմանութիւն ունի, բայց գլուխը Գաղղիայի սպանդաշան կը նմանի: Մարմինը՝ թանձր, դեղին ու կարմիր մազերով ծածկուած է. մազերն երկու տեսակ են, վրայի կողմինները՝ հաստ, իսկ վարի կողմինները՝ բամբակի պէս կակուղ: Ազդելու ատեն՝ գլուխն ու պոչը վեր կամ մարմնոյն հետ հորիզոնական կը բռնէ: Խիստ զուարթ ու քաջասիրտ է, բայց իրեն հետ շատ ընտանութիւն ընել չ'ըլլար. որչափ որ աղէկ ալ նայուի, իր բնական գաղանութիւնն ընտանի վիճակին մէջն ալ երբեմն ուրիշ ընտանի անասնոց վրայ կը ցուցնէ, կանուրոսներուն ու վայրենի անասնոց գնդերը հալածելու վարժած ըլլալով՝ անոնց վրայ կը յարձակի ու կը սպաննէ:

Իննանդ կը պատմէ որ Անգղիա բերուած աստեսակ շներէն մէկը խիստ շատակեր ու վայրենի էր. անգամ մ'իշու մը վրայ յարձակելով՝ քիչ մնաց կը պատուէր, թէ որ մարդիկ վրայ հասնելով չազատէին, խեղճ էջն աս անսովոր հեծեալը վրայէն վար ձգելու համար՝ ասդին անդին կը վազէր ու կը գլորտրկէր, որ շուներ ճզմելով՝ ազատի, բայց պարսպ տեղ: — Պէվլըք իր 2օրքոտանեաց բնապատմութեան մէջ կը պատմէ որ 1784ին Նորթմալլըր-լէնդի ծովեզերքը, աս Նոր Հոլանտայի շուներ, գաղ-

տուկ վաճառականութիւն ընող նաւէ մը մոռցուած ըլլալով, անօթութենէն ստիպուած՝ ոչխարաց վրայ կը յարձակէր, եւ հասարակօրէն անոնց փորը պատուելով՝ երիկամանց ճարպը կ'ուտէր, մնացածը կը թողուր: Տեղւոյն գեղացիքն ասոր յափշտակութիւններէն ազատելու համար՝ զանազան միջոցներու ձեռք զարկին. վայրենի գաղանի մը պէս շներով զինքը կը հալածէին. բայց երբ որ շներն իրենց յանցաւոր ընկերին քով կը մօտենային, անիկա քծնելով ու աղաչելով դիմացնին կ'ելէր, ասանկով հալածողներն իրեն բան մը չէին ըներ: Անգամ մը տասուերկու անգղիական մղոն հալածուեցաւ. բայց նոյն գիշեր ետ դառնալով, դեռ արեգակը չծագած՝ քանի մը ոչխար մեռցուց: Աերջապէս երեք ամիս տեղացիներն անհանգիստ ընելէն ետեւ, երբ որ հեղ մը բարձր տեղ ժայռի մը վրայ նստած՝ անցող գացողները կը դիտէր, հրացանով սպանուեցաւ: Հասարակօրէն աքսորելոյ մը պէս ան ժայռին վրայ կու գար կը նստէր, ուսկից չորս ճամբայ ունէր՝ հալածողներուն ձեռքէն փախչելու:

Այսպիսի եւ ասոր նման դէպքեր ուրիշ ընտանի շանց վրայ ալ կը պատմուի, որոնցմէ կը տեսնուի որ աս բնածին գաղանական հակումնին մէյ մը որ գրգռուելու ըլլայ, ալ չեն թողուր, ինչպէս նաեւ մէյ մը ստացած բարի յատկութիւնները չեն կորսընցըներ, եւ սերընդով իրենց յաջորդաց կը թողուն: Հաւորս շունը, ինչպէս է հիմայ բուն ճշմարիտ սպանիական շան տեսակը, աս բնական հակումն ունի որ թռչունը կը լրտեսէ, ետեւէն կ'իյնայ ու յանկարծակի վրան հասնելով՝ կը շփոթցընէ, վերջը քիչ մը ժամանակ հանդարտ կենալէն ետեւ՝ վրան կը յարձակի ու անվրէպ կը բռնէ, զորն որ՝ ինչպէս փորձը ցուցուցած է, ան բուպէական հանդարտ կենալովն ինք զինքը ժողվելով՝ կը յաջողցընէ: Իսկ

Անգղիայի մէջ աս տեսակին աղուեսաշան հետ
խառնուածը՝ թէպէտեւ արագութեան կողմանէ
սպանիականէն վեր է, բայց որսին առջեւ կենալն
ու ինք զինքը պատրաստելը չունի. սակայն աս ալ
արուեստով ու կրթութեամբ նորէն կը ստանայ ու
իր սերընդոց ալ կը հաղորդէ, ինչպէս շատ ան-
գամ կը տեսնուի որ ձագերը՝ ճնճղուկներու եւ
աղանիններու առջեւ յանկարծ կը կենան: Ա՛րեւելայ
որ այսպիսի արուեստական սովորութիւնները՝ շատ
սերընդոց մէջն ալ յաջորդաբար կը շարունակուին:
Աս բանիս ստուգութիւնը Պոֆորին պատահած մէկ
գէպքէն յայտնի կը տեսնուի: — Փոքր Ասիայի մէջ
Բագերայի քով՝ Պոֆոր շատ բազմաթիւ կարմրուան
կաքաւներու վտառներ տեսաւ: Յայտնի է որ Բագե-
րան յառաջագոյն շատ բազմամարդ էր, ու աս կողմի
կաքաւները հին դասական մատեաններու մէջն ալ
կը յիշուին: Կաքաւներուն՝ ինչպէս նաեւ ամէն հա-
ւու տեսակ թռչնոց երկչոտ ու կասկածոտ բարքը՝
անական չէ, այլ չորս կողմերնին մարդ ըլլալուն հա-
մար՝ ասանկ բնութիւն առած կը համարուին, ի վե-
րայ այսր ամենայնի Պոֆոր աս կաքաւներն արտաքոյ
կարգի երկչոտ գտաւ, թէպէտ եւ տեղն ամայի ու
անմարդ էր ու բանէ մը վախնալիք չունէին: Ար-
դեօք չննք կրնար կարծել որ աս երկչոտ բարքն
իրբեւ ժառանգական բնութիւն մը սերընդէ սե-
րունդ անցած ըլլայ, ան ատենէն սկսեալ՝ երբ որ
նոյն տեղը բազմամարդ էր, եւ կաքաւները մար-
դիկներէն շարունակ հալածուելով՝ երկիւղով տո-
գորուած ու բնութիւննին այլայլած էր:



Աս շան գլուխն երկընկէկ ու սպանդաշան գլխուն շատ նման է . շրթունքը քիչ մը երկայն ու սրածայր են , ականջները կէս մը փթածայր ու վեր տնկուած , ոտուրներն երկայն ու ջղոտ , մարմինն երկայն է ու երթալով կը բարակնայ . բոլոր մարմինը՝ բաց ի շրթունքէն՝ թանձր , երկայն ու հասարակօրէն սեւ մազերով ծածկուած են : Աս շունը շատ ճարպկութիւն , հաւատարմութիւն ու արթնութիւն ունի : Իր պաշտօնն ուրիշ շներէն շատ տարբեր է . ուր որ տան շունը շղթայով կապուած տեղը կը պահպանէ եւ կամ տէրն որսորդութիւն ըրած ատեն օգնական կ'ըլլայ , աս շունը բոլորովին տարբեր ծառայութիւններով շատ աւելի օգուտներ կ'ընէ : Բաց օգին մէջ հօտերն ու անդերը զարմանալի արթնութեամբ կը պաշտպանէ , գողերուն եւ մանաւանդ գայլերուն դէմ սաստիկ քաջասրտութեամբ կը պատերազմի : Գայլին հետ կռուելու եւ սպաննելու որ ըլլայ , դին մեծանձնութեամբ կը թողու , չ'ուտեր . բայց քովէն ալ չիհեռանար , որպէս զի յաղթութեան պարծանքն ուրիշներուն չտայ : Շատ անգամ զանազան տեղեր աս շներն այնպէս կը վարժեցընեն , որ մարդ ամենեւին հարկաւորութիւն չ'ունենար հօտը հոգալու . իրենք փարախէն դուրս կը հանեն , կ'արածեն ու յարմար տեղ կը տանին , ամէն յարձակմունքներու դէմ կը պաշտպանեն , եւ վերջէն զարմանալի կարգով հօտը նորէն փարախը կը դարձընեն : Հովիւը վզերնէն կտոր մը հաց կամ միս կը կապէ . եւ այնպէս վարժած են՝ որ մինչեւ սաստիկ անօթութենէ շնեղուին , վզերնէն վար չեն առներ չեն ուտեր . եւ աս քիչ մը կերակուրը բաւական կ'ըլլայ իրենց բոլոր օրուան համար :





Եւ շան կերպարանքը թէպէտ եւ վայրենի ու խոժոռ նկարագիր մ'ունի, ի վերայ այսր ամենայնի համբերող ու հաւատարիմ է, իր ծառայութիւնը յարատեւութեամբ կը կատարէ, քիչով կը շատանայ, իր հօտին պահպանութեան ունեցած բնական հակումն ուրիշ շներէն շատ աւելի է, նաև իր տիրոջն ու տան ամէն անձինքներուն վրայ մեծ սէր ու հսկողութիւն կը ցուցընէ: Հետեւեալ պատմութիւնը՝ որն որ հաւատարիմ աղբիւրէ առնուած է, իր սրամտութեան ու տիրասիրութեան ցոյց մը կրնայ ըլլալ: — Կրամբեան լեռանց նեղ խորանձորը հովիւներ կը բնակին, որոնց ամէն մէկը նոյն վայրենի ու անմատոյց տեղեաց մէջ որոշուած ընդարձակ սահման մ'ունի, ուր որ իր հօտն ազատ կը թողու որ արածի, միայն երբեմն երբեմն հարկաւոր եղած ատեն՝ շան օգնականութեամբ կը ժողվէ: Անգամ մը հովիւ մը իր հինգ տարւան տղուն ու հաւատարիմ շան հետ ցրուած ոչխարները փնտուելու եւ ժողվելու կ'ելլէ: (Հիւսիսաբնակ աղգերն իրենց տղաքը շատ կանուխ օդոյն անհարթութեանցը կը վարժեցընեն): Խել մը ճամբայ ընելէն ետքը՝ շան հետ բարձրկէկ սեպացեալ տեղ մը կ'ելլէ, որպէս զի ցրուած հօտին վրայ աւելի ընդարձակ տեսք մ'ունենայ: Բայց տղուն աս սեպացեալ զառ ի վեր ժայռերէն վեր ելլելը գժուար ըլլալով՝ հայրը զինքն ապահով տեղ մը կը թողու, ապսպրելով որ տեղէն չջարժի մինչեւ որ ինք ետ դառնայ: Հազիւ թէ լեռան գագաթը կը հասնի, յանկարծակի չորս կողմը տխուր ու մթին ամպերով պաշարուած կը տեսնէ, որոնք սաստիկ շուտութեամբ կրամբեան լեռանց վրայ կը տարածին եւ ամէն բան անթափանցիկ քողով մը կը ծածկեն: Հայրը տղան առնելու համար աճապարելով վար իջնալու կը սկսի, բայց արտաքոյ կարգի մշուշին, մթութեան ու շիթութեան պատ-

Ճառաւ՝ ճամբան կը կորսընցընէ ու կը մոլորի: Ան կողմերը յաճախ գտնուող վտանգալից ու ճախճախուտ տեղերէն եւ ջրերուն հոսանաց մէջէն անցնելով ու երկայն ատեն ասդին անդին թափառելով՝ գիշերը վրայ կը հասնի: Առանց կոխած տեղը գիտնալու՝ շարունակ քալելով, վերջապէս մշուշի սահմանէն դուրս կ'ելլէ ու լուսնոյն աղօտ լուսով կը տեսնէ որ իր ձորին բերանը, իր խրճճին մօտերը հասեր է: Մութ ատեն տղան փնտռելն անօգուտ ու գտնելն անկարելի համարելով՝ նոյն գիշեր իր տեղը կ'անցընէ եւ երկրորդ առտու կանուխ դրացեաց հետ որդին փնտռելու կ'երթայ: Ամբողջ օրը լերանց վրայ ելլելով իջնելով՝ կ'անցընեն, ամէն խորածորները, այրերը, ժայռերուն պատուածները կը զընեն. բայց պարապ տեղ: — Իսկ հովուին շունն իր սովորական հացն ընդունելէն ետքը՝ մէկէն աներեւոյթ կ'ըլլայ —: Երրորդ օրը անմխիթար հայրը տղան փնտռելու կ'ելլէ, նոյնպէս բարեսիրտ մերձակայ հովիւներն ալ իրենց հօտը թող տալով՝ կորսուած տղուն ետեւէն կ'իյնան, սակայն դարձեալ ամէն ջանք պարապ կ'ըլլայ: Խոնաւ դաշտագետիններուն վրայ նշան կամ ոտքի հետք մը չէր երեւար. եւ արագընթաց հոսանաց շառաչիւնէն, օդի վրայ սլացող արծիւներուն ձայնէն ու ցրուած հօտին բառաչելէն զատ՝ հօրը մտադիր ականջը ձայն կամ ազդակ մը չէր լսեր: Երբ որ իրիկուան յոգնած տուն դարձաւ, իրեն պատմեցին որ քիչ մը առաջ շունն եկած էր, բայց իր սովորական պատառն առնելէն ետքը՝ յանկարծ աներեւոյթ եղաւ: Հայրն աս բանիս վրայ շատ զարմացաւ, եւ երբոր շունը նորէն տուն դարձաւ եւ իր սովորական հացն առնելով՝ հեռանալու սկսաւ, հայրն ետեւէն գնաց: Աս հաւատարիմ շունը դէպ ի ահրելի հոսանք մը գնաց, որն որ տղուն թող տրուած տեղւոյն մօտ էր: Աս

տեղը խիստ ամայի ու անկոխ էր, երկու հսկայածեւ
 ժայռեր երկու կողմէն նոյն հոսանքը կը պատէին եւ
 այնպէս ահրեւի վիհ մը կը բանային, որ Կրամբեան
 լեռանց վրայ ճամբորդութիւն ընողներուն սիրտը
 սարսափով ու երկիւղով կը լեցընէ: Շունը նոյն
 վտանգաւոր ու սեպացեալ զառ ի վայր տեղէն վար
 իջաւ ու վազելով այր մը մտաւ, որուն բերանը ջրին
 հոսանքին հաւասար կ'իյնար: Հովիւն ալ շատ մեծ
 դժուարութեամբ սողալով՝ շան ետեւէն աս վտան-
 գալից տեղը կրցաւ երթալ. բայց ներս մտած ա-
 տեն՝ ինչ զարմանք ունեցաւ, ինչպէս ապշեցաւ
 մնաց՝ տեսնելով որ որդին ժայռի մը կռթընած՝ շան
 բերած հացը կ'ուտէր, իսկ շունը քովը կեցած՝ հա-
 ճութեամբ մը երեսը կը նայէր: — Տեղւոյն դիրքէն
 ու տղուն պատմածէն իմացուեցաւ որ ինք վհին բե-
 րանը հասած կամ ինկած կամ սողալով վար իջած
 ու մինչեւ այրը հասած էր, ուսկից որ հոսանքի մէջ
 չիյնալու համար տեղէն չէր շարժած: Բայց հաւա-
 տարիմ շունն իր սուր հոտառութեամբը տեղն իմա-
 ցած եւ ինք զինքն իր կերակրէն զրկելով՝ տղան սո-
 վատանջ մահուրնէ ազատած էր, եւ զինքն ամենե-
 ւին չէր թողուր՝ բայց միայն ան ատեն երբ որ հարկ
 կ'ըլլար հաց բերելու, որն որ շատ շուտութեամբ
 եւ առանց ժամանակ անցընելու կ'ընէր:

Մենուն ծանօթ է որ Եւրոպայի մեծ քաղաքաց
 մէջ՝ գլխաւոր ճամբաներուն վրայ ինչ աղմուկ ու
 շփոթութիւն կ'ըլլայ, երբ որ լեցուն բեռնաւորած
 կառաց շարք մը նոյն ճամբէն կ'անցնի ու անցնող
 գացողներուն անցքը կը խափանէ: Երբ որ հարկ
 ըլլայ ասանկ տեղէ մը ոչխարաց կամ խոզերու
 գունդ մ'անցընելու, աս հովուական շունն իր գոր-
 ծունէութիւնն ու ճարպկութիւնը մասնաւոր կեր-
 պով մը կը ցուցընէ. ասդին անդին վազելով՝ ամ-
 փոփ կը պահէ ցրուած հօտը, անհնազանդ ոչխա-

րաց ականջէն թեթեւ մը խածնելով՝ կարգի կը
խոթէ ու հօտը յառաջ կը քշէ: — Անգամ մը
Լոնտոնի բազմամբօխ մէկ ճամբուն վրայ երկու հօ-
վիւ իրենց ոչխարներն անցընելու կ'ըլլան: Մայթի
(*խալալալալա*) վրայ անցնող դարձող ամբօխին պատ-
ճառաւ չէին կրնար անցնիլ. բուն ճամբուն վրայ կա-
ռաց բազմութեան համար՝ եւս առաւել դժուարին
կ'ըլլար. ուրիշ ճար չկար, հարկ էր հօտը կեցընել:
Բայց հովուաց շները հովիւներէն աւելի խելացի
գտնուեցան. հաջելով ու զանազան սպառնալիքնե-
րով՝ սկսան ոչխարները դէպ ի գետին եզերքին եր-
կայնութեան քշել ու մէկ կարգի մէջ դնել եւ որ-
պէս զի ոչխարներն իրարմէ չբաժնուին կամ չխո-
տորին, մէկ շունը մէկ ծայրէն մէկալ շունը մէկալ
ծայրէն մինչեւ շարքին մէջտեղը կ'երթային կու-
գային, եւ վերջէն մէկը մէկալէն կը բաժնուէին:
Այսպէսով ոչխարները մէկ շարքի մէջ կարգաւ
յառաջ կը քշէին, եւ երբ որ ոչխար մը ինչ եւ ի-
ցէ պատահարով կարգէն կը խոտորէր, հաւատարիմ
պահապանն անմիջապէս հաջելով կամ թեթեւ մը
խածնելով՝ կարգի կը խոթէր, որպէս զի վխտացող
ամբօխին մէջ չկորսուի: Ասանկով անցան գացին
ամէն հանդիսատեսներուն զարմացմամբը, առանց
վնասի կամ վտանգի մը հանդիպելու, հովուին մէկը
ոչխարաց գլուխն անցած, մէկալը վերջապահութիւն
ընելով, իսկ պահպանութիւնն ու կառավարութիւնը
շանց յանձնելով:

Վարուան գեղեցիկ իրիկուն մը, երբ որ ժուռ
գալու ելած էի, կ'ըսէ անգղիացի հեղինակ մը, ա-
րօտին վրայ հովիւ մը տեսայ, որ իր շան հետ ոչ-
խարները կ'արածէր: Արեւը մտնելու վրայ էր. հօ-
վիւն իր սովորական շօ, հօ, ձայնովը հօտը ժողվել
կ'ուզէր. շունը մէկէն ոտք ելաւ ու դաշտավայրին
վրայ թփէ թուփ ցատքելով՝ ցրուած ոչխարները

սկսաւ ժողովել: Առաջնորդ խոյր հօտին գլուխն ան-
ցած՝ հովուին առջեւէն կ'անցնէր, որն որ անցած-
ները կը համրէր: Ամենքը հօս չեն, պողաց մեկէն
հովուը: Ասոր վրայ շունը քիթը դէպ ի գետին կա-
խած՝ չորս դին կը վազէր կը վազվառէր, մինչեւ
պակտող ոչխարը գտաւ, որն որ հօտին բառաչելովն
ընդունուեցաւ: Նոյն ոչխարը փոսի մը մէջ ինկած
կ'երեւար, որովհետեւ բուրդն աղտոտած էր, իսկ
շան աղբաներուն վրայ բրդի թելեր կային: Հովուը
փութաջան շունը գովեց, դանդաղ ոչխարին ալ
սրդողեցաւ, որն որ կարծես թէ յանցանքը ճանչնա-
լով՝ գլխակոր հօտին մէջ մտաւ կորսուեցաւ:

Սպանիայի հովու շներն աշխարհքիս ամենէն
գեղեցիկ շանց կարգը կրնան դրուիլ. ասոնք սպա-
նիական լերանց վրայ Մեքսիկոյ ըսուած ոչխարները կը
պահպանեն: Վզերնուն վրայ մեծ անուր մ'ունին՝
երկաթէ փշերով, որով գայլերուն յարձակմանէն
ապահով կ'ըլլան, վասն զի գայլը շան հետ կուե-
լու ատեն՝ կը նայի որ վզէն բռնէ ու խղդէ: Ասոնք
շատ քաղցր բնութիւն ունին, մոլորեալ ոչխարներն
առանց բռնութիւն բանեցընելու տեղերնին կը դար-
ձնեն:

Բարձր աստիճանի չորքոտանեաց զգայարանքնե-
րը, մարդուն ձեռքը գործէք մըն են, որով որ զի-
րենք ուզածին պէս իր դիւրութեանցը կը գործա-
ծէ, եւ աս զգայարանքները կենդանւոյն ընդունա-
կութեան համաձայն՝ կրթութեամբ աւելի եւս կը
վարժեցընէ: Շան ամենէն աւելի գործունեաց զգայ-
արանքները՝ հոտառութիւնն ու լսելիքն են, որոնք
կրթութեամբ ու սովորութեամբ զարմանալի սրու-
թեան կրնան հասնիլ: Շատ զարմանալի է բնութեան
ան տնտեսութիւնը կամ հաւասարութիւնը՝ որով
իր ձիրքերը հաւասարաչափ եւ ըստ համեմատու-
թեան ամենուն կը բաշխէ: Բարձր լերանց վրայ

բնակող վիժը՝ շատ բարձր աստիճանի աչաց սրու-
 թիւն ունի. ասոր հակառակ ընդեղջիւրը՝ որն որ
 ճախճախուտ տեղեր կը կենայ, շատ նուազ ու կարճ
 տեսութիւն ունի: Տկար կենդանիք, նապաստակն ու
 ճագարը, շատ աղէկ կը լսեն. յափշտակող անա-
 սունները սրատես են, բայց ականջին քիչ կեր-
 պաւորեալ է: Մէկ զգայարանքի առաւելութիւնը՝
 մէկային նուազութիւնը կը բարեխառնէ. շունը (որ-
 սականաց բարակները դուրս հանելով՝ որոնց հոտ-
 առութիւնը տկար, իսկ տեսութիւնը շատ զօրաւոր
 է,) այնչափ սուր տեսութիւն մը չունի, բայց հոտ-
 առութիւնն ու ականջները շատ սուր են: Նոյն
 զգայարանաց կատարելութիւնը՝ շան մը անհրաժեշտ
 հարկաւոր է, որպէս զի անոր աէրն իր ապրուստը
 հոգայ եւ ձեռք բերածը պահպանէ:

Առանց մասնաւորապէս հոտառութեան գործա-
 րանին կազմութեան վրայ խօսելու, կ'ուզենք համա-
 ոօտիւ մ'իմացընել որ ամէն չորքոտանեաց քիժն
 ուղղորդ բաժանմամբ երկու մաս կը բաժնուի, որոնց
 ներքին երեսը փափուկ կաշուով մը ծածկուած ու
 միշտ խոնաւ է: Նոյն կաշին անթիւ անհամար արեան
 երակներ ունի, միանգամայն անոր վրայ տարածուած
 են հոտառութեան նեարդները՝ որոնց սկիզբը կամ
 գլուխն ըղեղին հետ հաղորդութիւն ունի: Աս
 նեարդներու բազմութիւնը՝ համեմատութեամբ շատ
 աւելի է յափշտակող կենդանեաց քան թէ ուրիշ
 չորքոտանեաց վրայ, որով հոտ ունեցող մարմնոյն
 ամենափոքր մասունքները քիժին շնչելովը՝ նոյնին
 խոնաւ պատերուն վրայ կը բռնուին եւ նեարդնե-
 րուն միջնորդութեամբն ըղեղին ազդեցութիւն կ'ըլ-
 րայ: — Սէօմէրրինկ ու Պուսմէնպախ նշանաւոր
 բնագնիք կը հաստատեն որ Եւրոպացւոց եւ ուրիշ
 քաղաքականացեալ ազգաց քիժը՝ Ամերիկայի ու
 Ափրիկէի ներսի կողմերուն գրեթէ վայրենացած

բնակչաց քթին նայելով՝ տւելի պզտիկ է ու նուազ կերպաւորեալ: Ետքի բնագնինը կ'ըսէ որ եօթանասուն տարի առաջ Ֆիլատելֆիա գլխատած Հնդկի մը հոտառութեան ներքին գործարաններն արտաքոյ կարգի մեծ ու շատ աղէկ կերպաւորեալ էին: — Այսպէս շունն ալ իր հոտառութեան ներքին գործարաններուն կատարելութեամբն ու քիթը միշտ խոնաւ բռնելով, որով հոտոտելի ամենափոքր մասունքն ալ դիւրութեամբ խոնաւ պատերուն վրայ կը բռնուին, շատ աղէկ հոտ կ'առնէ: Քիչ մը յառաջ ըսինք որ աս զգայարանքները կրնան սրուիլ եւ կրթութեամբ ու վարժութեամբ զանազան գործածութեան գալ. ասիկա յայտնի փորձերով գիտենք: Ազուեսաշունն՝ ազուէս մը հալածած ատեն, երբ որ ըստ պատահման դիմացը շատ աղուէսներ գան եւ իր հալածածն ուրիշներուն մէջ խառնուի, զանիկա մէկաններէն կը զանազանէ: Հասարակ շունը բազմամարդ ծամբու մէջ՝ իր հեռաւոր տէրը կը գտնէ: Տան շներն ոտնաձայն մը լսելուն պէս՝ կը սկսին հաջել, բայց եկողն իրենց ծանօթ մէկն ըլլայ նէ, դեռ չտեսած՝ ուրախութենէ կը սկսին ցատքըռտել:

Ահասարակ կարծիք կար՝ որ արծիւներն եւ ուրիշ յափշտակող թռչունները շատ սուր հոտառութիւն ունենան, որով շատ հեռաւոր տեղեր դի ըլլալն իմանան. բայց Օտիւպան կը ցուցնէ որ աս թռչնոց հոտառութիւնը յափշտակող չորքոտանեաց հոտառութենէն շատ վար է, մանաւանդ թէ եւ ոչ դիուն ներկայ ըլլալը կրնան իմանալ: Հետեւեալ փորձերը կ'երեւայ թէ նոյն կարծիքը հաստատած են: Օտիւպան եղջերուի մորթ մ'առաւ ու խոտով լեցուց. մորթը բոլորովին չորնալէն ու պնդանալէն ետեւ՝ բաց դաշտի մը վրայ կռնրկի վրայ պառկեցուց: Քիչ մը ետքը անգղ մը թռաւ ու մէկէն եղ-

ջերուի մորթին վրայ յարձակեցաւ, եւ առանց նենգութիւնն իմանալու՝ եղջերուին դիւրաւ վիրաւորելու տեղերը սկսաւ կտուցով զարնել. բայց իր ջանքը պարապ տեսնելով՝ կաշին բրցընելու սկսաւ, եւ մասնաւոր մտադրութեամբ մը կաշւոյն մէջ յուսացած միսը գտնելու ետեւէ կ'ըլլար, զորն որ եւ ոչ մէկ զգայարանքը կրնար իրեն գուշակել: Բայց երբ որ տեսաւ թէ մէջը խոտէն զատ բան չկայ, մեծ տհաճութեամբ կարծած որսը թող տուաւ եւ օգը սլացաւ՝ ուրիշ որս մը գտնելու, որուն աւելի իր սուր աչուրները կ'առաջնորդէին՝ քան թէ քիթը: Ասոր վրայ առաջինին հակառակ ուրիշ փորձ մ'ալ բրաւ: Ստակած խոշոր խոզ մը քսան ոտք խորունկ փոսի մը մէջ դրաւ, վրան ալ քիչ մը եղէգով ու խոտով ծածկեց: Ասիկա Յուլիսի մէջ բրաւ, որ առանձն աչրեցած գօտուոյն տակ դի մը խիստ շուտ կը փտտի ու կը հօտի: Թէպէտ շատ անգղներ նոյն տեղւոյն զանազան կողմերէն անցան գացին, բայց եւ ոչ մէկը կըցաւ իմանալ կամ հօտ առնել: Ասոր հակառակ շներն իրենց հօտառութեամբը գտան ու միսը բոլորովին լափեցին: Զանազան ուրիշ փորձերով ալ իմացուեցաւ որ վանդակի մէջ փակուած արծիւներու ձագերը՝ տեսնելէն յառաջ՝ չէին կրնար իմանալ որ առջևենին կերակուր կայ, որչափ մօտ ալ ըլլար:



Է-ԹԻՆՅՈՅ ԼՆՆ:

Ասիկա հովուաց շան ու գայլաշան շատ կը նմանի, ականջները կարճ ու վեր տնկուած են, պոչը շատ մազոտ ու փնջի նման, զորն որ գեղեցիկ ձեւով մը վեր կը բռնէ: Մարմնոյն բարձրութիւնն՝ առհասարակ առեալ՝ մէկ ոտք ու տասը մատ է. իսկ երկայնութիւնը՝ պոչը մէկտեղ չառնելով՝ երկու ոտք ու

երեք մատ է : Մաղերուն գոյնն անորոշ է , երբեմն սեւ , երբեմն պիսակ , երբեմն մուժ կարմիր . մաղերը խիտ ու երկայն կ'ըլլան , ձմեռը մինչեւ չորս մատի չափ . բնութիւնն ասոնց ձմերուան համար դրօսի մաղերուն տակ թանձր ու փափուկ բրդէ զգեստ մ'ալ տուած է , զորն որ գարնան դարձեալ կը կորսընցընեն , անանկ որ տարւոյն ամէն եղանակները հանգըստութեամբ կ'անցընեն : Ասոնք չեն հաջեր , հապա գայլի պէս երկայն ու տխուր կերպով մը կ'ոռնան . շատ ընտանի ու հաւատարիմ են՝ քանի որ կուշտ կ'ըլլան . իրենց մէջ շատ կը կռոււրտին , ինչպէս առհասարակ ամէն շները :

Լաքիմացիք՝ ինչպէս յայտնի է՝ Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային կողմի ծովեզերքն ու անոր մերձակայ կղզիները կը բնակին : Ինչպէս որ Վարլանտացւոց՝ եղջերուն , նոյնպէս ասոնց ալ աս շունն անհրաժեշտ հարկաւոր է , ապրուստնին հոգալու եւ ապահովապէս ապրելու համար . իրենց որսորդութեան մէջ՝ եղջերու , փոկ ու արջ բռնելու կ'օգնեն , բեռերնին գրաստի պէս կը կրեն , զիրենք անկոխ ու անսպաս ձիւնադաշտերու վրայ բալխրով կը քաշեն : Ամառը շուն մը 15 քաշ բեռ կրնայ տանիլ : Իսկ ձմեռը՝ շատ շներ մէկտեղ՝ հինգ վեց հոգի նստած խոշորկեկ բալխիր մը քաշելով , ժամը մէկ ու կէս մղոն , եւ օրուան մէջ 14 անգղիական մղոն հանգստութեամբ կը տանին : — Բէրրի նաւապետն իր ճամբորդութեան գրքին մէջ աս շները բալխրի լծելու եւ քաշել տալու կերպն աղէկ կը ստորագրէ : Քաշելու համար եղջերուի կամ փոկի կաշիէ շինած կազմածքը շատ պարզ է . վզին ու փորին վրայ երկու անուրէ կապուած երկայն կաշին բալխրին հետ կը կապուի : Թէպէտ առհասարակ առանց կարգի կը լծեն , բայց միշտ փորձառու շուն մը ամենէն առաջ երկայն կաշուով կը կապեն , եւ

կառավարը զինքն ուղղածին սէս աջ կամ ձախ կ'ուղղէ : Աս ընտրութեան մէջ՝ ոչ հասակին եւ ոչ սեռին, այլ կրթութեան ու զգայնոց սրութեան կը նայուի, այնպէս որ ամենէն գէշ շունն ամենէն ետքը կը կապուի : Առաջնորդ շունը բախրէն 18—20 ոտք հեռու կը կապեն, իսկ ամենէն ետքինը՝ 8—10 ոտք հեռու, մէկալներն ալ հասարակօրէն զոյգ զոյգ ետեւէ ետեւ կը կապեն : Առաւարը բախրին առջեւի կողմը կը նստի՝ ոտուրները ձեան վրայ վար կախուած, ձեռքն ալ երկայն խարազան մը կը բռնէ. կառավարները պզտիկուց աս խարազանը գործածելու կը վարժին . խարազանին չուանը ձեան վրայ թող կու տան եւ հարկ եղած ատեն՝ դանդաղ շներուն աղէկ ծեծ կը քաշեն : Արդէն պարզ խարազանին ձայնէն կը վախնան աս շները, եւ առանց հարուած մ'ընդունելու՝ շուտ կը վազեն, իսկ թէ որ մէկը հարուած մ'ընդունելու ըլլայ, չէ թէ միայն չիքաշեր, այլ բոլոր կարգն ալ կը շփոթէ, իր լծակից շան վրայէն մէկալ կողմը կը ցատքէ՝ որ հարուածէն ազատի, որով ամենքը կը խռովին, կը կատողին եւ գէշ գէշ ոռնալու կը սկսին : Անոր համար խարազանին գործածութիւնն օգուտ մը չընենլէն զատ՝ փնաս ալ կու տայ . ուստի զիրենք կառավարելու, աջ կամ ձախ կողմն ուղղելու համար՝ որոշեալ բառեր կան, ինչպէս որ առհասարակ ամէն կառապանք կը գործածեն : Աղէկ վարժած շուն մը, մանաւանդ երբ որ իր անունը կրկնուելու ըլլայ, զարմանալի մտադրութեամբ ինք զինքն ըստ ձայնին կ'ուղղէ : Գլուխն ետեւ կը դարձընէ, ականջ կը դնէ, իբր թէ կառավարին հրամանն իմանալու համար : Արդէն կոխուած ու գործածուած ճամբու վրայ, կամ այնպիսի տեղ մը՝ ուր որ ինչ եւ իցէ բախրի կամ ոտքի հետք կը գտնուի, շները կառավարելը շատ գիւրին է . ասանկ տեղեր մութ գիշեր

ատեն կամ ձեան ու փոթորկի մէջ ալ ճամբան
 կորսընցընելու վտանգ չկայ, որովհետեւ առաջնորդ
 շունը ցռուկը գետինը դնելով՝ սուր հոտառու-
 թեամբը ճամբան կ'իմանայ: Իսկ երբ որ ձիւնա-
 դաշտն անկոխ ու ամայի է, ամենէն ճարտար շունն
 ալ շատ շրջաններ կ'ընէ: Անհարթ ճամբաներէ կամ
 սառուցի կոյտերու վրայէն անցնելու ատեն՝ բալխիրը
 դառնալու վտանգին առջեւն առնելու համար՝ կա-
 ռավարը՝ երբեմն երբեմն վար կ'իջնայ՝ կը շիտկէ
 կամ միշտ ոտուրներով կը գործէ: Աս աշխատու-
 թիւնը, ինչպէս նաեւ շները գրգռելու համար ան-
 դադար ազազակելը, երբեմն երբեմն խարազանը
 գործածելն ու անոր հետեւութիւնները, եւ միան-
 դամայն ժամը մէյ մը շները կարգի դնելն ու քաշե-
 լու կազմածքը յարգարելը՝ որն որ զանազան պատ-
 ճառներէ կը խառնաշփոթի, աս տեսակ ճամբոր-
 դութիւնը շատ աշխատալի կ'ընեն: Թէ որ կառա-
 վարը բալխիրը կեցընել կ'ուզէ, հասարակ մեր կա-
 ռապաններուն պէս ձայն մը կու տայ. բայց աս բանս
 շատ դժուարին է, մանաւանդ երբ որ բեռը թե-
 թեւ ու տուն դառնալու վրայ կ'ըլլայ, վասն զի
 շներն ամենեւին ձայն մտիկ չընելով՝ ընթացքին
 յառաջ կը տանին: Ան ատեն կառավարն իր ոտուր-
 ները խորունկ ձիւնը կը խոթէ եւ հարկաւ զիրենք
 կը կեցընէ, խարազանն ալ դլուխներնուն վրայէն
 կամացուկ մ'անցընելով՝ զիրենք կը նստեցընէ: Բայց
 պիտի նայի որ բալխրէն շատ չհեռանայ, ասպ թէ
 ոչ՝ շները մէկ ըլլալով՝ կ'ելլեն կը փախչին ու տուն
 կը դառնան:

() անը բեռը շուտով քաշել տալու համար Իս-
 քիմացի մը միշտ բալխրին առջեւէն կ'երթայ ու
 մուշտակէ ձեռնոցին մէկ ծայրը խաճած ու մէկալ
 ծայրը ձեռքով բռնած՝ դանակաւ կտրելու եւ ձեան
 վրայ նետելու ձեւ կ'ընէ: Շներն աս տեսածնուն

պէս՝ միս կը կարծեն եւ շուտով մը վրան վազել առնել կ'ուզեն. ասանկով շուտով յառաջ կ'երթան: Շները բռնելու եւ բախտի լծելու համար ալ նոյն եղանակը կը գործածեն: Ճամբորդութեան արագութիւնը չէ թէ միայն բեռան ծանրութենէ կամ թեթեւութենէն, այլ նաեւ ճամբուն հարթ կամ խորտուբուրդ ըլլալէն կախուած է. թէ որ ձիւնադաշտը կարծր ու հարթ է, վեց եօթը շունութը մինչեւ տասը կենդինար ծանրութեամբ բեռ կրնան ժամու մը մէջ մէկ ու կէս անգղիական մղոն տեղ քաշել, եւ ասանկով օրուան մէջ 12 մղոն ճամբայ ընել: Նոյնչափ աղէկ սնուցուած շները հինգ վեց կենդինար բեռով այնչափ արագ կը վազեն, որ բախտիը կառավարելը՝ գրեթէ անկարելի կ'ըլլայ. հարթ տեղոյն վրայ ուզած տեղերնին կ'արշաւեն՝ մէկ ժամու մէջ երկու անգղիական մղոն ճամբայ ընելով: Իսկ թէ որ ասկից աւելի շուն մէկտեղ լծուելու ըլլան, արագութիւն պատճառելու տեղ՝ շիոթութիւն կը պատճառեն, մէկզմէկ կը խածնեն եւ ոռնալու ձայնն անպակաս կը լայ:

Թէ մարդկային ազգին որչափ մեծ ծառայութիւն կ'ընեն շները՝ Էսքիմացւոց շները մեզի ասոր ակներեւ օրինակը կու տան: Պաֆֆին ծոցին եւ ուրիշ աւելի ցրտաշունչ կողմանց բնակիչները, որոնց վրայ՝ դեռ քիչ ատեն է որ Եւրոպացւոց նաւերուն ան կողմերը մտնելովը՝ ծանօթութիւն ստացուած է, առանց ասոնց՝ անտարակոյս չէին կրնար ան քաղաքական վիճակին հասնիլ, որուն մէջ հիմայ կը գտնուին: Իրենց երկիրն ամենէն հասարակ կենդանական պիտոյքներէն ու հաճոյքներէն զուրկ է: Իրենց կարծատեւ ամարուան ժամանակը՝ եղջերուի որսորդութեան կը պատաղին, ուսկից իրենց ապրուստն ու հագուստը կը հոգան: Երկայն ձմերուան ատեն՝ երբ որ քաղցը կը ստիպէ, իրենց խա-

դադ ձիւնախիւղէն կ'երլեն կերակուր փնտռելու, որն որ դարձեալ կամ եղջերու եւ ձեան ու սառուցի խոտոջներու մէջ գտնուած փոկ եւ կամ սառուցեալ ծովուն եղերքը թափառող արջն է: Առանց շան սուր հոտառութեան եւ անոր քաջասրտութեան՝ ոչ երբեք մանաւանդ ձմեռ ատեն ըստ բաւականին կրնային իրենց վախճանին հասնիլ եւ ոչ ալ կարող կ'ըլլային ձեան վրայ արագութեամբ յառաջ երթալ, որն որ իրենց որսորդութեան անհրաժեշտ հարկաւոր է: Ըները չափաւոր հեռուորութենէ մը եղջերուաց հոտն առնելու որ ըլլան, անմիջապէս կատաղութեամբ գէպ ի նոյն կողմը կը վազեն եւ եղջերուին կը հասնին. որով որսորդն իր սլաքն անվրէպ որսին կը զարնէ: Ըներն իրենց զարմանալի հոտառութեամբը շատ հեռու տեղէն՝ սառոյցներուն մէջ փոկին որջը կ'իմանան: Արջերու հետ կուուելու բաղձանքնին այնչափ մեծ է, որ միայն տեղւոյն լեզուաւն արջ նշանակող բառը՝ բալխիր քաշելու ատեննին բաւական է զիրենք գրգռելու: Արսորդին առաջնորդութեամբը՝ երկու կամ երեք շուն առանց վախնալու՝ ճերմակ վիթխարի արջուն վրայ կը յարձակին: Նաեւ ամէն կենդանեաց վրայ ալ կը յարձակին, բաց ի գայլէն՝ որմէ բնական վախ մ'ունին, եւ տեսնելուն պէս՝ տխուր ու երկարատեւ ոռնալ մը կը փրցընեն: Ստուգիւ չկայ կենդանի մը՝ որ այնչափ շատ օգտակար հանգամանքներ մէկտեղ ունենայ, որչափ Էսքիմացւոց շանց վրայ կը տեսնենք:

Իսկ խեղճերն իրենց աշխատութեան ու ծառայութեանց փոխարէն՝ շատ անհոգութեամբ կը նայուին. միշտ աշխատալի ու աղետալի կեանք մը կ'անցընեն: Տէրերնուն հետ շարունակ կուուոյ մէջ են կերակրոյ համար: Ամառը բաւական կերակուր կը գտնեն. բայց ձմեռը կերակուրնին շատ ոչոու-

Թեամբ կը տլուի, տէրերին ուտելու քիչ բան ունենալով՝ իրենք ալ վտիտ, տկար ու ողորմելի կ'ըլլան, մանաւանդ ան ատեն՝ երբ որ չափազանց ուղժնդակ ծառայութիւն կը պահանջուի իրենցմէ: Անոր համար զարմանալու բան չէ որ բայխիր քաշելու ատեն՝ ոչ ազազակով եւ ոչ ծեծով կը խոտորին ան ճամբէն՝ ուր որ իրենց հոտառութեամբն իմացած են որ ուտելու բան մը կայ, եւ կամ խիւղերու մէջ կը մտնեն ու ամէն բան տակն ու վրայ կ'ընեն, որ ուտելու բան մը գտնեն, բայց ամէն անգամ ալ ջանքերնին պարապ կ'ելլէ, վասն զի տէրերը մեծ փութով կը նային իրենց ունեցած քիչ բանն ապահով տեղ մը դնելու:

(Ներուն ձմեռը զգացած անօթութիւնը՝ պաղօդին պատճառաւ աւելի եւս կը սաստկանայ: Պաղօդաբաժնի մէջ, նոյնպէս բարեխառն օդաբաժնի մէջ ձմեռ ատեն, շատ աւելի կերակրոյ հարկաւորութիւն կայ, քան թէ ամառը եւ ջերմ գօտիներու տակ: Ուստի աս շներն իրենց քաղցն անցընելու կամ իրենք զիրենք խաբելու համար՝ բնութենէն աս միջոցը սորված են՝ որ ինչ եւ իցէ բանով մը ստամոքսնին կը լեցընեն ու կը լայնցընեն: Բեւեռակողման գայլերն ու եղջերուները՝ ձմեռը անօթութենէն ստիպուելով՝ կաւ կ'ուտեն: Քամչադքացիք քաղցէն պատճառած նեղութիւնը չափաւորելու համար՝ երբեմն երբեմն ստամոքսնին սղոցուկ կը լեցընեն: Հումպոլթ կը պատմէ որ Օդդոմաքացիք Ամերիկայի գետերուն ժամանակաւոր յորդութեան ատեն, երբ որ իրենց սովորական ձկնորսութիւնը գետերուն խորութեան պատճառաւ կ'ընդհատի, շատ ամիս քաղցերնին անով կ'անցընեն որ տեսակ մը բարակ, թեթեւ ու պարարտ, քիչ մ'եփուած կաւ կը կլլեն: Աս անօթութեան տանջողական զգածումը գլխաւորաբար անկից կը պատճառի՝ որ ստամոքսը

շատ կը ժողովուրի ու կը քաշուի, որն որ պաղ ըմպելիքով մը աւելի եւս կը սաստկանայ: Բերրի նաւապետը կ'ըսէ որ Խսքիմացւոց շներն երբեք ջուր չեն խմեր, բայց եթէ ջուրն եղոտ եղած ատեն: Շները դիտեն որ անօթութիւնը՝ ջրով աւելի եւս կը սաստկանայ, անոր համար ջրի տեղ՝ մաքուր ձիւն կը կըլնեն, որն որ համեմատութեամբ ստամոքսը քիչ կ'ամփոփէ: Բայց ընդհանրապէս առեալ՝ շներն ուրիշ չորքոտանիներէն աւելի շատ անօթութեան կրնան տանիլ, թէ որ իրենց ստամոքսին մէջ լայնցընող բաւական հաստատուն նիւթ մը պաշար ունենան: Ասոր յայտնի փորձը կը տեսնենք Վաղղիայի ճեմարանին յիշատակարանին մէջ աւանդուած դէպքէն, զորն որ մենք ալ վերը պատմեցինք, թէ ինչպէս մոռացմամբ տան մը մէջ մնացած շունը քառասուն օր առանց կերակրոյ ապրած է՝ միայն անկողնոյն բուրդն ուտելով, որն որ՝ ինչպէս յայտնի է՝ կամ ամենեւին կամ շատ դժուարաւ ու զօրաւոր մարսեցուցիչ թթուներով կը մարսի:

Արբը զրուցած էինք որ Խսքիմացւոց շներն ամենեւին չեն հաջեր: Ասիկայ քանի մը տեսակներուն առանձին յատկութիւնն է, որն որ մեր օդաբաժնին մէջ դուն ուրեք կը տեսնուի, եւ անտարակոյս աւել խիստ պաղ կամ խիստ տաք օդաբաժնին աղբեցութենէն է: Սոննինի կ'ըսէ որ վերին Եգիպտոսի ժողովուրդը տեսակ մը շուն ունի, որն որ մեր Հովուաց շան շատ կը նմանի. եւ ասոր ձայնն այնչափ տկար է՝ որ հաջերը հազիւ կը լսուի: Կոլոմբոս՝ Ամերիկայի առաջին գտիչը, միտ դրաւ որ իր Արեւմտեան Հնդկաստան բերած շանց ձայնը կամաց կամաց նուազելու սկսաւ: Եւրոպա բերուած Մաքենձիէ գետին (Հիւսիսային Ամերիկայի մէջ) շները հաջելու յատկութիւննին նորէն կը ստանան: Ասկից յայտնի կը տեսնուի որ երկու դէպքին մէջն ալ

այրեցած կամ պաղ գօտւոյն աղղեցութենէն կամ ընտանի վիճակին պակասութենէն է հաջելուն դադրելը:



Մ-ի նշէ քիտին լնէրը: Լ-ի նշէ քիտին լնէրը: Ե-ի նշէ քիտին լնէրը:

Ամերիկայի հիւսիսային կողմերը կը գտնուին քանի մը տեսակ շներ՝ որոնք ձեւով Էսքիմօցւոց շներէն կը տարբերին: Ասոնք բարակ ու շատ արագաշարժ են, իրենց քթին ձեւովն ու սրածայր ականջներովը՝ ան կողմի բեւեռային աղուեսին շատ կը նմանին, անոր համար ալ աղուեսէ ու շնէ յառաջ եկած կը համարուին: Մաղերնին խիտ ու մետաքսանման է, եւ ձմեռն աւելի եւս կը խտանայ. պաղը կոխած ատեն՝ գոյներնին ալ հասարակօրէն ձերմակի կը փոխուի: Մաքենձիէ գետին շնդիկներն աս տեսակ շները կ'ընտանեցընեն ու տեսակ մը եղջերու որսալու կը գործածեն, որովհետեւ նոյն շներն իրենց թեթեւութեան ու դիւրաշարժութեան, ինչպէս նաեւ թաթերնուն լայն ըլլալուն համար՝ ձեան վրայ վազելու շատ յարմար են ու մէջը շատ խորունկ չեն մտներ:

Աբլանտացւոց շունը՝ որն որ արագընթաց եղջերուաց հօտը՝ գայլերուն ու արջերուն գէմ կը պահպանէ, Մաքենձիէ գետին շան տեսակէն տարբեր է, բայց մարմնոյն բարակութեան կողմանէ անոր շատ կը նմանի:

Նոր Ֆուլտօնտի շունը միջակ մեծութեամբ է, երկայն մետաքսանման մազեր ունի, պոչը շատ մազոտ է ու փնջի նման վեր կը բռնէ. ականջները կախուած, պրկունքը լեցուն, գլուխը լայն է: Ասիկա շատ խելացի ու օգտակար շուն մըն է: Նոր Ֆուլտօնտացիք նոյնը կը գործածէին կառք ու բալխիր քաշելու:

Ասկից դար մը յառաջ Գանատայի մէջ վաճառա-
կանութիւնն ու ճամբորդութիւնն աս շներով կ'ըլ-
լար: Գայլէն չիվախնար, անոր համար ալ ան կող-
մերը հօտը պահպանելու համար մէկ հատիկ է: Շատ
աղէկ ու դիւրաւ կը լողայ, նաեւ ջրին տակ կը մտնէ
ու գտած բանը վեր կը հանէ: Անգամ մը Գէմը
գետին մէկ նաւավարին տղան նաւուն վրայ աս շան
հետ խաղալով՝ երկուքն ալ գետը կ'իյնան. շունը
լողալով կ'ազատի, բայց խեղճ տղան անմիջապէս
տակը կ'երթայ: Եզերքը կեցող մարդիկ տղուն ին-
կաճ տեղը քար կը նետեն, շունն՝ որ վարժած էր
ջրին տակէն բան հանելու, անմիջապէս նոյն տեղը
կը մտնէ ու շնչասպառ տղան դուրս կը հանէ, որն
որ շուտով օգնութիւն գտնելով՝ վերստին կը կեն-
դանանայ: Աս շան դիւրաւ լողալուն պատճառն ան
է՝ որ ոտքի ձիւրաններուն մէջտեղի լողալու թաղան-
թը, բազի ոտուրներուն պէս, կէս մը տարածուած
է, որով՝ ոտքը ջրին հարուած տալու ատեն՝ ձիւրան-
ներուն թաղանթը կը տարածուի, եւ ասով կրնայ
ջուրը մղել ու յառաջ երթալ, իսկ ոտքը վեր ա-
ռած ժամանակ՝ թաղանթը կը ժողվուի:

Ահա սարակ ամէն շները լողալ գիտեն, թէպէտ
ոմանք շատ, ոմանք քիչ ընդդիմութիւն ունին ջրին,
եւ շատ դժուարութեամբ իրենց տերանց հրամանին
կը հնազանդին: Ա' երեւայ որ գամիռ շունն ամենէն
քիչ յարմարութիւն ու վարժութիւն ունենայ ջրին
հետ կռուելու. բայց երբեմն փորձն ասոր հակա-
ռակը կը ցուցնէ: Հեղ մը ժայռի զարնուած նաւու
մը մէջ երեք շուն կար, երկուքը՝ Նոր Քունտ-
լանտայի, մէկը՝ անդղիական գամիռ. աս վերջինը
հասակաւ պզտիկ էր, բայց կազմածքով՝ հաստա-
տուն ու զօրաւոր: Նաւն ազատելու համար շատ
հարկաւոր էր ցամաքին հետ շուանով մը կապել,
հողմակոծեալ ալիքները շուանը նաւակաւ տանելու

չէին թողուր. ուստի կարծելով որ Նոր Գունտլանտայի շուներ կրնայ յաջողցընել, շուանը նոյն շներէն մէկուն կապած՝ ծովը ձգեցին, բայց անիկա այլքնե-րուն չկրնալով դէմ դնել՝ ուժաթափ ինկաւ խրղ դուեցաւ. նոյն դժբախտութիւնն եկաւ մէկալ շամ գլուխն ալ: Իսկ Գամիոնը թէպէտ ջրին դէմ կուե-լու վարժած չէր, բայց յաջողութեամբ ցամաք հասաւ ու նաւը մարդիկներով մէկտեղ ազատեց:

Հիւսիսարնակ եւ մանաւանդ բեւեռին մօտ եզող կենդանեաց՝ տարւոյն ամէն եղանակաց համաձայն՝ իրենց զգեստն ու գոյնը փոխելը, բնութեան զարմանալի մէկ տնտեսութիւնն է: Մուշտակը կամ բուրդը կամ փետուրները՝ որոնցմով չորքոտանիներն ու թռչունները ծածկուած են, միշտ իրենց բնական երկիրներուն որպիսութեան ու բարեխառնութեան հետ ուղիղ համեմատութեան մէջ են: Աուսինէայի շները, Հնդկաստանի ոչխարները, Ափրիկէի ջայլամայնչափ թեթեւ ծածկուած են, որ կրնայ ըսուիլ թէ մերկ են. որովհետեւ իրենց ներքին բարեխառնութիւնն արտաքին բարեխառնութեան հետ կը համաձայնի, եւ անկէց աւելի թանձր զգեստի մը կարոտութիւն չեն ունենար: Ասոր հակառակ՝ Իսլանտայի ոչխարները, Էսքիմացւոց շները կրկին ծածկոյթ ունին, մէկը ներսէն բամբակի պէս, մէջ մ'ալ դրսէն մազէ, որով կարող կ'ըլլան առանց մեծ ներութեան՝ նաեւ սաստիկ պաղի դիմանալ: Չմեռը չհասած՝ ամէն կենդանեաց մազերը կը մեծնան ու խիտ խիտ կ'աճին, եւ որչափ աւելի որ պաղի մէջ կ'ըլլան, այնչափ ալ մազերուն աճումը կ'աւելնայ: Ախոռոյ մէջ կամ յարկի տակ բնակող ձիերուն ու արջառներուն մազերը՝ կարճ ու բարակ կ'ըլլան եւ շատ չեն խտանար. իսկ ամառ ձմեռ բաց օդի մէջ կեցող ձիերուն ու արջառներուն մազերն ասոր հակառակը կ'ըլլան: Հուտսոնի ծոցին վաճառակա-

նութեան գործակալները՝ որոնք Եւրոպա ամէն տարի հազարաւոր ծանրագին մուշտակներ կը խրկեն, Հնդկաց ձեռքէն միայն ձմերուան մէջ բռնուած կենդանեաց մուշտակները կը գնեն, որովհետեւ ամառը կամ ձմերուան սկիզբը բռնուածներուն մուշտակները վաճառականութեան յարմար չեն ու գէշ տեսակ են: Ասկից կ'երեւայ որ մազերուն աճումը՝ օդոյն բարեխառնութենէն կախում ունի: Այսպէս ալ մեր կողմի նապաստակներն ու ճագարները ձմերուան մօտ քիչ անգամ աղէկ մուշտակ կու տան:

Կարձեալ քանի մը բեւեռային եւ մեղի ծանօթ եղող մէկ քանի հիւսիսային կենդանեաց մազերուն գոյնին փոփոխութիւնը՝ անտարակոյս օդին բարեխառնութեան փոխուելէն յառաջ եկած բան մըն է, թէպէտ եւ ասիկա ամէն կենդանեաց վրայ առհասարակ չիտեսնուիր, ինչպէս որ իրենց զգեստին աւելնալն ու թեթեւնալը կը տեսնուի: Վկայութիւն մէջ լեռնաբնակ նապաստակին մորթին գոյնն ամառը՝ աղտոտ մոխրագոյն, իսկ ձմեռը՝ ձեան պէս ճերմակ կ'ըլլայ: Նոյնպէս Բրիտանական կղզեաց վրայ եղող աքսին գոյնն ամառը՝ կարմիր գորշ, իսկ ձմեռը՝ գեղեցիկ ձերմակ մուշտակ մը կու տայ, որն որ Անգղիայի ատենակալները, դատաւորներն եւ ուրիշ երեւելի պաշտօնատէրները կը հագնին: Տիֆլիզիի դքսին Չըսուիքի ամարանոցին մէջ գեղեցիկ բեւեռային աղուէս մը կար, որն որ Սեպտեմբերի մէջ աղտոտ կապուտակագոյն գոյն կ'ունենար, իսկ Յունուարի մէջ՝ ձերմակ: Աս եւ ուրիշ շատ կենդանեաց գունոյն փոխուելուն շուտութիւնը՝ միշտ պաղին սաստկութեան աստիճանէն կախուած է: Իսկ կատարեալ կամ անկատար փոփոխութեան օգուտը՝ դիւրաւ կրնանք իմանալ: Առնենք առջեւնիս յայտնի բնական երեւոյթ մը: Ամէն մարդ գիտէ որ սև գլխարկն ամառը շատ աւելի ջերմութիւն կը պատ-

Ճառէ՛ք քան թէ ճերմակը: Աոյնը կրնանք զըուցել կենդանեաց մորթին սեւ ու ճերմակ գունոյն վրայ: Երբ որ իրենց մարմնոյն բարեխառնութենէն սաստկագոյն բարեխառնութեան մը մէջ կը գտնուին, ան ատեն ջերմութիւնը սեւէն շատ աւելի կը թափանցէ քան թէ ճերմակէն, եւ ասանկով բնական ներքին տաքութիւննին կ'աւելնայ. ասոր հակառակ երբ որ իրենց մարմնէն նուազ բարեխառնութեան մը մէջ կը գտնուին, ան ատեն թխագոյն կենդանեաց ջերմութիւնը չորս կողմերնին գտնուող իրենցմէ պաղ նիւթերուն վրայ ցնդելով՝ սպիտակագոյն կենդանիներէն աւելի շուտով կը պաղին: Սպիտակագոյն մարմինները՝ որոնք ջերմութեան ճառագայթները ետ ցոյցարնելու յատկութիւն ունին, իրենցմէ դուրս խիստ քիչ ջերմութիւն կու տան, անոր համար ճերմակ գունով կենդանեաց բարեխառնութիւնը ձմեռը շատ կամաց կը նուազի: Ոմանք կը կարծեն որ աս գունոց փոփոխութեան օգուտն ան ըլլայ, որ կենդանիք ձմեռը ճերմակնալով՝ զիրենք հալածող թըշնամեաց ձեռքէն՝ ձեան ժամանակ աւելի դիւրաւ կ'ազատին:



Սիւրբ-Գրիգորի Լուսին:

Լսիկայ ազուեսէն քիչ մը մեծ է. ականջները սրածայր ու վեր տնկուած են, ցուկն երկայն, պոչը վեր ու դէպ ի առջեւ ծռած կը բռնէ: Մորթն ան կողմի խիստ ձմերուան պաղին դիմանալու համար՝ երկայն ու խիտ մաղերով ծածկուած է: Ըս կենդանին Սիպերիացիք զանազան գործքերու, մանաւանդ բալխիր քաշելու, ձկնորսութեան ու վայրենի գազանաց դէմ կուռելու կը գործածեն: Մեծ քաջասրտութեամբ սեւ ու ճերմակ արջերու դէմ կը պատերազմին: Իրենց կերակուրը շատ ողորմելի



է. բոլոր ձմեռը քիչ մը հոտած չոր ձուկ ու տեսակ մը ծառի կեղեւի փշրանք կ'ուտեն, բայց իրենք ասով ալ գոհ կ'ըլլան, եւ բաւական զօրաւոր ու չարքաշ են: Բալխրի մը լծուած չորս շունք՝ երեք մարդ ու 60—70 լիտր ծանրութեամբ բեռ առանց դժուարութեան կը քաշեն. իսկ եթէ ձմեռը ձիւնը սառած, օդն ալ չոր ըլլայ, ան ատեն նոյնչափ թուով շունք մէկ օրուան մէջ մարդ մը մինչեւ քսան ժամու ճամբայ կրնան քաշել:

Ս. Բանկին 1823ին Սիպերիայի ծովեզերքը քննելու համար ըրած վտանգալից ճամբորդութեան մէջ աս շներն արտաքոյ կարգի մեծ աջողակութիւն ցուցուցին: Աս շներուն օգնութեամբը Ս. Բանկը եւ իր ճանապարհորդակիցները հիւսիսային ծովուն սառոյցներուն վրայ ցամաքէն շատ հեռու 86 օր անցուցած էին: Սառուցին թանձրութենէն վտանգ մը չեղած ատեն՝ անհնարին արագութեամբ կը վազէին, կը հաջէին, մէկզմէկ կը խածնէին ու վայրենի ձիւնու պէս դժուարին կ'ըլլար զիրենք կառավարել. բայց սառուցին բարակութենէն վտանգ մը գուշակելուն պէս՝ շատ խաղաղիկ կ'երթային ու դիւրաւ կը կառավարուէին: Շատ բարակ սառուցի վրայ մեծ դժուարութիւն ցուցնելէն ետեւ՝ կը կոխէին, ան ալ շատ զգուշութեամբ: Ասոնցմէ տասուիրեք հատ մէկ բալխրի մը լծած էին. արջու կամ գայլու մը հանդիպած ատեննին, որն որ ան կողմերը յաճախ կը պատահի, ամէնքը կ'որ կը ժողվուէին, գունդ մը կ'ըլլային եւ իրենք զիրենք պաշտպանողական վիճակի մը մէջ կը դնէին, առանց արտաբուստ վախ մը ցուցնելու: Թէպէտ եւ անկոխ սառնադաշտերու վրայ անբաւ ճամբաներ ու հետքեր շինած էին, բայց ի դարձին ամենէն կարճ ու ապահով ճամբան բռնեցին առանց կառավարուելու:

Մ. Ելի զուարճալի ու զբօսեցուցիչ ճամբորդու-

Թիւն մ'ըրաւ Տոպէլ, որուն աս նիւթին վրայ գրած ներէն հետեւեալ կտորները կը քաղենք: Պետրոբուրգէն ելլելուն պէս՝ բազմաթիւ ընկերութիւն մը շներէ լծուած բախիրներու վրայ իրեն ընկերացաւ եւ մինչեւ Աւազա (Պետրոբուրգէն 12 մղոն հեռու) հետը գնաց: Շանց եռանգն ու անհամբերութիւնը, կառավարաց մէկզմէկ անցնելու ջանքին հետ միանալով՝ ձիարշաւի ձիերուն վառվռուենութեան ու կրակոտութեան հետ կրնար համեմատուիլ: Պետրոբուրգէն մինչեւ Աւազա ըրած ճամբորդութիւննին ստուգիւ անընդհատ արշաւախաղ մըն էր, որն որ որչափ նոր՝ այնչափ ալ զբօսեցուցիչ էր:

Ուրիշ անգամ մը Գիմալգիի լեռնուտ ու ամայի կողմերուն ծովեզերքը ճամբայ ընելու ատեննին՝ շանց զարմանալի բնաւորութեամբը բոլոր ընկերութիւնը կորսուելու վտանգէն ազատեցաւ: Գեղեցիկ ու պայծառ օր մը էր, բայց հովն ուժգին կը փչէր, ճերմակ ամպեր կապուտակ երկնից վրայ արագութեամբ կը սլանային: Աճապարենք, կանչեց առաջնորդը, անշուշտ փոթորիկ պիտի բրդի. հոս տուն տեղ չկայ՝ որ ապաստան գտնենք, թէ որ եղջերուներու կայանի մը չհանդիպինք, անտարակոյս կը սառինք: Շատ ժամանակ չանցաւ՝ խօսքն ելաւ. փոթորիկն այնպիսի սաստկութեամբ ձիւնը երեսնին կը զարնէր, որ կենալու հարկադրեցան: Ասոր վրայ ճամբանին ալ կորսընցուցին եւ ինչ ընելիքնին չէին գիտեր: Առաջնորդն՝ Ուրիշ ճար չկայ, ըսաւ. կենալը պարապ է ու անշուշտ մահ կը բերէ, բոլոր յոյսերնիս մեր շանց վրայ դնելու ենք. ես շատ ապահով եմ որ աս հաւատարիմ կենդանիներն իրենց սուր հոտառութեամբն եղջերուի հոտ առնելու որ ըլլան, անտարակոյս կ'ազատինք: Աս ըսաւ ու շներն ալ այնպիսի դիրքի մէջ խոթեց որ ուզած կողմերնին կարող ըլլան երթալ. ընկերներն ալ

յորդորեց որ իր բախարին ետեւէն գան: Ամէնքը զարմացան երբ որ տեսան թէ շներն անոնց դէպ ի ծովուն կողմը բռնած ճամբէն դարձան ու հակառակ ճամբայ բռնեցին, այնպէս որ հովը կռնակնին կը զարնէր: Ասով թէպէտ շատերը խոսվեցան, կարծելով որ ճամբէն կը խոտորին, բայց այրիչ ու երեսնին ճաթեցընող ձիւնէն ազատելուն համար կ'երթային: Այսպէսով գրեթէ երկու ժամի չափ գացին. փոթորիկն երթալով կը սաստկանար, ամպերն ու մառախուղը ծովին երեսը ծխոյ պէս կ'երեւային, եւ իրենք ալ պաղէն գրեթէ սառած էին: Մէյ մ'ալ յանկարծակի առաջնորդին շները սկսան հաջել եւ իրենց զօրութեան հասածին չափ՝ վազել: Ասիկա ելեկտրական կայծի մը պէս մէկալ շանց ալ հաղորդեցաւ եւ ամէնն ալ սկսան վերջին աստիճանի ճգամբ յառաջ երթալ: Ճամբորդները տեսնելով շանց աս արտաքոյ կարգի զգածմունքը՝ որն որ նշան մըն էր եղջերուներու կայանի մը մօտ ըլլալուն, հոգի առին, յուսալով որ աս զարհուրելի ու մահառիթ փոթորկէն ապաւէն մը գտնելու մօտ են: Քիչ մը ետքը վառուած կրակի մը քով հիւրասէր մարդիկներու հասան, որոնք շներուն հաջելու ձայնը լսելով՝ ճամբորդներուն գալստեան կը սպասէին, եւ եղջերուի ձագ մը մորթած՝ կը պատրաստէին:

Այնպէս Քամչաղքայի ու Սիպերիայի անապատներուն մէջ կրած դժուարութիւննին շատ մեծ էր, բայց ասոր մէջն ալ իրենց արագոտն դրաստներուն համբերութեան, հլութեան ու բնական խոհեմութեան վրայ զարմանալու շատ անգամ առիթ ունեցան: Երբ որ սոսկալի փոթորիկը ձիւնէ ամպը ծխոյ պէս չորս կողմերնին կը դարձընէր եւ ազատութեան յոյս ալ ամենեւին չէր մնացեր, ասոնք քաջութեամբ զիրենք յառաջ կը քաշէին, եւ երբ որ

սրընթաց ամպերուն մէջէն արեգական ճառագայթ մը կը ցոլանար, ուրախութենէն կը սկսէին ամէնքը մէկէն հաջել, զօրութիւննին կրկնապատկելով՝ ան-
յապաղ յառաջ կը վազէին, եւ իրենց սուր հոտ-
առութեամբն եղջերուններու մօտաւորութիւնը կը
գուշակէին, որն որ ան կողմերուն մարդաբնակու-
թեան մի միայն նշանն է:

Իսկ շատ անգամ ամենէն զօրաւոր շներն ալ
Սիպերիայի ահագին փոթորիկներուն չեն կրնար դի-
մանալ, աս Տոպէլ ճանապարհորդին շանց զօրու-
թիւնն ալ կամաց կամաց սկսաւ նուազիլ: Տոպէլ
շներուն չորցած ձուկ բաժնեց որ զօրանան. իսկ եղ-
ջերուի միսն ու պաքսիմատը քանի մը օրուան հա-
մար հազիւ կը բաւէր: Ասկից զատ՝ օգն ալ ջերմա-
նալու սկսած էր, եւ արեգական ճառագայթները
ձիւնն այնպէս կակղցուցած էին, որ ալ շները չէին
կրնար յառաջ երթալ: Ճամբորդները խեղճ յոգ-
նած անասնոց խնայելով՝ շատ տեղ ձեան վրայ քա-
լելու յարմար տեսակ մը հողաթափներով կը քա-
լէին: Բարեբախտութեամբ Իկակայէն շատ հեռու
չէին, ուր որ իրենցմէ մէկն առջեւնէն խրկեցին
տեղւոյն կառավարին աղաչելով որ իրենց օգնու-
թիւն մը խրկէ: Երբ որ խրիկուն եղաւ, շները նո-
րէն հոգի առին կենդանացան, ձիւնն ալ արեգական
մտնելէն ետքը կարծրանալով՝ ճամբորդները փոր-
ձեցին յառաջ երթալ. շները սկսան դարձեալ զար-
մանալի աշխուժութեամբ յառաջ քալել: Ժամն ին-
նին կառավարին խրկած օգնութիւնը հասաւ, շներուն
ան ատեն ունեցած ուրախութիւնը չիկրնար ստո-
րագրուիլ. երբ որ Իկակայէն եկող շանց մօտենալն
իմացան, ուրախութենէն վեր կը ցատքէին, բարձր
ձայնիւ կը հաջէին եւ այնպէս արագութեամբ իրենց
ընկերաց դիմացը կը վազէին, որ ընթացքնին քիչ
մը կամացըննելն անկարելի եղաւ: Երբ որ իրենց հա-

սան, ուրախութեամբ վրանին յարձակեցան եւ երկայն ատեն իրար լզվզեցին : Արժես թէ իմացած էին որ աս օտարականք իրենց ինչ օգնութիւն կրնան ընել եւ թէ ասով իրենց տաժանելի աշխատանաց վերջը կու գայ . եւ որչափ որ քաղքին կը մօտենային, այնչափ ալ զիրենք կառավարելը դժուարին կ'ըլլար . իրենց բոլոր զօրութեամբն ասդին անդին կը վազէին, եւ թէ որ քաղքին մարդիկը բախտիրներուն վրայ խնալով՝ զիրենք չկեցընէին, անտարակոյս բախտիրները կը կոտորտէին : Ինչ որ ընեմ՝ բաւական շնորհակալ չեմ կրնար ըլլալ աս շներուն, կ'ըսէ նոյն ճանապարհորդը, որ այնպէս քիչ ու ոչտութեամբ տրուած կերակրով, այնչափ անհամար վտանգաց մէջէն զմեզ ողջ առողջ աս ամայի ու մարդազուրկ անապատներէն ազատեցին :

Վասնոր բախտիր քաշելու հարկաւորութիւն չըլլալով՝ Սիպերիայի ու Քամչադքայի շներն ազատ թող կը տրուին, որ իրենց ապրուստն իրենք հոգան . նոյն ատեն հասարակօրէն ծովեզերքն ու գետերուն մօտ կը թափառին . մինչեւ կէս մէջք ջրին մէջ մտնելով՝ ձկի կը սպասեն, եւ ձուկ մը տեսնելուն պէս՝ վրան կը յարձակին ու անվրէպ կը բռնեն : Իսկ աշնան իրենց կամօքն իրենց տերանց քով կը դառնան, որոնք զիրենք շղթայի կը զարնեն ու խիստ քիչ կերակուր կու տան, որպէս զի ամարուան գիրութիւննին անցնի ու թեթեւնան որ ձմեռն աղէկ բախտիր քաշեն : Աս իրենց ազատ վիճակը թողուն ու նորէն իրենց տերանց քովը դառնալը կրնայ անկից ըլլալ որ ձմեռն ուտելու բան քիչ գտնելով՝ քաղցն իրենց առաջին գերութեան վիճակը քաղցր կ'երեւցընէ : Բայց աս ալ կայ որ սովորութիւնն ալ վրանին շատ մեծ ազդեցութիւն կ'ընէ, եւ երկուքն ալ թէ քաղցը թէ սովորութիւնը՝ կրնան հաւասարապէս ասոր պատճառ ըլլալ : Շատ տեղերու ազատ

կովերը հետաւոր արօտատեղիներէն գեղ կու գան՝
բաղձալով ծիծերնուն մէջ լեցուած կաթին բե-
ռէն ազատիլ, ասիկա կամ բնութենէ կը սորվին,
կամ ուրիշ կովերուն օրինակէն՝ որոնք աս եղանա-
կաւ իրենց ծանրութենէն թեթեւութիւն գտած
են: Ստորին ու վերին աստիճանի անասունք եղանա-
կաց փոփոխութիւնն աղէկ կը ճանչնան, որն որ՝ ինչ-
պէս յայտնի է՝ արեգական իրենց վրայ ըրած աղ-
դեցութենէն կ'իմանան: Այսպէսով կրնայ ըլլալ
որ Քամչաղքայի շներն աշնան տուն դառնալու
ժամանակնին՝ բարեխառնութեան փոփոխութենէն
կամ արեգական աղդեցութենէն որոշեն:

Սուր ըմբռնում ունեցող կենդանիք, ինչպէս են
շունը, ձին, . . . քաղաքականացեալ երկիրներն ա-
ւելի եւս աս իրենց կարողութիւնը կը ցուցնեն:
Սաւթի բնազնինը կը զրուցէ որ երկու շունք ժա-
մանակներն այնպէս աղէկ կը ճանչնային՝ որ շար-
թուն օրերը կրնային որոշել: Իրլանտացւոյ մը շունը՝
զորն որ Անգղիացի մը գնած էր, ուրբաթ օրը բե-
րանը միս չէր գներ, որովհետեւ Իրլանտացւոյն քով
նոյն օրը տիրոջը հետ պահք բռնելու վարժած էր:
Ան քաղաքաց մէջ՝ ուր որ տարւոյն որոշեալ օրերը
տօնավաճառ կ'ըլլայ, թափառական ազատ շները
նոյն որոշեալ օրերը մարդիկներէն յառաջ ան տեղը
կը ժողվուին, յուսալով որ ուտելու առատ բան կը
գտնեն: — Հարգսէնքէր բնապատումը կը պատմէ
որ մօրդուն մէկը սովորութիւն ունէր ամէն կիրակի
շունը հետն առած՝ Շարանթոն՝ Փարիզի մօտ տեղ
մ'երթալու: Հոն պատարագ տեսնելէն ետքը՝ մնա-
ցած ժամանակը բարեկամի մը քով կ'անցընէր:
Բայց շունն ամէն անգամ հետն առնելը դժուար
ըլլալով՝ կիրակի առտու մը շունը սենեկի մը մէջ
գոցել տուաւ: Խեղճ շիկն աս իր բանտարկութենէն
նեղանալով՝ երբ որ տեսաւ թէ երկրորդ կիրակին

ալ նոյնպէս գոցեցին, հետեւեալ շաբաթ իրիկուն մէկէն աներեւոյթ եղաւ, եւ կիրակի առտու Շարան-թոնի եկեղեցւոյն մօտերը տիրոջը սպասելով՝ հետը բարեկամին տունը գնաց: Միտք ունեցող մը ասկից աւելի բան կրնա՞ր մի ընել:

Վաղղիայի Ֆլէշ քաղաքը Յիսուսեանց դասա-տան մը մէջ սովորութիւն կար՝ որ շները խորուածին շամփուրը կարգաւ կը դարձնէին. ասոնք իրենց կարգն ու ժամանակը շատ աղէկ գիտէին: Անգամ մը խոհակերը խորուածին շամփուրը պատրաստելէն ետքը, խոհանոցը չգտնելով ան շունը՝ որուն դարձնելու կարգն եկած էր, ուրիշ մը բռնել կ'ուզէ, որն որ խոհանոցին պատուհանին տակ փորն աւրելուն տուած՝ հանգիստ կը քնանար: Բայց շունը կատաղութեամբ դէմ կը դնէ, խոհակերին սրունքը կը խածնէ ու կը փախչի. խոհակերը՝ որ զինքը շատ կը սիրէր եւ իրեն աղէկ կը նայէր, շատ կը զարմանայ շան աս կատաղութեան վրայ: Աէրբը խորունկ ըլլալով ու շատ արիւն դալով՝ սրունքը լաթով մը կապել հարկ կ'ըլլայ: Ինք ասոր պատաղած ժամանակ՝ խածնող շունը պարտէզ կ'երթայ ու կարգն եկող շունը խածնելով՝ խոհանոց կը քշէ, որն որ առանց դիմադարձութեան՝ սիրով իր պաշտօնը կը կատարէ:

Նոյնպիսի ըմբռնման կարողութիւն՝ ուրիշ կենդանեաց եւ մասնաւորապէս ձիու վրայ ալ կը տեսնուի, բայց նուազ աստիճանաւ: Չի մը տեսած եմ, կ'ըսէ հեղինակ մը, որուն վրայ տէրը գաւառական լրագիրը բռնաւորելով՝ տնէ տուն կը բաժնէր. ձին ամէն անգամ լրագիր առնողներուն տան առջեւ կենալու վարժած էր, իսկ առնողներն՝ 70էն աւելի էին: Ասոնց մէջ կային նաեւ երկու հոգի՝ որոնք երկուքը մէկտեղ մէկ օրինակ կ'առնուին փոփոխակի, մէկ կիրակի՝ մէկը, երկրորդ կիրակի՝ մէկալը:

Չին աս կարգին այնպէս վարժած էր, որ տասնու-
հինգ օր մէյ մը՝ առնելու կարգն եկողին տան առ-
ջեւը կը կենար, թէպէտեւ առնողներն իրարմէ կէս
մղոն հեռու կը բնակէին :



Գ-Գ- Լ-Լ :

Վամիռ շունը մարմնոյն մեծութեամբը, զարհու-
րելի բայց վեհ տեսքովը, գեղեցկութեամբն ու զօ-
րութեամբը մէկալ շներէն կը զանազանուի : Յոու-
կը շատ կարճ ու կտրուածի պէս է, շրթունքը՝ լե-
ցուն ու վար կախուած, գլուխն ու վիզը՝ կարճ,
հաստ ոտուրները մսուտ ու ջղոտ են. պոչը քիչ մը
վեր կը բռնէ, բերանը միշտ լորձուկով է : Աս դա-
սին տակ գացող շները քիչ խելք ու աջողակու-
թիւն կը ցուցնեն, բայց շատ ընտանութիւն ու
հաւատարմութիւն ունին. ազատ եղած ժամանակ-
նին՝ բարեսիրտ ու ընտանի են, բայց շղթայով կա-
պուելու որ ըլլան՝ զարհուրելի ու անմատչելի կ'ըլ-
լան, միշտ բաղձանք մը կը ցուցնեն մարդուն վրայ
յարձակելու եւ պատռելու : Զօրաւոր սրունք ու
ջղեր ունենալնուն համար՝ կենդանուց մը վրայ յար-
ձակելու որ ըլլան, ողջ ոչ երբեք կը թողուն. անոր
համար Անգղիացիք իրենց գամիոներուն վրայ կը
պարծին ու կը հաստատեն որ աւելի սիրով իրենք
զիրենք ողջ ողջ գիշատել կու տան, քան թէ մէյ
մը բռնած անասուննին կը թողուն : Յլու, առիւծու,
արջու եւ ուրիշ վայրենի անասնոց հետ կուուելու ան-
յագ բաղձանք մ'ունին. կատաղութեամբ մը անոնց
վրայ կը յարձակին ու շատ անգամ՝ յաղթող կ'ելլեն :
Բայց այսպիսի վայրենական խաղերը շատոնցուրնէ
վերջացած են քաղաքականացեալ տէրութեանց մէ-
ջէն. անոր համար ալ աս տեսակ շները սնուցանելու

հոգ շտաբուելով՝ իրենք ալ երթալով կը պակսին ու կը քիչնան :

Վերմանիայի մէջ մնալաճառները զասոնք կառք քաշելու կը գործածեն . առաջին անգամ տեսնողը կ'ապշի կը մնայ , թէ ինչպէս ասոնցմէ երկու հատը՝ մորթուած հորթերով լեցուած կառք մը զարմանալի շուտութեամբ կը քաշեն : Իսկ քանի մը տարիէ վեր Լոնտոն աս շները գրաստի տեղ գործածելու սովորութիւնը շատ ընդհանուր եղած է . եւ Էպրիմացւոց շանց պէս բազմութեամբ մէկտեղ լծելու հարկաւորութիւն չկայ , վասն զի երկու գամփու Էպրիմացւոց շներուն բազմութեան տեղը կը լեցընեն : Լոնտոնի հացագործք անիւներու վրայ հաստատուած շարժական տնակնին երկու զօրաւոր գամփուներու լծած՝ փողոցէ փողոց հաց կը տանին : Նոյնպէս մնալաճառներն իրենց վաճառքն աս շներով լծած կառքով հեռաւոր տեղեր կը տանին : Ասոնց տեսարանը շատ զուարճալի է . մէկը Լոնտոնի նեղ ու երկայն փողոցաց մէջ մտնելու որ ըլլայ՝ շատ կը զարմանայ երբ որ տեսնէ թէ մնալաճառին սովորական ձայնը լսուելուն պէս , փողոցին կատուները տներուն դռներէն գլուխնին երկընցուցած՝ մեծ անձկութեամբ պատառի մը կը սպասեն , շատ անգամ ալ՝ առանց իրենց համարեալ թշնամիներէն վախ մը ցուցընելու՝ սայլին քով կը մօտենան , իսկ սայլին շներն ամենեւին աս անհամբեր հիւրերուն խմբերը չեն հալածեր :

Աս շանց վրայ թէ որ զարմանալու բան մը կայ նէ՛ անտարակոյս իրենց զօրութեան հետ մարդուն ունեցած հաւատարմութիւննին եւ ըրած ծառայութիւննին է , որոնցմով մարդս սկզբանէ մինչեւ հիմակ անմատչելի երկիրներու տէր կ'ըլլայ : Եւրոպայի անտառներուն մէջ ատեն մը գայլ , արջ ու կինճ լեցուն էր . իսկ հիմայ շատ տեղեր՝ կամ բոլորովին

բնաջինջ եղած են, կամ խիստ քիչ կը գտնուին: Աս վայրենի անասնոց ջնջումն՝ առանց որոյ քաղաքականութիւնը շատ կամօց կը յառաջանայ, անտարակոյս առանց շան օգնութեան չէր կրնար ըլլալ: Անոր համար աղէկ կ'ըսէ Գիւլիէ մեծ բնազնիւնը, որ «Մարդուս շան վրայ ունեցած ազդեցութիւնն ու իշխանութիւնը՝ անասնոց վրայ ունեցած ազդեցութեանց ամենէն կատարեալը, ամենէն զարմանալին ու ամենէն օգտակարն է: Ամէն տեսակ շունք իրեն կը հպատակին, իւրաքանչիւր շուն իր տէրը կը ճանչնայ, անոր սովորութեանց համաձայն կը վարուի, անոր ինչքերն ու ստացուածքը կը պահպանէ, եւ մինչեւ ցմահ անոր հետ կը մնայ: Աս բաները չէ թէ կարօտութեան համար կամ բռնութեամբ կ'ընէ, այլ ճշմարիտ երախտագիտութենէն ու անխարդախ գործունեայ բարեկամութենէն: Շունն իր արագութեամբը, զօրութեամբն ու հոտառութեամբը մարդուն զօրաւոր դաշնակից եղած է ուրիշ օտար կենդանեաց դէմ, եւ գուցէ ալ ընկերութիւնը հաստատելու միակ հարկաւոր միջոց: Անդանեաց մէջ միայն շունն է որ աշխարհքիս ամէն կողմերը մարդուն հետ կ'երթայ»։ Գարձեալ Պիւֆոն կ'ըսէ. Մարդուն գտած արուեստներուն մէջ՝ շուն կրթելու արուեստը կ'երեւայ թէ առաջինն եղած ըլլայ, որով երկրին վրայ տիրելն ու խաղաղ ժառանգելը ձեռք բերած է: Բայց աս արուեստը ոչ երբեք կը յաջողէր կամ ընդհանուր կ'ըլլար, թէ որ շունը բնական բաղձանք մը չունենար մարդուն օգտակար ու օգնական ըլլալու: Պուրչէլ Ափրիկէի ճանապարհորդը դիտած է որ ազգ մը կամ երկիր մը չկայ, որուն մէջ՝ ուրիշ չորքոտանիներէն աւելի՝ շան վրայ ներքին բարեկամութիւն ու սէր մը չունեցուի. եւ ասկից կը հետեւցընէ որ աս ներքին ընտանութիւնը կամ բարեկամութիւնը բնութեան

մէջ հաստատուած է : Ուստի Լիննէոս շան աս ամէն յատկութեանց նայելով՝ անոր Ընտանի յորջորջումը կու տայ :

Կամփոռներուն վրայ շատ զարմանալի ու դիւցազնական պատմութիւններ կը պատմուին, որոնց ճշմարտներէն մէկ քանին հոս յառաջ կը բերենք : Նրմուր ու Մոնտարժի քաղաքաց մօտ Կարոլոս Ե. թագաւորին ատենէն մնացած գղեակ մը կայ, որուն պատերէն մէկուն վրայ մարդու մը՝ հանդիսատեսաց բազմութեան առջեւ հսկայաձեւ շան մը հետ մենամարտութիւն ընելը քանդակուած է : Աս գէպքս 1371ին Հոկտեմբերի 8ին պատահած է հետեւեալ կերպով : — Մաքէր ասպետը՝ որն որ Կարոլոս Ե.ին պալատականներէն մէկն էր, գէշ աչքով կը նայէր (այի տը Մոնտիտիէ իր պաշտօնակցին վրայ) թագաւորին առջեւը շատ հաճոյ ըլլալուն համար : Անոր համար շարունակ ետեւէ էր անոր որոգայթ մը լարելու, վերջապէս անգամ մը զինքն անտառի մը մէջ մինակուկ իր մեծ շան հետ գտնելով՝ սուրը քաշեց մեռցուց ու մարմինը նոյն տեղը թաղեց : Իորժքը լմնցընելէն ետքը՝ պալատը դարձաւ, ապահով ըլլալով թէ մէկը չի գտնուիր՝ որ զինքը կարենայ մատնել : Բայց սպանելոյն հաւատարիմ ընկերակիցը տիրոջմէն չբաժնուեցաւ, մինչեւ որ անօթութեանէ ստիպուելով՝ տիրոջը բարեկամներէն մէկուն տունը գնաց քիչ մը բան ուտելու . ասանկ ամէն անգամ կու գար կերակուր կ'ուտէր եւ շուտ մ'աճապարելով՝ նորէն անտառը կը քաշուէր, իր տիրոջը գերեզմանին վրայ : Աս բանս ասանկ շատ անգամ ընելով՝ ուրիշներուն մտադրութիւնը գրգռեց, որոնք ետեւէ ինկան պատճառը փնտռելու, եւ շան ետեւէն երթալով՝ անտառին մէջ նոր փորուած հողի մը վրայ տխուր տրտում պառկած որ գտան, նոյն տեղը փորելով՝ սպանելոյն մարմինը գտան,

բայց սպաննողին վրայ ոչ ոք կրնար կասկածի երթալ :

Ապանելոյն աղգականներէն մէկը հաւատարիմ շունը քովն առնելով, օր մը երբոր աս նոր բարեկամին հետ ժուռ կու գար, թագաւորին ազնուական թիկնապահաց հանդիպեցաւ, որոնց մէջ շունն իր տէրը սպաննողը տեսնելով՝ մեծ կատաղութեամբ վրան յարձակեցաւ. թէպէտեւ ծեծով աս հաւատարիմ վրիժառուն արգելեցին, բայց ուր որ զինքը կը տեսնէր, վրան յարձակում կ'ընէր: Ասով Մաքէրին վրայ սկսան կասկածի երթալ: Քիչ մը ետքը ազնուականները բանը թագաւորին իմացուցին, որն որ հրաման խրկեց որ բոլոր ազնուականք պալատը ժողվուին. կասկածեալն ալ նոյն բազմութեան մէջ խառնել տուաւ: Շունը որչափ որ կարելի էր՝ հանդարտութեամբ բերուեցաւ. բայց անմիջապէս բազմութեան մէջ մարդասպանը ճանչնալով՝ կատաղութեամբ հաչելով վրան յարձակեցաւ, կարծես թէ թագաւորէն վրէժխնդրութիւն պահանջելով: Թագաւորը զարմանալով՝ ասպետն իրեն կանչեց, եւ վրան եղած կասկածի պատճառներն առջեւը դնելով՝ քաղցրութեամբ խրատեց որ ճշմարտութիւնը խոստովանի: Բայց անիկա ընդունելու պատժէն վախնալով՝ յամառութեամբ դէմ կը դնէր, մինչեւ որ թագաւորն ան ատենուան այլանդակ սովորութեան համեմատ՝ դատին որոշումը գտնելու համար՝ ասպետին ու շան մէջ մենամարտութիւն ընել տալու ստիպուեցաւ: Ասոր համար, ինչպէս որ պատկերին մէջ փորուած է, կլոր տեղ մ'որոշուեցաւ ամփիթէաարոնի նման, թագաւորին ու մեծամեծաց համար ալ մասնաւոր բարձր տեղեր շինուեցաւ. երկու կողմերը փողարներ ու անթիւ հանդիսատեսաց բազմութիւն կը կենար: Ալոր տեղւոյն մէջտեղն եկան երկու կռուողները, Շունն ու Մաքէր: Պատկերին

մէջ նկարուածին պէս՝ Մաքէր վերտ մը հագած էր, ձախ ձեռքը՝ վահան մը, աչ ձեռքը՝ խոշոր բիր մը, գլուխը՝ բաց : Իսկ անպատասպարան՝ բայց քաջասիրտ շունը բնական զէնքերէն զատ ուրիշ զէնք չունէր, միայն պատասպարելու համար առանց յատակի տակառ մը դրուած էր : Աս քաջասիրտ շունը չսպասեց որ հակառակորդն առաջ յարձակում ընէ, այլ կատաղութեամբ վրան յարձակեցաւ : Բայց որպէս զի բրոյն հարուածէն խուսափէ, երկայն ատեն հակառակորդին չորս կողմը կը ցատքըռուէր, մինչեւ որ յարմար ժամանակ մը գտաւ՝ վրան յարձակեցաւ, եւ վզէն բռնելով՝ գետինը փռեց : Ասոր վրայ չարագործը շնորհք խնդրեց, խոստանալով որ ամէն բան կը խոստովանի : Շունը մէկդի առնելէն ետքը՝ խոստովանեցաւ որ սպանութիւնը շան առջեւն ըրած էր, եւ չարագործութեան արժանի պատիժն ընդունեցաւ :

Տրայտն Անգղիայի երեւելի թատրերգուաց մէկը՝ շատ կը սիրէր ոտքով ճամբորդութիւն ընել, եւ դատարկութեան օրերը մինչեւ երեսուն անգղիական մղոն Լոնտոնէն կը հեռանար՝ մերձակայ երեւելի դղեակները տեսնելու, ուր որ զինքն իրեն համբաւոյն համար պատուով կ'ընդունէին ու կը մեծարէին : Բայց որովհետեւ յաճախ անգամ Անգղիա ճամբաներուն վրայ անանկ մարդիկներ կը գտնուին՝ որոնք ճամբորդներուն բեռերը թեթեւցընելու հոգ կը տանին, ուստի ճամբորդն ապահովութեան համար հետը միշտ Ախշապ անունով խոշոր անգղիական գամիտ մը կ'առնէր : Օր մը զլորտ Հարլէ տեսնելու համար անտառէ մը անցնելու ատեն՝ մուրացիկ մը քովը կը մօտենայ ու ողորմութիւն կը խնդրէ, ան ալ գրպանէն ստակ մը հանելով՝ ձեռքը կը դնէ : Քիչ մը ետքը առջեւն ուրիշ մը կ'ելլէ, որն որ նոյնպէս ողորմութիւն կ'ուզէ, ան ալ կ'ընդունի : Ասոր

վրայ երրորդ մ'ալ աղքատի մը կերպարանքով կ'երեւայ, եւ ան ալ ստակ մը կը խնդրէ ու կ'ընդունի: Ամենէն վերջը փայտէ ոտուրներով, ճերմակ մորուօք ու անթի երկայն ցպերով ուրիշ երկու մարդիկ լռիկ մնջիկ իրեն կը մօտենան. աս մուրացկաններն աներես ծիծաղով մը ինչ ըլլալին կը յայտնեն, եւ անոնցմէ մէկն ատրճանակ մը հանելով՝ Տրայտին կուրծքը կը դնէ, եւ՝ Բոլոր քսակդ կամ կեանքդ, կը կանչէ: Տրայտն վտանգը տեսնելով՝ քսակը կը հանէ կու տայ: Մէկալ մունջն ալ որն որ նոր լեզու ստացած կ'երեւար, մէկէն կը հարցընէ իրեն թէ ծամը քանի է: Ճամբորդը կ'իմանայ, եւ անմիջապէս ժամացոյցը գողին կը յանձնէ: Թէպէտեւ աս յանկարծական դիպուածին պարագաները իսկըզբան զինքը շատ կը շփոթցընեն, բայց ետքը ինք զինքը ժողվելով ու թշնամեաց դէմ գնելու անկարութիւնը տեսնելով՝ կ'որոշէ ամէն բան տալ, որ գոնէ կեանքն աղատէ: Աս ըլլալու ատեն՝ անդիէն մէկալ երեք մուրացիկ աւազակներն ալ վրան կը հասնին ու կը հրամայեն որ ծոցերը պարպէ, վրայի զգեստներն եւ ուրիշ ունեցածները հանէ տայ: Տրայտն աս ալ յանձն կ'առնէ. միայն ոսկւով պատած մանրանկար մը, որն որ յիշատակ առած էր, չէր ուզեր տալ. բայց գողերը յիշոց մը տալով՝ մէկ բերան՝ Ամէն բան կ'ուզենք, կը պոռան: Աս որ կը լսէ ճամբորդը, դեռ նոր մեռած կնոջն անդին պատկերը գողերու ձեռքը չմատնելու համար՝ միտքը կը դնէ կեանքը վտանգի մէջ գնել. Չարագործք, կը պոռայ, եթէ որ կեանքս կ'առնէք՝ պատկերն ալ կ'առնէք. եւ քովի շան դառնալով՝ Քեզ տեսնեմ, Ախշապ, կը պոռայ: Շունը՝ որ մինչեւ նոյն ատեն հանդարտիկ կը նայէր տիրոջը կողոպտուելուն, աս ձայնը ըսելով՝ առիւծի պէս աւազակաց վրայ կը յարձակի: Ասոնք վրան յանկարծ հինգ ատրճանակի

գնդակներ կը պարպեն, սրերնին կը հանեն ու վզին չուան մը կ'անցընեն, որպէս զի ինք զինքը պաշտպանելու վիճակէն հանեն:

Տրայտն նոյն ժամանակը ձեռքին վրայ թեթև վէրք մը կ'ընդունի. բայց տեսնելով որ մուրացիկները շունը զսպելու վրայ են, ինք շուտով մը կը փախչի ու արքունի ճամբան կ'ելլէ: Մերձաւոր գինետուն մը մտնելով՝ հոնտեղը քանի մը փայտահատ կը գրտնէ եւ գլխուն եկածը կը պատմէ: Ամէնքը մէկ կ'ըլլան, ոտք կ'ելլեն, ետեւէն կ'երթան: Միայն մանրանկար պատկերս ու շունս պահեմ, կ'ըսէ Տրայտն, ուրիշ բաները հոգս չէ: Երթանք երթանք, կը պոռան մէկէն՝ երկայն բրերով զինեալ փայտահատները. երթանք թշուառականներուն գլուխն ու ստուրները կոտրենք: Երթալու ատեն՝ ճամբուն վրայ Վիշապն առանձին կը գտնեն՝ վէրքերով ու արեամբ լեցուած, վզին վրայ ալ չուանի կտորներ: Տրայտն աս որ կը տեսնէ, ուրիշ բան չիմտածեր՝ բայց եթէ վրէժխնդրութիւն: Խեղճ կենդանին ետեւներնէն կամաց կամաց երթալով՝ կարծես թէ կ'ուզէր իմացընել որ աւազակները յաղթուած են, գողցուած բաները կրնայ ետ առնել: Առուին տեղն որ եկան, ինչպէս զարմացան՝ երբ որ տեսան թէ աւազակներէն երկուքն արիւնաթաթախ գետինը փռուած են, երրորդն արիւնլուայ բոլորովին ինք զինքը կորսնցուցած՝ մահուան հետ կը պատերազմի: Մէկալ երկուքը՝ որոնք իրենց ընկերաց աւարը կը կողոպտէին, զՏրայտն տեսածնուն պէս՝ փայտէ ոտուրներնին ու անթի ցպերը թող տալով՝ անտառին ներսերը փախան. բայց փայտահատները զիրենք բռնեցին, որոնք ետքը կախաղանի վրայ իրենց չարագործութեանց պատիժը գտան: Այսպէս առանձին շուն մը հինգ զինեալ մարդու կրցաւ յաղթել. բայց ինքն ալ ասոր վրայ երկայն չապրեցաւ, վասն զի ամիս մը

ետքը շուաններուն վզին վրայ պատճառած վերքերէն մեռաւ :

Վաղղիայի մէջ 1709ին անանկ խիստ ցմեռ մ'ըրաւ, որ ցորենը, որթատունկը, ձիթենին ու պրտաղատու ծառերն ապականեցան : Նոյն ձմեռը գայլերը զարհուրելի կոտորածներ կ'ընէին գիւղերու մէջ, մինչեւ մարդու վրայ ալ կը յարձակէին : Օր մը աս գաղաններէն մէկն յանդգնեցաւ գեղջուկի մը խիղին պատուհանէն ներս մտնելու, ուր որ ութը եւ վեց տարւան երկու տղաք անկողին մտած՝ մօրերնուն գալուն կը սպասէին, որն որ մերձաւոր անտառակը գացած էր քիչ մը փայտ ժողվելու որ խիղը տաքցընէ : Գայլը գէմ դնող չգտնելով՝ պառկող տղոց վրայ կը յարձակի, որոնք զարհուրած՝ վերմակին տակ կը մտնեն ու պինդ կը բռնեն : Քաղցած գաղանն ինք զինքը բաղձացած որսին այնչափ մօտ տեսնելով ու չկրնալով ձեռք բերել՝ աղբաներով վերմակն ու սաւանները կը սկսի պատուել : Երբ որ այսպէս տղոց հետ կռուելու մէջ էր, մէյ մ'ալ վրայ կը հասնի տան մեծ գամիւրը՝ որն որ տղոց մօրը հետ անտառ գացած էր : Շունն արդէն հեռուէն գայլուն հօտն առած ըլլալով՝ խոխով բեռնաւորած կնոջմէն յառաջ աճապարեց, եւ առիւծի պէս՝ թշնամոյն վրայ յարձակեցաւ, ու խեղճ տղոց վրայ կոխելով՝ սաստիկ կռիւ մը բացաւ գայլին հետ, զորն որ քիչ մը վերջը վզէն բռնելով խղզեց : Արնան կարգացողները մտածել թէ ինչ այլայլութիւն ու ցառունեցաւ տղոց մայրը՝ երբ որ տուն հասնելով սենեկին մէջտեղը գայլը փռուած, շունն արիւնջուայ, եւ անկողինը պատուտած տեսաւ : Իսկ շունը խեղճ կնոջ ցաւը տեսնելով՝ ընտանութեամբ մ'իրեն կը մօտենայ, ետքը անկողին կ'երթայ ու գլուխը շատ անգամ վերմակին տակ խոթելով՝ կ'իմացընէ որ իր սիրելի զավկներն անկողնոյն մէջ պահուրտած են :

Մայրն աչքէն արցունք թափելով՝ անկողնոյն կը մօտենայ ու գողչոջիւն ձեռօք ողջ առողջ դուրս կը հանէ աղաքը, որոնք սարսափած՝ տեղերնէն չէին շարժեր: Տղաք հոգի առնելով՝ կը պատմեն թէ ինչպէս գայլը ներս մտնելով՝ զիրենք անկողնոյն մէջ գիշատել կ'ուզէր, իսկ հաւատարիմ շունը վրայ հասնելով՝ զիրենք անյագ գազանին ճիրաններէն աղատեց:

Աս շանց մէկ տեսակը՝ մասնաւոր կը թու թեամբ որսորդութեան մէջ զարնուած որսը բերելու կը վարժեցընեն: Ասոնք հին ատենները կենդանեաց ու մարդուն հետոց ետեւէն երթալու եւ խիտ անտառաց մէջ պահուլտած գողերը կամ մարդասպանները հալածելու շատ կը գործածէին. անոր համար ատեն մը Անգղիայի մէջ օրէնք մը կար, որ եթէ մէկը՝ գողցուած բան փնտռող շունը տան մէջ մտնելու արգելէ, իբրեւ գողակից պատժուի: Սահմանադրուող բնակիչները, անտառաց եւ անմատոյց լեռանց մէջ բնակողներն ու արդարութեան ձեռքէն փախչողները բռնելու համար ալ աս տեսակ շները կը գործածէին: Բայց հիմաև որ արդարութեան բազուկն երկրին ամէն կողմերը տարածուեցաւ, ասոնց պաշտօնն ալ դադրեցաւ: Սակայն իրենց սերունդը մինչև հիմայ Սկոտլանդ կը գտնուի:

Ամերիկայի (Գուպայի) գամփոններէն երկու հատ Լոնտոնի կենդանաբանական ընկերութեան պարտեզին մէջ կայ, որոնք ամառը մասնաւոր սենեկաց մէջ կը պահուին, ինչպէս առհասարակ սովորութիւն է ամէն գամփոններն ամառը գոց տեղ պահել: Մարմնոյն ձեւին կողմանէ անգղիական գամփոն շատ կը նմանին: Ասոնց ականջները միշտ կախուած է ու վեր չեն կրնար վերցընել. մազերնին հաստ ու կարճ են, գոյներնին ալ՝ այլեւայլ: Աս տեսակը հանդարտ է ու դիւրաւ կ'ընտանենայ:

Հարաւային Ամերիկայի շները յիշելն ալ՝ մար-
 դուս սրտին մէջ տխուր յիշատակներ կը զարթու-
 ցանէ : Նոր երկրին մարդիկները՝ Եւրոպացւոց գա-
 լէն յառաջ շունը չէին ճանչնար . մինակ տեսակ մը
 Ալյոյ անուանած շնիկ մը Բերուացւոց ծանօթ ու շատ
 ընտանի էր : Աս կենդանւոյն միայն ստորագրութիւնն
 ունինք , զորն որ Փեռնանտ գրած է , բայց իր խիստ
 ու դաժան բարուցը համաձայն գրած ըլլալով՝ ան
 կենդանւոյն վրայ որոշ գաղափար մը չենք կրնար
 ստանալ : Հերրերա կը պատմէ թէ Աոլոմբոս սուրբ
 Մարթա կղզւոյն վրայ շատ մը չհաջող շներ գտած
 ըլլայ , բայց առհասարակ կը կարծուի որ ասոնք գայլ
 եղած ըլլան : Ինչպէս շունը՝ նոյնպէս ձին , եղն ու
 խողը Ամերիկայի գիւտէն յառաջ տեղացիներուն
 բոլորովին անծանօթ էին . բայց վերջէն Եւրոպացւոց
 ձեռօք հոն մտնելով՝ այնչափ բազմացան , որ ձիերը ,
 կովերը , խողերն ու շները բոլոր երկիրը բռնեցին ,
 եւ մինչեւ հիմակ անթիւ անհամար հօտեր կը գրտ-
 նուին : Տեղացիք ձիերն աղէկ կը գործածեն եւ աշ-
 խարհքիս ամենէն քաջ հեծեալները կը համարուին .
 իսկ արջառն այնչափ շատ է՝ որ միայն կաշւոյն հա-
 մար կ'որսան , եւ կաշին վաճառականութեան աղէկ
 նիւթ եղած է : Շները հիմայ քիչցած են . բայց մէկ
 ու կէս դար յառաջ Իսպանիոյա , Գուպա ու Քա-
 րայիպեան կղզիներուն վրայ այնչափ բազմութեամբ
 կային , որ մինչեւ զերենք ջնջելու համար երբեմն
 երբեմն որսորդութեան կ'ելլէին , որպէս զի վայրենի
 քուրակաց ու հորթերուն շատ ջարդ չտան : Եւթն-
 եւտասներորդ դարուն ճամբորդաց ըսածին նայե-
 լով՝ աս վայրենի շները 50—60 հատ մէկ եղած՝
 խմբովին վայրենի կինձերուն երամակաց վրայ կը
 յարձակէին : Հէպեր՝ իր Արէ-է-է-ն շնորդու ըսուած
 Գրքին մէջ կը հաստատէ որ շները խմբովին վայրե-
 նի անասուններ կը հալածեն , որն որ յառաջ առաս-

պել մը կը համարուէր : Ինք Սինէացւոց սահմանին
 վրայ բնակող գիւղականներէն իմանալով՝ կը զրու-
 ցէ որ շները վազրներուն վրայ յարձակելով՝ կը
 պատուեն : Ախրիկէ բազմութեամբ՝ ամենէն մեծ
 առիւծներուն վրայ ալ աներկիւղ կը յարձակին :
 Գարլանտի դաղթականաց շներն ամենէն յանդուգն
 ու քաջասիրտ կրնանք դնել, եւ աս քաջասրտու-
 թիւնը՝ մինակ անկից յառաջ եկած է որ բորեան-
 ներու եւ յովազներու հետ շարունակ պատերազ-
 մի մէջ են : Գաղթականք, ինչպէս Ախիզէնչղայն
 ճանապարհորդը կը պատմէ, աս կէս վայրենի շնե-
 րէն տասնուհինգ հատի շափ արօտի տեղերը պահ-
 պանութեան կը դնեն, որոնք այնպէս կատաղի են՝
 որ ոչ ցորեկ եւ ոչ գիշեր կը թողուն որ մէկը քո-
 վերնին մօտենայ : Հոնտեղը սպաննուած ոչխարնե-
 րուն աւելորդներովը կը կերակրին, միշտ ալ վտիտ
 ու տգեղ տեսք մ'ունին, անանկ որ տեսնողին սիրտը
 չիքաշեր երեսնին նայելու : Հասարակ տեսակն որ-
 սականաց բարակներէն յառաջ եկած է, եւ Տանի-
 մարգայի մեծ շան շատ կը նմանի. աս տեսակը հոն
 ամենէն լաւ կը համարուի, եւ անոնցմէ միայն երեք
 հատը կրնան՝ թէ ողջ ողջ եւ թէ մեռցրնելով՝ յո-
 վազ մը բռնել : Ասոր համար յառաջուրնէ մեծ փու-
 թով կը կրթուին ու բնակներուն մեծ օգնութիւն
 կ'ընեն, որովհետեւ վառօդն ու գնդակը հոն խիստ
 ծանրագին ըլլալուն համար՝ շատ չեն գործածեր :
 Անկոխ անտառաց մէջ առանձին որսորդութիւն կ'ը-
 նեն եւ քիչ անգամ կը պատահի որ եղջերուի տե-
 սակ անասուն մը չբռնեն : Բռնելու որ ըլլան, շներէն
 մէկը տուն կ'երթայ եւ չիհանդարտիր՝ մինչեւ որ
 մէկը հետը գայ, որսն առնէ. իսկ մէկայնքերը որսին
 քով կը կենան պահպանութիւն կ'ընեն ուրիշ գա-
 դանաց դէմ : Ախիզէնչղայն աս տեսարանին անգամ
 մը անձամբ ներկայ եղած է : Ինք կը հաստատէ որ

աս գազանաշատ կողմերը՝ առանց շան օգնականութեան՝ անտարակոյս անմարդաբնակ եղած կ'ըլլային : Պատմութիւնը կը ցուցնէ որ Ափրիկէի ու Հնդկաստանի շատ կողմերը՝ կատուի տեսակ գիշակեր անասնոց շատնալուն պատճառաւ անբնակ եղած են : Իր արթնութեամբը՝ մերկ Հոթիթէնդոզներուն աւարառութեան՝ չափ կը դրուի . ոսկեգոյն գայլն ու յովազը կը փախչի, եւ շատ անգամ առիւծն ալ շանց անընդհատ հաջելէն ի փախուստ կը դառնայ : Առիւծներուն ու վագրներուն կռուին մէջ թէպէտ երբեմն քանի մը շուն կը սատկի, բայց մէկայններն ասկից չվախնալէն զատ՝ աւելի եւս կը կատողին, եւ վէրք մ'ալ առած են նէ՛ լզելով կ'անցընեն :

Ամերիկայի վայրենի շները դիւրաւ կ'ընտանենան . մանաւանդ երբ որ ձագ եղած ատեննին տուն բերուին, կատարեալ հպատակութեան մէջ կը մեծնան : Գոնկոյի վայրենի շներն ալ այնպէս բազմութեամբ մէկտեղ կը գտնուին, առիւծներու, վագրներու եւ փղերու վրայ կը յարձակին ու կը սպաննեն կ'ուտեն . երբեմն երբեմն ան կողմի խափշիկներուն գեղերուն ու քաղաքներուն մէջ կը մտնեն ու հոն կը մնան . շատ անգամ ալ ճամբորդներուն ետեւէն կ'երթան որ բան մը փրցընեն, ու մէյ մ'առնելէն ետքը՝ քովերնէն չեն բաժնուիր : Ասիկա ամէն վայրենի շանց վրայ կրնանք զրուցել, որ մէյ մը մարդուն վրայ սեր կը ստանան նէ՛ ալ չեն կորսընցըներ, եւ ոչ երբեք հպատակութեան վիճակէն կ'ելլեն ու անկախութեան վիճակը կը դառնան, ուր որ ուրիշ կենդանեաց վրայ ազատութեան վիճակը նորէն ստանալու ջանքն իբրեւ բնական հակում կը տեսնենք :



Աս զարմանալի շները հասարակօրէն Գամիիս կ'անուանին, գուցէ իրենց մեծութեան ու զօրութեան համար, բայց ճիշդ առնելով՝ ան տեսակին տակ կ'երթան, որոնց կը վերաբերին նաեւ Հովուաց, Էսքիմացւոց եւ ուրիշ թէ խելացութեամբ ու թէ հաւատարմութեամբ երեւելի շները :

Մեծ սուրբ Բեռնարդոս լերան վրայ, ուր որ Հելուետիայէն Սաւոյա երթալու վտանգաւոր անցքը կայ, շինուած է հռչակաւոր վանք մը Եւրոպայի բնակութեանց ամենէն բարձրը, որուն մէջ կը բնակին տասը մինչեւ տասուերկու կրօնաւորք՝ որոնց գործքն է ճամբորդները հիւրընկալել եւ իրենց կարելի օգնութիւնն ընել : Տարւան մէջ ութը ինն ամիս աս անցքը խիստ վտանգաւոր կ'ըլլայ ձեան փոթորիկներուն, մշուշին ու ձեան հիւսերուն պատճառաւ : Նոյն կողմերը ճամբորդը շատ անգամ օրերով երկինքն ամպ չտեսած՝ յանկարծական սաստիկ պաղէն ու փոթորկէն կը բռնուի . երբ որ սառնապատ լերանց կողերն արեգական ճառագայթներէն կը շողան, յանկարծակի փոթորիկ մը կ'ելլէ, ճամբաները ձիւնով կը գոցուին, ձեան հիւսերը մեծ շոփնդով ժայռեր ու հաստարմատ ծարեր խլելով՝ լեռնէն վար ձորերը կը հողովին : Աս հիւրընկալ կրօնաւորք՝ որչափ որ ալ աղքատ են ու եկամուտքնին քիչ է, ի վերայ այսր ամենայնի ամէն օտարականները կ'ընդունին : Յոգնութիւնը, քաղցն ու սառիլն՝ իրաւունք կու տան ամենուն իրենց քով հիւր ըլլալու : Բայց իրենց մտադրութիւնը՝ միայն իրենց վանքն եւ կող գժբախտներուն վրայ չիտարածիր, այլ միայնգամայն իրենք զիրենք տուած են աս վտանգաւոր գործքին ալ՝ որ յանկարծական փոթորկէ բռնուող

գժբախտները փնտռեն գտնեն, որոնք առանց իրենց օգնականութեան՝ կը կորսուէին: Ասոր համար վանքին մէջ տեսակ մը աղէկ շուն կը պահէն, եւ անոնց սուր զգայարանաց ձեռքով ճամբորդներուն օգնութեան կը հասնին: Երբ որ ողորմելի ճամբորդը լերան վրայ ճամբայ փնտռելէն հոգին բերանն եկած՝ խիստ պաղէն ծագած թմրութենէն կը յաղթուի, խորին քնոյ մը մէջ կը մտնէ ու վերջապէս գետինը պառկելով՝ ձիւնը զինքը կը գոցէ, շունն իր սուր հոտառութեամբն ու արտաքոյ կարգի աջողակութեամբն իր օգնութիւնը կը հասցընէ: Թէեւ ողորմելին քսան ոտք խորունկ ձեան մէջ ալ թաղուած ըլլայ, շան հոտառութեան բարակութեամբը կը գտնուի ու կրնայ ազատիլ: Շներն ոտուրներով ձիւնը կը փորեն ու կը սկսին անընդհատ ձայնով մը հաջել, որն որ վանքին բոլոր անձինքն ոտք կը հանէ: Հասարակօրէն կրօնաւորներէն մէկը շիշ մը օղի կը տանի, որպէս զի տկարացած ճամբորդը կարող ըլլայ զօրանալ, ուրիշ մ'ալ վերարկու կամ զգեստեղէն մը կ'առնէ որ վտանգեալը ծածկուի: Բայց շատ անգամ ալ նոյն իսկ շան վզէն փոքր շիշ մը դինի ու հաց կը կախեն որ յոգնած ճամբորդը շուտ մը զօրանայ: Աս աշխատութիւնը շատ անգամ արդիւնք կ'ունենայ, եւ թէ որ ճամբորդին կեանքն ալ չ'ազատիր, գէթ մարմինը կը գտնուի, որն որ մասնաւոր տեղ մը կը տարուի, որ եթէ ազգականներն ուզեն նէ՝ գան առնեն, եւ այնչափ մեծ է պաղութեան աստիճանը՝ որ մեռելոյն կերպարանքը մինչեւ երկու տարի անարատ կը մնայ:

Աս շներէն մէկը շքանշան մ'առած էր 22 հոգւոյ կեանքն ազատելուն համար, որոնք առանց իր սուր հոտառութեան՝ անտարակոյս կը կորսուէին: Շատ ճամբորդներ՝ որոնք սուրբ Բեռնարդոսէն կ'անցնէին, աս շան սցցելութեան կ'ելլէին, ու վառա-

բաններուն քով նստած՝ կրօնաւորներէն իր արտա-
քոյ կարգի զարմանալի գործոց պատմութիւնը մտիկ
կ'ընէին : Աս երեւելի դիւցազնը 1816ին երբ որ
Ճամբորդ մը իր ընտանեաց քով կը տանէր, մեռաւ .
Բիէմոնդեցի թողթաբերը փոթորկի ժամանակ վանք
հասնելով՝ կ'ուզէր նոյն լերան ձորին մէջ Ս . Պե-
տրոս ըսուած գեղն իջնալ՝ կինն ու որդիքը տեսնե-
լու համար . կրօնաւորք միտքը դարձընելու պարսպ
տեղ աշխատելէն ետեւ , իրեն երկու առաջնորդ
տուին երկու շներով , որոնցմէ մէկը յիշեալ շունն
էր : Անքէն վար իջնալու ատեննին՝ վերէն երկու
հիւս փրթելով՝ վրանին ինկաւ զիրենք ծածկեց : —
Ուրիշ շուն մ'ալ կար Պարրի անուամբ , որն որ 12
տարւան մէջ 40 հոգւոյ կեանք ազատած էր . մշուշն
ու ձեան փոթորիկը սկսելուն եւ երկինքը խաւարե-
լուն պէս՝ զինքը վանքին մէջ չէին կրնար արգելել :
Միշտ վիզը շիշ մը կը տանէր . ծերանալէն ետեւ՝
Պեոն քաղաքը խրկուեցաւ որ հոգացուի . եւ հիմա
նոյն քաղքին բնապատմական թանգարանին մէջ կը
կենայ լեցուած , վզէն ալ շիշ մը կախուած :

Հոս կ'ուզենք աս կենդանւոյն վրայ դէպք մը
յառաջ բերել , որն որ թէպէտ յաջող ելք չունե-
ցաւ , բայց շան արտաքոյ կարգի խոհեմութիւնը ցու-
ցուց : Խիստ ձմերուան մը մէջ որ մը Ս . Բեոնար-
դոսի կրօնաւորները՝ Ճամբորդներու հետ դէպ իտա-
լիա իրենցմէ երեք սպասաւոր խրկած էին , անոնց
առաջնորդելու եւ միանգամայն մօտաւոր Ռեմի գե-
ղէն վանք կերակրեղէն բերելու համար : Հետերնին
կային նաեւ երկու շուն . մէկը խոշոր՝ Արամազդ ա-
նուն , մէկալը՝ պզտիկ : Օրը տարաժամեցաւ , գիշերը
կոխեց ու կրօնաւորաց մեծ զարմանքովը նոյն սպա-
սաւորք չէին երեւար : Բայց իրենք զիրենք ապա-
հովցուցին ըսելով որ անոնք գիշերուան մթին չու-
ղելով լեռնէն ելլել , գեղը մնացած պիտ'որ ըլլան :

Առտու եղաւ, իրիկունը կոխեց, մարդ չերեւցաւ :
 Երրորդ օրը կրօնաւորներէն երկու հոգի ճամբայ
 ելան ու խորունկ ձեան մէջէն անցնելով՝ մեծ աշ-
 խատու[թեամբ վանքին քովն եղող լճին ծայրը հա-
 սան, ուր հասարակօրէն երեք բոպէի մէջ կրնար
 հասնուիլ եւ ուսկից Ռեմի գեղը տանող ճամբան կը
 տեսնուէր : Կրօնաւորք տեսնելով որ բոլոր ձորը ձեան
 հիւսերու կտորներով լեցուած է, սարսափած վան-
 քը դարձան : Հետեւեալ օրը Ռեմի գեղէն Արա-
 մազդին հետ ուրիշ սպասաւոր մը գալով՝ լուր կը
 բերէ որ ճամբորդներն ողջ առողջ գեղը հասան եւ
 անոնց հետ եկող սպասաւորները քիչ մը կենալէն
 ետքը՝ ճամբայ ելան վանք դառնալու : Ասկից զառ
 լուր մը չկար, բայց միայն աս՝ որ Արամազդ ժամ մը
 ետքը ոռնալով առանձին գեղ դարձած եւ իր ան-
 հանդստու[թեամբն ամենուն իմացուցած էր որ դրժ-
 քախտու[թիւն մը պատահած է : Գժքախտու[թեան
 պատճառը շատ ատեն անձանօթ չմնաց, ձիւնը հա-
 լելէն ետքը՝ խղզուած սպասաւորաց ու պզտիկ շան
 մարմիններն երեւան ելան : Հաւանական կ'երեւայ
 որ սպասաւորաց ճամբայ ելլելէն կէս ժամ մը ետ-
 քը՝ ահագին ձեան հիւս մը վրանին դրօտը կելլով՝
 զիրենք քառորդ մը հեռու լերան ստորոտը ձիւնով
 ծածկած ըլլայ : Կ'երեւայ որ Արամազդ բարեբախ-
 տու[թեամբ ձեան մէջ խորունկ ծածկուած չըլլայ
 եւ աշխատելով՝ դուրս ելած ըլլայ : Նոյնպէս կը
 կարծուի որ վանք դառնալու փորձ բրած ըլլայ, բայց
 փափուկ ձեան վրայ լեռնէն վեր ելլելն անկարելի
 տեսնելով՝ դէպ ի Ռեմի վաղող սառած առուակին
 վրայէն գեղը հասած եւ հոն բոլոր գիշերն ոռնա-
 լով ու անհանդստու[թեամբ անցուցած էր : — Գար-
 ձեալ կը պատմուի որ աս շներէն մէկը տղայ մը
 գտնելով, որուն մայրը լեռը հիւսին տակ մնացած
 էր, կռնակն առած՝ մինչև վանքին դուռը բերաւ :

Ամեն տեսակ շները մասնաւոր կրթութեամբ կրթանան որսորդութեան գործածուիլ. բայց կան քանի մը տեսակներ՝ որոնք իրենց յատուկ սեպհականութեանց համար՝ կենդանի որսալու շատ յարմար են. այսպէս է սպանիական հաւորս տեսակը, որուն բնածին է ամեն տեսակ հաւերը հալածել: Աս տեսակ շները Վիննէոս՝ ճարտիկ կ'անուանէ, եւ ասով իրենց ուրիշ շներէն աւելի ունեցած արտաքոյ կարգի ձիրքը կ'ուզէ յայտնել: Ասոնք հասարակօրէն շիտակ մազ ունին, գեղեցիկ բծերով, երբեմն ալ վագրի պէս շերտեր, ահանջնին երկայն ու կախուած կ'ըլլայ, մարմիննին լեցունկէկ: Մարդ կը զարմանայ երբ որ տեսնէ թէ ինչպէս զգուշութեամբ ու հանդարտութեամբ թռչնոյ մը ետեւէն կը լրտեսէ ու ճարպկութեամբ յանկարծակի կը շփոթցընէ ու կը բռնէ: — Տէնհէմ հռչակաւոր ճանապարհորդն Ափրիկէէն երկու հատ աս տեսակ շուն բերած էր Անգղիա, զորոնք շատ անգամ այժեամբ բռնելու կը գործածէր, որուն մէջ իրենց հոտառութեամբն ու արագութեամբն աղէկ կը գործէին: Հասարակօրէն այժեամբ մը հալածելու ատեն՝ ուրիշ շանց պէս որսին հետոց ետեւէն չէին երթար, հապա շիտակ ուղղութեամբ երթալով՝ զարմանալի գիւրութեամբ մէկէն առջեւնին կ'առնէին ու կը բռնէին: Աս գործքս ստուգիւ իրենց բնական ճարտարմտութեամբը կ'ընեն. անոր համար ալ կը տեսնենք որ երբ որ շուն մը տիրոջը հետ պտրտելու կ'ելլէ եւ ետ կը մնայ, ետքը աւելի կարճ ճամբով մը տիրոջը կը հասնի: Շները, կ'ըսէ բնազնին մը, տեղեաց հեռաւորութենէն աղէկ կը հասկընան, փոսի մը վրայէն ցատքելու ատեն՝ խիստ քիչ անգամ կ'ըլլայ որ չյաջող-

ցընեն: Ասիկա անտարակոյս տեսակ մը ճարտար-
մտութենէ յառաջ կու գայ. բայց չենք ուզեր Ռէյ
անգղիացի բնագիտին չափ յառաջ երթալ ու հաս-
տատել որ շները տեղեաց հեռաւորութիւնն իրենց
բնածին երեքանկիւնաչափական փորձերով կը դա-
տեն: Մոնդայն շատ աղէկ դիտած է շանց՝ հեռաւոր-
ութիւնները չափելու կարողութիւնը. Զարմացմամբ
տեսայ, կ'ըսէ, շանց զարմանալի բայց հասարակ ա-
ջողակութիւնը, որոնք թէ գեղերու եւ թէ քաղաք-
ներու մէջ կոյր մուրացիկներու առաջնորդ կ'ըլլայ-
ին, կը կենային ան տներուն առջև՝ ուսկից որ շատ
անգամ նոյն աղքատներն ողորմութիւն առած էին,
կառք անցնելու ատեն՝ տէրերնին ճամբէն կը հե-
ռացընէին, եւ զանոնք վտանգէ պահելու համար՝
պարսպապատ քաղքին խրամին քով եղած շիտակ
ու իրենց համար հանգիստ ճամբէն կը հեռանային:
Աս շներուն ո՞վ հասկըցուց որ իրենց տէրն ապա-
հով տեղէն տանելու համար իրենց սեպհական հան-
գըստութիւնը զոհեն. ինչպէս գիտեն թէ իրենց
համար բաւական լայն եղող ճամբան կոյր մարդուն
համար ապահով չէ:

Յովհաննէս Ֆապէրին գրուածոցը մէջ Հռոմի կոյր
մուրացիկներուն առաջնորդող շանց վրայ կը կար-
դանք որ ասոնք նոյն մուրացիկները թէ Հռոմ քաղ-
քին մէջ եւ թէ քաղքէն դուրս Օսդիա քաղքին
ճամբուն վրայ Սուրբ Պօղոս եկեղեցին կը պտըտը-
նեն: Ինչպէս կրնայ կենդանի մը կատարեալ եղա-
նակաւ տիրոջը կամքը հասկընալ ու երթալ ուր որ
տէրը կը բաղձայ: Աէլ կ'ըսէ որ շները չէ թէ միայն
կերպաւորեալ բառեր, այլ նաեւ երկայն խօսքեր
ալ մտքերնին կրնան պահել: «Շատ անգամ, կ'ըսէ
նոյն մատենագիրը, շանս առջև դիտաւորութեամբ
իր վրայ բաներ կը խօսէի՝ առանց իրեն անունը տա-
լու, որն որ զունը կրնար գրգռել, եւ շարժում

մ'ալ չէի ընէր որ իր մտադրութիւնը խօսքերուս չչարժեմ: Ի վերայ այսր ամենայնի կամ կ'ուրախանար, կամ կը տրտմէր, եւ այնպէս կը ցուցընէր որ ամէն ըսածներս աղէկ կը հասկընայ: Քաճ մ'ունէի՝ որ Վիէննայէն Փարիզ բերած էի, ասիկա քիչ ժամանակուան մէջ թէ գաղղիերէն եւ թէ գերմաներէն կը հասկընար, որն որ անկից կ'իմանայի որ մի եւ նոյն խօսքը երկու լեզուաւ ալ զատ զատ ատեն կը կրկնէի, եւ նոյն գործքը կը կատարէր, :

Արեւելի հեղինակ մը շան զարմանալի ըմբռնման գործքերը տեսնելով՝ կը պատմէ թէ անգամ մը գեղացւոյ տան մը առջեւ կեցած էի, ուր տանտիրինը տղաքը կը հագցընէր. արդէն հագցուցած տղոց մէկուն ըսաւ որ քովի սենեկէն պզտիկ քրօջը զգեստները բերէ: Տղան չհնազանդեցաւ չգնաց: Ան ատեն մայրը սրգողելով՝ տղան ամբըցընելու համար՝ հեզնելով մը քովը կեցող շան դառնալով, ըսաւ. Գուն չես բերեր նէ՛ Մունկոն կը բերէ: Զունն իմացաւ, եւ թէպէտ բան բերելու տանելու վարժած չէր, ի վերայ այսր ամենայնի առանց ուրիշ հրամանի մը գնաց զգեստները բերաւ: Անտարակոյս ներկայ առարկաներէն ու պարագաներէն շան երեւակայութիւնը գրգռուած պիտի ըլլայ. շատ անգամ տեսած պիտ'որ ըլլայ տղոց հագուիլը, եւ նոյն վայրկենին մէջ անունը կանչուելով՝ երեւակայած պիտի ըլլայ որ տանտիրինը նոյն ժամանակ ուրիշ բան չիկրնար ուզել՝ բայց եթէ տղուն զգեստները: Կենդանեաց վրայ տեսակ մը բանաւորութիւն գնող հեղինակի մը մէկ բարեկամը կը գրէ թէ «Քիչ բան կայ՝ որ իմ Հաւատարիմ շունս մեր լեզուաւ չհասկընայ. օրինակի աղադաւ երբ որ կ'ըսեմ իրեն. Հաւատարիմ, գրասեղանիս վրայ տուփ, գիրք ու կապարեայ գրիչ ունիմ, գնա բեր. շունս մեծ ու շաղրութեամբ խօսքիս միտ կը գնէ, եւ Հաւ

Հաւ մը պատասխան տալով՝ կ'ելլէ կ'երթայ, եւ քիչ մը ետքը ուզած բաներս բերանն առած՝ կը բերէ: Ինչ որ ինք իրմէ բերանը չի կրնար առնել, կ'երթայ ծառային կ'իմացընէ որ բերանը խոթէ: Ասանկով ամէն բան ինչ որ կրնայ բերել՝ իրեն կը հրամայեմ ու կը բերէ: Քայց կրնայ հարցուիլ թէ շունս ինչպէս ասանկ վարժեցուցի: Չեոքս բռնած առարկաս միշտ շան աչքին առջեւը դնելով՝ նոյն առարկային անունը կու տայի, եւ տեղ մը դնելով՝ շունս հետս առած կը պահանջէի իրմէ որ դրածս նոյն տեղէն ձեռքս տայ: Շատ անգամ՝ բերանը բան մը կը դնէի ու գրասեղանս տանել կու տայի: Ալերջապէս շատ փորձերով, շարունակ կրթութեամբ, պատժով ու փայտայելով՝ այնչափ ըրի որ իմ չորքոտանի սպասաւորէս ան աւելի բան մը չէի կրնար ուզել¹¹:

Շունը տիրոջը տնէն դուրս ելլելը յառաջուրնէ գուշակէ նէ՝ յառաջ ինք դուրս կ'ելլէ, հետու տեղ մը կը կենայ կը պահուրտի, որպէս զի տունը մնալով՝ զինքը տիրոջը հետ երթալէն չարգելեն: Ասիկա հասարակ դէպք մըն է, բայց շատ անգամ նոյն իսկ ճշմարտախօս բնազնինք անանկ բաներ կը պատմեն որ ան մտաւորութեան սահմանը կը մերձենան: Շուն մը՝ տան մէջ միշտ փռան քով կ'ուզէր կենալ. իսկ երբ որ տիրոջը հետ տուն ուշ հասնելով՝ տան մէկալ շներն արդէն իր տեղը գրաւած կ'ըլլային ու իրեն տեղ չէր մնար, ան ատեն դռնէն դուրս կ'ելլէր ու կատաղիի պէս հաջելու կը սկսէր. տան շներն աս լսելով՝ դուրս կը վազէին որ նային ինչ կայ եւ իրենք ալ հաջեն. իսկ մէկալ շունն անմիջապէս ներս կը մտնէր ու փռան քով ամենէն լաւ տեղը բռնելէն ետեւ՝ կարծես թէ վրանին կը ծիծաղէր. աս խարդախութիւնը շատ անգամ կը գործածէր ու միշտ կը յաջողէր: Աս դէպքս ըստ

ամենայնի կը նմանի ան դէպքին՝ զորն որ Տիւսի-
սային Գաղղիայի մէջ մէկն ըրած էր: Ճամբորդ մը
անձրեւէն թրջած ու պաղէն սմբած՝ պանդոկ մը
կը մանէ՝ որ քիչ մը ջերմանայ, բայց վառարանին
քով արդէն շատ մարդ ըլլալով՝ իրեն տեղ չի-
գանուիր. անոր համար ճարակութիւն մը կը բա-
նեցընէ ու պանդոկապետին կ'ըսէ որ ախոռին մէջ
թող տուած ձիոյն ոստրէ տայ: Ամէն մարդ՝ ոստրէ
ուտող ձին տեսնելու համար՝ հետաքրքրութեամբ
կամաց կամաց ախոռ կ'երթան. իսկ պանդոկապետն
ետ կը դառնայ կ'ըսէ որ Չին ոստրէ ուտել չ'ուզեր.
Ճամբորդն՝ որ ամենէն աղէկ տեղը նստած էր, ան-
տարբերութեամբ մը պատասխան կու տայ. Շահ
զարմանալու բան: Մեծ մայրաքաղաքի մը մէջ կա-
ռավարութիւնը հրաման հանած էր որ կատաղու-
թենէն ազատ ըլլալու ապահով նշան չունեցող
շները բռնուին: Ասանկով սաստիկ շատ շներ բռ-
նուեցան, եւ ամէն տեսակէ խառն՝ սենեկի մը մէջ
դրուեցան, որոնք ահրելի վայնասուն մը կ'ընէին:
Միայն շնիկ մը հանդարտ կը կենար ու մեծ մտա-
ծութեանց մէջ կ'երեւար: Միտ կը դնէր թէ դուռն
ինչպէս կը բացուի կը գոցուի. եւ մէկէն դռնափա-
կին վրայ ցատքելով՝ մարմնոյն ծանրութեամբը վար
կը կախուի ու դուռը կը բանայ: Ասիկա յաջողը-
նելէն ետքը՝ շանց անհանդարտ բազմութեան վրայ
նայելով՝ վեհութեամբ մը անոնց գլուխը կ'անցնի,
եւ յաղթանակաւ բոլոր բազմութիւնը մինչեւ քաղ-
քին դուռը կը հասցընէ, ուսկից ամէն մէկն ուրա-
խութեամբ իր տիրոջ քով կը փախչի:

Անասնոց գործքերուն մէջ կան անանկ գործքեր՝
զորոնք եթէ մեկնել ուզենք, պէտք է որ վրանին
մտածելու պէս բան մ'ենթադրենք: Օրինակի ա-
ղագաւ, շուն մը փայտէ վանդակի մէջ փակուելու
ըլլայ, անհանդարտութեամբ փայտէ սիւնակները

կը կրծէ, ասոր հակառակ երկաթէ վանդակի մէջ հանդարտ կը կենայ. որովհետեւ առջի դէպքին մէջ կը տեսնէ որ իր աղբաները փայտէ սիւնակները կրնան կոտորել ու իր ազատութիւնը զսպող արգելքը վերցընել, ուր որ ասոր հակառակ՝ երկաթն իր աղբաներուն կարծր գալով՝ անմիջապէս կը հետեւցնէ որ ամէն աշխատութիւն պարապ է ու անօգուտ փորձէն ետ կը կենայ: Շուն մը՝ երբ որ կը տեսնէ որ տէրը գլխարկը կ'առնէ, կ'իմանայ որ տնէն ելլել կ'ուզէ, անոր համար կը սկսի տէրը շողոքորթել ու երեսէն վեր ցատքուտել, որպէս զի զինքը հետն առնէ. աս ալ նոյնպէս խորհրդածութիւն ընել չէ մի: Աս մտաւոր երեւցող գործողութիւններն աւելի եւս յայտնի կը տեսնուին խաբէական գործք մը գործելու ատեննին, երբ որ իրենց բաղձանքը կատարել ուզեն: Ասոր աղէկ օրինակ մ'ունինք տան խոշոր շան մը վրայ, որուն վզի կապը թոյլ կապուած ըլլալով՝ ամէն գիշեր կը փախչէր ու մերձակայ դաշտը կ'երթար ոչխար մը կը խղդէր. գործքը լմնցընելէն ետքը մտաւոր գետակն երթալով՝ քիթը բերանն աղէկ մը լուալէն ետեւ՝ որ արիւն չտեսնուի, օրը չծագած՝ տուն կը դառնար, գլուխը նորէն վզի կապին մէջ կը խոթէր, ու չարագործութեան ամէն կասկածը վերցընելու համար՝ խոտի վրայ տարածած՝ քուն կը ձեւացընէր:

Շներն ալ ձիերուն պէս շատ անգամ պարապ երեւակայութեամբ ու վախով կը խրոչին: Արսորդ մը իր հաւորս շան հետ տուն դարձած ատեն՝ տեսաւ որ շունը մէկէն կեցաւ, եւ իր սպառնալից խօսքերուն միտ չղնելով՝ առաջ երթալ չէր ուզեր: Արսորդը գետինը նայելով՝ իսկզբան աչքին այնպէս երեւցաւ որ լայն գլխարկով խոշոր մարդ մը, տարածուած թեւերով ու երկայն բարակ գաւազանի պէս մարմնով գետինը փռուած կեցած ըլլայ: Աս

Տրեշը՝ որն որ շունը վախցուցած ու երեւակայու-
թիւնը տաքցուցած էր, խոշոր աղքանի մը շուքն էր՝
գետինը զարկած, որն որ երեկոյեան լուսով աւելի
եւս մեծցած կ'երեւար: Հասարակ ժողովուրդը կը
կարծէ որ շներն ու ձիերը ոգի կը տեսնեն եւ անոր
համար մեզի անծանօթ պատճառէ մէկէն կը խրտչին:
Աս աղքանի շքին պէս տեսակ տեսակ պատճառ-
ներ ժողովրդեան մէջ նոյն աւելորդապաշտութիւնը
խոթած կ'երեւան:

Վիննէոս կը զրուցէ որ շան սովորութիւններէն
մէկն է մուրացկանաց վրայ հաջել: Մուրացիկներն՝
ինչպէս յայտնի է՝ պատուտած զգետներ կը հագ-
նին, շատ անգամ թշուառութենէ ու աղքատու-
թենէ նեղութիւն կրելով՝ վայրենի աշուրներ կ'ու-
նենան: Արդ շներն ասանկ մարդ մ'որ տեսնեն,
երեւակայութեամբ աւազակի կամ չարագործի տեղ
դնելով՝ կը սկսին վախնալ ու հաջել: — Ֆրանք-
ֆուրդի քովերը գեղացի մը շուն մ'ունէր՝ որն որ
չէ թէ միայն տան մէջիններն ու տուն յաճախող-
ները կը ճանչնար, այլ նաեւ օտարականներն ալ՝
հագուստին համաձայն կ'ընդունէր ու կը բարեւէր:
Թէ որ հարուստ մարդ մը տուն կու գար, շունն
անմիջապէս քովը կ'երթար, կը հոտուրտար ու հե-
տը մեծարանօք կը վարուէր. իսկ թէ որ անպիտան
հագուած մէկն ըլլար, մէկէն վրան կը յարձակէր,
թշնամական հաջելով մը զինքը կ'ընդունէր, աղ-
բաները կը ցուցընէր, երբեմն ալ թեթեւ մը կը
խածնէր: Անոր համար տնեցիք ու դրացիք շան
հաջելէն կ'իմանային թէ տուն եկողն ինչ տեսակ
մարդ է, աղքատ՝ թէ հարուստ. իսկ կանանց հետ՝
ինչպէս նաեւ ուրիշ ամէն շներն ալ՝ աւելի անու-
շութեամբ կը վարուէր:

Վենդանեաց իրարու հետ թէպէտեւ նուազ աս-
տիճանաւ խօսակցիլը կամ իրենք զիրենք հասկըցը-

ները շատ զարմանալի է: Աս բանս մէկտեղ ապրող
 չորքոտանեաց ու թռչնոց վրայ յաճախ կը տես-
 նենք, որոնք առանձին պահանորդ մ'ալ կը դնեն,
 որն որ մասնաւոր ձայնիւ մը մտահաս վտանգը կ'ի-
 մացընէ: Ալպեան մուկը, կարմրաթեւ թռչունն եւ
 ուրիշ շատ թռչուններ ալ այնպէս կ'ընեն: Նմա-
 նապէս աս ճարտարութիւնը ծիծառին վրայ ալ
 տեսնուած է, ինչու որ դիտուած բան է որ երբ որ
 ձագերնուն վրայ թշնամի կը հասնի, վայնասուն մը
 կը փրցընեն, որով մերձակայ ծիծառներն անոնց
 օգնութեան հասնելով, ամէնքը մէկտեղ՝ յարձա-
 կող թշնամին անհանդիստ կ'ընեն: Նոյնպէս միջա-
 տաց վրայ ալ դիտուած է որ շատ բան եղանակաւ
 մ'իրարու իմաց կու տան: Հուպէր ու Նագրէյլ
 բնագնիներուն միջնոց վրայ ըրած զննութիւններն
 աս բանիս մէջ շատ լուսաւորութիւն տուած են:
 Թէ որ մէկը միջնոց բունոյն վերին երեսն աւրելու
 ըլլայ, եղած դժբախտութեան լուրն անմիջապէս
 մէկ բոպէի մէջ զարմանալի շուտութեամբ ամբողջ
 գաղթականութիւնը կ'իմանայ, ձայն ձուն չիլսուիր,
 բայց կը տեսնենք որ աւերածը տեսնող միջիւններն
 ասդին անդին կ'իյնան, իրենց ընկերներուն քովը
 կը մտանան, գլուխ գլխու եկած, փողկուկ փող-
 կուկի վրայ դնելով՝ մէկմէկէ կը բաժնուին ու եղած
 աւերին բօթաբեր կ'ըլլան. թէ որ մէկը բան բե-
 րելու համար ճամբայ ելած էր, անմիջապէս կը
 դառնայ ու ինքն ալ կը սկսի առջեւն եկողին իմա-
 ցընել, եւ մէկ վայրկենի մէջ ամէնքը կը ժողվուին
 իրենց աւերածին ճարը հոգալու համար: Գար-
 ձեալ տեսնուած է թէ ինչպէս երկու մերձակայ
 գաղթականութիւններ իրարու հետ պատերազմ
 կ'ընեն, թէ ինչպէս յառաջապահները բուն բա-
 նակին ամէն դիպուածները կ'իմացընեն իրենց ըն-
 կերներուն, որոնք նոյն լրոյն համաձայն կը շարժին:

Հաւատարիմ զննիչներ աս ալ կը հաստատեն որ բանակ մը նեղ մտած ատեն՝ ճակատատեղին կը թողու, իր տեղը կը քաշուի, որպէս զի ուրիշ օգնականներ առնելով՝ պատերազմն աւելի սաստկութեամբ շարունակէ:

Հանց վրայ աս կարողութիւնն աւելի եւս շատ կերպաւորած կը տեսնենք: Հատ զարմանալի պատմութիւններ կը պատմուին, որոնք շան աս կարողութիւնը կը ցուցնեն, մենք անոնց մէջէն միայն այնպիսի բաներ յառաջ կը բերենք՝ որոնք նոյն իսկ ականատեսները գրած են: Օլուքինկհէմի կոմսութեան Հորդն գեղին մէջ Լոնտոնցի Պարոնին մէկը 1818ին տուն մը կը գնէ. իսկ տան առջի տէրը քառորդ մը հեռու գեղացւոյ տուն մը կը քաշուի: Նոր տէրը հետը բերած էր Վաղղիայի խոշոր շուն մը, որն որ առաջին տիրոջ գեղեցիկ Նոր Փունտլանտացի շան տեղ տան պահապան պիտի ըլլար: Բայց առջի շան լակոտներէն մէկը նոյն տան մէջ թող տրուած ըլլալով՝ Վաղղիայի շունը նոյնը կը չարչարէր: Երբ որ շունը մեծցաւ, չարչարանքն ալ մեծցաւ: Աերջապէս օր մը աս խեղճ շունը մէկէն աներեւոյթ կ'ըլլայ կ'երթայ ու քանի մը ժամ ետքը իր մօրը՝ տան առջի շան հետ կը դառնայ կու գայ: Մէկէն երկուքը մէկտեղ Վաղղիայի շան վրայ կը յարձակին եւ շուտ մը կը սպաննեն: Հոստեղս յայտնի կը տեսնուի որ քնչուիցէ եղանակաւ մը լակոտն իր նեղութիւնները մօրը իմացուցած պիտի ըլլայ եւ խօսք մէկ ըրած պիտ'որ ըլլան վրէժ առնելու: — Լիտս քաղքին մէջ վերաբոյժ մը քաղքին արուարձանները ժուռ գալու ատեն՝ ճամբուն վրայ ոտքը խեղած լորամօրգաց շան լակոտի մը կը հանդիպի, վրան կը խղճայ, կ'առնէ տուն կը տանի, ոտքը կը կտակէ, եւ երկու երեք օրէն ետքը տնէն դուրս կը թողու: Ընկէ ետքը շունն ամէն առտու վերքը դարմանել տալու

Համար վիրաբուժին տունը կու գար, մինչև որ ոտքը բոլորովին առողջացաւ : Քանի մը ամիս ետքը լակոտն ուրիշ կաղ շուն մ'առած՝ նորէն վիրաբուժին եկաւ, եւ խեղճ նայեցուածքով մը կ'ուզէր իմացընել որ իրեն ըրած ողորմութեան գործքն իր խեղճ բարեկամին ալ ընէ :



Պատմութիւն իմ տերտէ :

Ասոնք կենդանեաց մէջ ամենէն աղէկ վազողները կրնան սեպուիլ . անոր Համար նապաստակ, եղջերու եւ ուրիշ վայրենի անասուններ բռնելու կը գործածուին : Քաւական մեծ են, բայց անդամոց համեմատութիւն ամենեւին չունին . շատ երկայն ու բարակ են : Երկայն ու սրածայր ցուռկ, կարճ ու հասարակօրէն կախուած ականջ, երկայն բարակ ոտք, հասարակօրէն կարճ դեղնագոյն կամ գորշ երբեմն ալ բոլորովին սեւ կամ ճերմակ մազ՝ աս շանց գլխաւոր նկարագիրներն են : Քիչ կը հաջնեն, տեսութիւննին սուր է, բայց հոտառութիւննին՝ դէշ . վրանին հաւատարմութիւն ու արթնութիւն շատ չիտեսնուիր : Աս շան բուն տեղն արեւելք ու Յունաստան է, անոր համար ալ Յունական շուն կը կոչուի : Շատ տեսակներ կան՝ մեծ ու պզտիկ, երկայն ու կարճ մազերով . բայց ամէնքն ալ միշտ կը դողան : Ասոնց մէջ ամենէն դեղեցիկը՝ Ռուսիայինն է, կախուած երկայն մազերով . Գուրլանտի քերծէն՝ Անգղիայի գամիռէն բարձր է :

Ասոնց մարմնոյն բարակութիւնը, թեթեւութիւնն ու նիհարութիւնը պահելու համար շատ սննդաբար կերակուր չեն տար, այլ այնչափ միայն՝ որչափ իրենց զօրութիւնը պահելու հերիք է, ուստի հասարակօրէն հացով կը կերակրեն : Իրենց արագութիւնն ու որսորդութեան բերումն արտաքոյ կարգի է : Եղջե-

բեայ փողին հնչիւնը կամ որսորդին ձայնը լսելուն պէս՝ իրենց փոյթը կը կրկնապատկուի, բաղձանքնին զանազան շարժումներով կը յայտնեն ու հաջելով՝ իրենց կռուելու եւ յաղթելու եռանդը կը ցուցնեն: Երբեմն ասդին անդին կը վազեն ծակուծուկ տեղերը կը քննեն ու հակառակորդ մը կը փնտռեն. երբեմն արագոտն նապաստակին ու աղուէսին հետքը գտնելով՝ ետեւէն կ'իյնան, եւ ետեւէ ինկած կենդանւոյն ինչ ըլլալը պէսպէս ձայներով կը յայտնեն: Աս միջոցիս մէջ հալածեալ յոգնած կենդանին, որն որ մինչեւ նոյն ատեն ազատելու համար իր ոտուրներուն վրայ վստահացած կ'ըլլայ, կը յուսահատի եւ կամ հալածչին դէմ կ'ելլէ կամ անոր ճարակութեան դէմ խարդախութիւն մը կը բանեցընէ: Աւերջին դէպքին մէջ շան հանդարտութիւնն ու անչփոթութիւնը զարմանալի է: Հոգին բերանն եկած կենդանին շունը խաբելու եւ ճամբէն խոտորցընելու համար՝ ետեւ կը դառնայ, վեր կը ցատքէ, կարծես թէ ոտքը գետինը կոխել չ'ուզեր. թփերու եւ խրամներու վրայէն կը ցատքէ, առուակներու եւ գետի մէջէն կը լողայ. բայց փուճ ու պարապ տեղ: Շատ օրինակներ կան որ կը հաստատեն թէ աս շները նապաստակ կամ ինչեւիցէ վայրենի կենդանի մը տեսնելու որ ըլլան, զանազան ձեւերով որսորդին կ'իմացընեն: Կերմանիայի մէջ որսորդին մէկը տուն դառնալէն ետքը շունն ետ մնալով ուշ կը հասնի, եւ զանազան շարժումներով, հաջելով ու մէյ մը որսորդին, մէյ մը հրացանին նայելով՝ կը ստիպէ զինքը որ հետը գայ: Արսորդը հրացանը ձեռքն առած՝ շան ետեւէն կ'երթայ. հազիւ թէ պարտիզին ետեւի դին թփերուն կը հասնի, շունն արդէն յառաջ գացած ըլլալով՝ որսորդին կողմը նապաստակ մը կը քշէ, որն որ որսորդին հրացանէն կը զարնուի:

Բնականապէս ամէն շուն առջեւէն փախչող կենդանին կը հալածէ, ետեւէն կ'իյնայ ու կը բռնէ. շունը խաղալով մէկ կենդանւոյ մը ետեւէն ինկած տակն՝ շատ անգամ խաղը կը մոռնայ, բնութիւնը կ'այլայլի, եւ հասնելու որ ըլլայ՝ շարաշար կը խածնէ, ինչպէս շատ անգամ պատահած է: Շատ հեղձակոտները տան հաւերը խաղու համար կը հալածեն, բայց թէ որ բռնեն, կը խղզեն: Ասանկներուն պատժով իմացընելու է որ տան մէջ ինչ որ տեսնեն՝ չարչարելու չէ: Աատուներուն հետ շարունակ կռուի մէջ են, մէկզմէկ չեն կրնար տանիլ. բայց օրինակներ ալ կան՝ որ այնպէս ընտանեցած են իրարու հետ՝ մինչեւ մի եւ նոյն ամանէն կ'ուտէին ու մէկտեղ կը խաղային:

Շունն ուրիշ կենդանիներէն աւելի հակում ուսէր կ'ունենայ ուրիշներուն վրայ. շան ու ձիուն իրարու հետ բարեկամանալը շատ հասարակ է եւ այնչափ աչքի չի զարնէր. բայց երբեմն այնպիսի կենդանեաց վրայ ալ սէր ու հակում ունեցած են, ուսկից որ բնականապէս կը գարշին: Ֆլէմինկ՝ իր շիմունք կենդանաբանութեան ըսուած գրքին մէջ հետեւեալ բարեկամութեան օրինակը յառաջ կը բերէ: Հաւորս շուն մը արու սագ մը սպաննած էր. աս ըրած յանցանքին համար՝ սատկեցուցած սագն իր վզէն կախեցին: Կտեղճ էգ սագն իր ընկերակիցը կորսընցընելուն համար շատ տրտում կը կենար, եւ մեռած սագը վզէն կախուած շունը տեսնելուն պէս՝ պոռալով ետեւէն կ'երթար: Ասանկով քիչ ժամանակուան մէջ աս երկու հակառակ բնութիւն ունեցող կենդանիք իրարու հետ այնպէս բարեկամացան, մինչեւ մէկ յարկի տակ կը բնակէին ու մի եւ նոյն յարդի վրայ մէկզմէկ փոփոխակի կը տաքընէին, եւ երբ որ շունը կը բաժնուէր, սագը միշտ կարկաչող վայնասուն մը կը փրցընէր:

Աւրիշ ասոր նման պատմութիւն մ'ալ ականա-
տես հեղինակ մը կը պատմէ: «Անգամ մը Պարոնի
մը տուն այցելութեան գացի, կ'ըսէ, ուր գեղեցիկ
պատկեր մը աչքս զարկաւ. պատկերին մէջ քա-
շուած էր տանտիկինը, որուն ուսը գեղեցիկ փա-
սեան մը կը նստէր, իսկ թեւերուն մէջ՝ պղտիկ
շուն մը կար: Տանտիկինը պատկերին մեկնութիւնը
համառօտի մը տուաւ: Քանի մը տարի յառաջ,
ըսաւ, շունն ու փասեանը տանս մէջ ընտանեցան:
Փասեանը Վաղղիայէն եկած էր, իսկ շունը՝ սենե-
կիս շունն էր: Իսկզբան շատ վտանգաւոր էր երկուքն
ալ մէկտեղ թողուլ, որովհետեւ առոյգ ու քաջա-
սիրտ շունը՝ կատուները չորհարելու ետեւէ էր, եւ
բնութիւնը գրգռող ամէն բանին կը հաջէր: Ի վե-
րայ այսր ամենայնի փորձ մը փորձեցի զերենք մէկ-
տեղ վարժեցնելու. փասեանն իր բնական թշնա-
միէն այնչափ շատ չվախեցաւ. իսկզբան երկուքն ալ
անվտաճութեան մը կը ցուցնէին, բայց կամաց
կամաց աս անվտաճութիւնն ալ անցաւ, թռչունն
երթալով վախը թողուց, իսկ շունն իր խեղու-
թիւնը կորսնցուց, ու վերջապէս մէջերնին կատա-
րեալ բարեկամութեան կապ մտաւ: Ուտելու ժա-
մանակը կու գար նէ՝ փասեանը կը թռչէր ուսս կ'ել-
լէր եւ իր սովորական ձայնը կը հանէր. հաւորս
շունն ալ նոյն ձայնը լսածին պէս՝ հոն կու գար:
Առջեւնին պնակով մը մէջը հաց ջարդած կաթ կը
դրուէր, ուսկից շունն ու փասեանը մէկտեղ կ'ու-
տէին: Ուտելէն ետքը շունն իր սովորութեան հա-
մաձայն՝ առանձին տեղ մը կը քաշուէր կը քնա-
նար, փասեանն ալ անոր քովը կը թռչէր ու իրմէ
չէր բաժնուեր՝ մինչեւ որ շունն արթննար: Երբ որ
շունը հետս պտրտելու կու գար, փասեանը մինչեւ
շան դառնալու ատեն անհանգիստ կ'ըլլար: Անգամ
մը փասեանը մոռացմամբ սենեկի մը մէջ փակուած

մնալով՝ շունը բոլոր օրը տրտում տխուր անցուց, եւ հաջելով ու ոռնալով կը ցուցընէր թէ որչափ սէր ու ընտանութիւն ունէր անոր հետ: Աս բարեկամական կապը դժբախտ վերջ մ'ունեցաւ. գեղեցիկ շնիկը գողցուեցաւ, իսկ թռչունը տրտմութեանէն ամենեւին բան մը չէր ուտեր, որով մէկ շաբաթ ետքը իր տխրութեան ու բարեկամութեան զոհ եղաւ:»:

Օ զանազան բնութեամբ կենդանիներ մէկտեղ բերելն ու վարժեցընելը՝ գեղեցիկ տեսարան մըն է. ասոնց իրարմէ ունեցած բնական դարչումը շատ անգամ կրթութեամբ կը վերցուի, շատ անգամ ալ դիպուածով մը: Մկնորսին մէկը խոշոր մկի ձագեր բռնելով՝ կատուի մը կու տայ, որուն ձագերը քիչ մը յառաջ առած խղզած էին: Քանի մ'օրէն ետքը մուկ բռնողը զարմանալով կը տեսնէ որ կատուն ասոնք իր խղզուած ձագերուն տեղը դրեր է, եւ ասանկով մկերն իրենց բնական թշնամիէն կը դիեցուին: Աատուն բնական ատելութիւն մ'ունի մկերուն դէմ, բայց հոստեղս մկի ձագերուն խնայեց, որպէս զի կաթն իրենց տալով՝ թեթեւնայ: Մուկ բռնողն ասոնք իր շահուն համար ամենուն ստակով կը ցուցընէր:

Աս մօտերս Անտոնի մէջ մէկը զանազան բնութեամբ կենդանեաց փոքր խումբ մը ժողված է. որն որ ուրիշ ամէն ծանօթ եղածներէն զարմանալի է: Ուազէրլոյի կամրջին կողմն ամէն օր հինգ ոտնաչափ մեծութեամբ գառազեղ մը կը տեսնուի, որուն մէջ կրնայ ըսուիլ որ ամէն տեսակ կենդանիք կան: Նոյն կենդանիներուն տէրը կը զըուցէ որ տասնութութը տարի ամբողջ աշխատած է աս զանազան ու հակառակ բնութեամբ կենդանիները խաղաղական կենաց վարժեցընելու: Բայց աս իրեն անցուցած տարիներն առանց շահու չէին, ցուցընելու համար՝

մօրդ գլուխ կէս փէննի կ'առնէր : Մարդ կ'ապշի կը
 մնայ երբ որ կատուն, մեծ մուկը, հասարակ մուկը,
 ճուռակը, ճագարը, ծովու խողուկը, բուէճը, աղա-
 նին, տարմահաւը, ճնճղուկը . . . մէկտեղ նոյն գա-
 ռագղին մէջ տեսնէ, որ տկարն առանց վախի՝ զօ-
 րաւորին քով, զօրաւորն առանց տկարին վրայ յար-
 ձակում ընելու՝ հանդիստ կը կենան, մանաւանդ թէ
 իրարու հետ կը խաղան : Անկարելի է որ մէկը կա-
 րող ըլլայ աւելի գեղեցիկ, աւելի զուարճացուցիչ
 տեսարան մ'երեւակայել, քան զոր աս հակառակ
 բնութեամբ կենդանիներն իրենց բարեկամական
 կապովը կ'երեւցնեն : Աղանին ճագարին հետ իրենց
 բոյնը շինելու համար յարդի կտորի մը վրայ խաղա-
 լով կը կռուին. ճնճղուկը՝ երբեմն կատուին գլու-
 խը կը ցափէ, երբեմն բուէճին, թէպէտ եւ եր-
 կուքն ալ ի բնէ իրեն թշնամի են : Նոյն մարդուն
 աս բանս գլուխ հանելու բանեցուցած կերպը շատ
 դիւրին, բայց երկարատեւ համբերութեան կարօտ
 էր : Յառաջ ամէն մէկուն աղէկ կերակուր կու տար,
 ու լաւ մը կշտացրնելէն ետեւ՝ առանձին առանձին
 ղերենք քովէքով բերելով՝ կը ջանար վարժեցը-
 նել : Ասանկով յափշտակող կենդանեաց վայրենի
 բարքը տկարներուն վրայ երբեք չէր գրգռեր, եւ
 իրենց բնութիւնը՝ կարգաւոր ու քաղցր վարմուն-
 քով յաղթուեցաւ. նոյն իսկ տեղն ու պարագաներն
 իրենց բնութիւնը քաղցրացրնելու շատ յարմար
 էին : Իրենց ամէն բաղձանքներն ու զուարճութիւնը
 աս փոքր գաւազղին մէջ կը սահմանաւորէին. միայն
 ծեր կատուն երբեմն երբեմն դուրս կ'ելէր, բայց
 կամրջին վրայ քանի մը անգամ երթալ գալէն ետ-
 քը՝ նորէն իր ընկերներուն քովը կը դառնար, որոնց
 հետ այնչափ տարի խաղաղութեամբ անցուցած էր՝
 առանց մտքէն անցընելու որ մէկը խղդէ կամ կլլէ :

Ինչպէս որ յառաջ ըսինք, շները հասարակօրէն ջրին քիչ շատ ընդդիմութիւն ունին. իսկ աս շան մասնաւոր Լողակ անունը կը ցուցնէ որ ինք մէկալներէն նուազ ընդդիմութիւն ունի: Զքի մէջ բան փնտռելու եւ ջրային կենդանիներ որսալու շատ կը գործածուի, եւ ասոր՝ աղէկ յարմարութիւն ալ ունի, որովհետեւ ոտքի ճիրանները թաղանթով մը քիչ մը միացած ըլլալով՝ աղէկ կը լողայ: Զքի քով եկածին պէս՝ կը սկսի տիրոջն երեսն ի վեր աղաչել որ ջրին մէջ բան մը նետէ: Բան սորվելու մէջ ուրիշ ամէն շները կը գերազանցէ, եւ մասնաւոր պատրաստականութիւն մ'ունի իր ճարպկութիւնն ի գործ դնելու, մանաւանդ երբ որ աղէկ տեսակ է եւ ուտելու բան մը կը յուսայ: Տիրոջմէն չիբաժնուիր, ու անոր բաները՝ որչափ որ դժուար ալ գայ բերնով կը տանի, եւ վայ անոր՝ որ բերնէն հանել ուզէ: Թէպէտ եւ այսչափ աղէկ յատկութիւններ ունի, բայց գեղեցիկ չէ. խոշոր գլուխ մ'ունի, մարմինը կարճ ու հաստ է, մազերն երկընկէկ ու դանդուր:

Աս շան վրայ շատ զարմանալի պատմութիւններ կը պատմուին, որոնք իր աշխուժութիւնը, հաւատարմութիւնն ու տիրասիրութիւնը կը ցուցնեն: Հետեւեալ դէպքը հաւատարիմ ազգերէ առած հոս կը դնենք: Գաղղիայի առաջին մեծ յեղափոխութեան ատեն՝ յեղափոխական ատեն մը անպարտ ծերունի մը ի մահ դատապարտեց: Արբոր խեղճը բանտ դրուեցաւ՝ իր բոլոր ընտանիքը կառավարութեան վախէն ցրուեցան. իրեն ալ բարեկամաց հետ խօսակցութիւն ու թղթակցութիւն ընելը խստիւ արգելուեցաւ: Բայց աս ծերը քովը բարեկամ մ'ու-

նէր՝ որուն իր քովն երթալը մէկը չէր կրնար իրմէ
 արդելել. աս էր փոքր տեսակ ջրասպակ մը, որն
 որ տէրն երբեք չէր թողուր: Աս հաւատարիմ շնի-
 կը՝ որ տիրոջը բռնուելուն ներկայ էր, հետը մինչեւ
 բանտ գնաց, բայց թող չտրուեցաւ որ տիրոջ քով
 կենայ: Շունն ասով տիրոջ քով մօտենալու ջան-
 քէն ետ չկեցաւ, բայց ամէն անգամ ալ կը վռն-
 տուէր: Աերջապէս շան անյողգողգ հաւատարմու-
 թիւնը՝ բանտապետը շարժեց, որ զանիկա տիրոջը
 քով թող տուաւ: Շունը տէրը տեսնելով՝ արտա-
 քոյ կարգի ուրախացաւ, եւ անկարելի կ'ըլլար մէյ
 մ'ալ տիրոջմէ բաժնել: Բայց բանտապետը վախ-
 նալով որ չըլլայ թէ իր պաշտօնը կորսնցընէ, բռ-
 նութեամբ առաւ դուրս հանեց: Երկրորդ օրը շու-
 նը նորէն բանտ եկաւ տիրոջը քով, եւ անանկ ամէն
 օր քիչ մը ժամանակ տիրոջը քով թող կը տրուէր:
 Աերջապէս դատապարտութեան վճռոյն կատարուե-
 լու օրը՝ շունը դատաստանարանին առջեւ ժողված
 բազմութիւնը պատուելով՝ տիրոջը քով եկաւ: Գա-
 տավճիւր կարգացուելէն ետքը տէրը նորէն բանտ
 տարուեցաւ, եւ որովհետեւ թող չէին տար որ շու-
 նը քովն երթայ, խեղճ անասունը բոլոր գիշեր դրան
 առջեւն անցուց: Երբ որ գլխատութեան ահաւոր
 ժամը հասաւ, բանտին դուռը բացուեցաւ ու պա-
 տուական ծերունին դուրս ելաւ, շունը զինքը դրան
 սեմոց առջեւ խնդութեամբ ընդունելով՝ վրան ցատ-
 քեց. Ո՛հ, ըսաւ դատապարտեալը, խեղճ շուն, ալ
 զքեզ աս ձեռքս պիտի չջշափէ: Տէրը սպաննուե-
 լէն ետքն ալ հաւատարիմ շունը դիակը չթողուց.
 Հապա թաղուելէն ետքը գերեզմանին չորս կողմը
 կ'երթար կու գար ու վրան կը պառկէր: Աս ցրտա-
 գին անկողնոյն վրայ առջի գիշերը, երկրորդ ու եր-
 րորդ օրն անցուց, մինչեւ դրացի մը տեսնելով՝ ե-
 կաւ առաւ ու շոյելով իր տունը տարաւ, բայց որ-

չափ ալ աշխատեցաւ՝ բան մը չկրցաւ կերցընել, հապա միջոց մը գտնելով՝ դարձեալ փախաւ տիրոջը գերեզմանը դարձաւ: Ետքը քիչ մը վարժելով՝ ամէն առտու կու գար իր նոր պաշտպանին քով քիչ մը բան կ'ուտէր, վերջը նորէն գերեզման կը դառնար ու երթալով կը հիւժէր կը մաշէր: Աս նոր տէրը շունը գերեզմանէն բոլորովին հեռացընել ուզելով, զինքը յաճախ կը կապէր, բայց շունն ինք զինքն ազատ գտնելուն պէս՝ դարձեալ գերեզման կը դառնար: Նոյն իսկ տիրոջը բարեսիրտ բանտարանն ալ իրեն կերակուր կը բերէր, բայց ինք անկից վերջը ալ չէր ուզեր ուտել, եւ իր տէրը գըտնելու համար՝ գերեզմանը բանալու կ'աշխատէր, բայց իր նիհարացած անդամները շուտով յոգնեցան ու իր տիրոջը գերեզմանին վրայ ինկաւ մեռաւ: (Գողշի 1798):

Ասկից զատ՝ խիստ շատ օրինակներ կան՝ որ շներն իրենց տէրերը մինչեւ գերեզման թողուցած չեն. դեռ քիչ մը առաջ կը տեսնուէր շուն մը՝ որ երբեք չէր բաժնուեր իր տիրոջը գերեզմանէն, որն որ 1830ին Յուլիսի յեղափոխութեան ատեն Փարիզի փողոցներուն սաստիկ պատերազմին ատենն ինկած ու շատ քաղաքացեաց հետ մէկտեղ թաղուած էր: Տիրոջը գնդին ազգային պահապանները նոյն տեղն իրեն փոքր տնակ մը շինեցին, կին մ'ալ ամէն օր իրեն կերակուր կը բերէր, եւ միայն անկից կ'ապրէր: Նոյնպէս Լոնտոն 1827ին Ս. Գրայտսի գերեզմաննոցին մէջ շուն մը կար, որ երկու տարի տիրոջը թաղուած տեղէն բնաւ չհեռացաւ: Միշտ տրտում տխուր կը կենար. կ'երեւար որ տիրոջը բարեկամութիւնը կ'երեւակայէր, եւ կարծէր թէ օր մը պիտի գայ՝ որ հետը նորէն տեսնուի: Գրացիք ամէն օր իրեն կերակուր կու տային ու տնակ մ'ալ շինեցին, ուսկից մինչեւ իր մահը չհեռացաւ:

Հարիւր տարիէն աւելի առաջ, Պրանտէնպուրկցի
Գասպար անուն Սպանիացի պաշտօնակալ մը իր ծա-
ռային հետ Ս. Աթթարտոս լերան վրայէն Ախիւեան
ձորը իջնալու ատեն՝ գեղի մօտ բարձր լեռնէն ձեան
հիւս մը փրթաւ ու զիրենք ծածկեց: Պաշտօնակալին
շնիկն՝ որ հեռուէն ետեւէն կ'երթար, երբոր տեսաւ
որ տէրն աներեւոյթ եղաւ, խեղճ խեղճ ոռնալով՝
մէկէն ձիւնը պեղելու սկսաւ. բայց իր փոքր թաթիկ-
ներն օգուտ մը չէին կրնար ընել: Անոր համար լերան
վրայ եղած վանքը վապեց՝ ուր որ տէրը գիշերն ան-
ցուցած էր: Հոն սկսաւ կրօնաւորաց երեսն ի վեր
հաջել ու մէկուն մէկալին զգեստէն բռնած՝ դուռը կը
քաշէր, եւ աս եղանակաւ կ'ուղէր կրօնաւորաց իր
միտքն իմացընել. ասանկով օր մը գիշեր մ'անցուց:
Երկրորդ օրը կրօնաւորները շան ըրածին վրայ մտա-
դիր ըլլալով՝ զարմացած ետեւէն գացին, շունը զի-
րենք մինչեւ նոյն տեղը տարաւ, ուր որ ձիւնը զտէրը
գոցած էր, հոն հասածին պէս՝ սկսաւ զանազան ձայ-
ներով ծածկուած տիրոջը համար օգնութիւն խըն-
դրել: Անոնք շան խնդրածն իմանալով՝ հարկաւոր
գործիքները բերին ու մեծ աշխատութեամբ դուրս
հանեցին դժբախտները, 36 ժամ ձեան տակ կե-
նալէն ետքը, որոնք անարատ մնացած էին միայն ար-
տաքոյ կարգի երկիւղ մը կրելով: Չուկ քաղքին
Օսվալտեան եկեղեցւոյն մէջ Պրանտէնպուրկցւոյն
չիրմին վրայի արձանն ու անոր ոտքը փորուած հա-
ւատարիմ շան պատկերը՝ աս պատմութեան ստու-
գութեան վկայ է:

Ս Է աճառականին մէկը տեղէ մը ստակ առնելով՝
ձիով տուն կը դառնար: Ճամբան ստրկին քսակը
ձիէն վար կ'իյնայ ու վաճառականը չ'իմանար. իսկ
քովի շունն իյնալը տեսնելով՝ վրան կ'երթայ որ
առնէ, բայց ծանր ըլլալուն համար՝ չ'իկրնար ետեւէն
տանիլ, անոր համար տիրոջը ետեւէն կը վազէ,

ձիուն դիմացը կ'ելլէ ու կատաղութեամբ շարունակ կը հաջէ, այնպէս որ վաճառականն ընելիքը չէր գիտեր: Տէրը շան կը հրամայէ որ լուէ, ձեռքի խարազանովը կը զարնէ, բայց պարապ տեղ: Շունն ունայէն ու հաջելէն չի դադրիր, ու ձիուն վրայ յարձակելով՝ տէրը վար առնել կ'ուզէ, եւ երբ որ տէրը խարազանով քանի մը անգամ իրեն կը զարնէ, ան ատեն շունը կատղելով՝ ձին կեցընելու համար կը սկսի անոր ոտուընները խածնել: Ասոր վրայ վաճառականը կ'այլայլի, կարծելով որ շան կատաղութիւնն է բռնեք, եւ շունը շատ սիրելուն համար՝ մեծապէս կը ցաւի որ զինքը մեռցընելու պիտի հարկադրի: Շատ կ'աշխատի շունը հանդարտեցընելու, բայց աս ալ պարապ ըլլալով՝ ատրճանակը կը հանէ, շան վրայ կը պարպէ: Շունը կ'իյնայ կը գլորտըկի, բայց վերջէն ինք իրեն կու գայ եւ սողալով ու մանչելով տիրոջը կը մօտենայ. վաճառականն ասոր չկրնալով դիմանալ՝ մտրակը կը զարնէ ձիուն ու կը թողու կ'երթայ: Խել մը յառաջ երթալէն ետեւ, իմանալով որ քսակը քովը չէ, միտքը կու գայ որ շան արտաքոյ կարգի վարմանց պատճառն աս քսակն եղած ըլլայ, եւ կորսուած ստրկէն աւելի խեղճ շան վրայ կը սկսի ցաւիլ ու շուտ մը շունը զարկած տեղը կ'աճապարէ. բայց շունն հոն չգտնելով՝ անոր արիւնալից հետոց ետեւէն կ'երթայ եւ զինքը քսակին քով պառկած կը գտնէ: Վաճառականը շատ կ'աշխատի որ շունն առողջացընելու ճար մը գտնէ, բայց անոխակալ կենդանին՝ քիչ մը ետքը տիրոջը ձեռքը լզելով՝ վերջին շունչը կու տայ:

Շանց՝ կրթութեամբ արուեստ ու խաղ սորվեցընելու փորձը շատ հին է. մենք հոստեղս Մոնղոլայնէն առած՝ աս բանիս օրինակ մը յառաջ կը բերենք, զորն որ հեղինակը Պլուտարքոսին խօսքերովը կը պատմէ: «Պլուտարքոս Հոմի շան մը վրայ կը

պատմէ որ Մարկեղոսի թէատրոնին մէջ արտաքոյ կարգի խաղեր կը խաղար. անգամ մ'ալ խաղի մը մէջ Վեսպասիանոս կայսեր առջեւ զաւելտական ծաղրածութիւններ բրաւ : Ուրիշ անգամ մ'ալ մեռնիլ ձեւացուց, շինծու դեղ մը առնելէն ետքը՝ որն որ կտոր մը հաց էր. նախ սկսաւ սարսափածի պէս դողալ, անորոշ քայլերով սկսաւ երթալ, վերջը մեռածի պէս գետինը փռուեցաւ, եւ թող տուաւ որ խաղին համաձայն՝ զինքը տեղէ տեղ փոխադրեն : Ետքը երբ որ իմացաւ թէ ժամանակն եկած է, կամաց կամաց սկսաւ շարժիլ, իբրեւ թէ ծանր քնէ մը սթափելու պէս, եւ գլուխը վեր վերցընելով՝ այնպէս մը չորս կողմը կը նայէր՝ որ բոլոր հանդիսատեսաց զարմանքը վրան գրգռեց : Մետիչեան գերդաստանը շուն մ'ունէր, որ սեղանի ատեն սպասաւորութիւն կ'ընէր, սկաւառակներն ու բաժակները կը փոխէր կը դնէր ու ամէն կրցած ծառայութիւններն այնպէս վայելչութեամբ կը կատարէր, որ տեսնողը կը զարմացընէր :

Հենրիկոս Գ. Գաղղիայի թագաւորն ամէն տարի իր թռչնոց ու շանց համար հարիւր հազար թալէր ծախք կ'ընէր : Ասոնց մէջ ունէր երեք պզտիկ սիրական սկունդ, զորոնք կը կրէր փառաւոր շղթայով մը վզէն կախուած զամբիւղի մը մէջ : Այսպէս իր սենեկին մէջ կ'երթար կու գար, եւ ամէն բանէն աւելի զուարճալի էր իրեն աս փոքր կենդանեաց հետ ըլլալ : Աս Լիլի, Միմի ու Գիդի անուն շնիկները, զորոնք մեծ ծախքով Զմիւռնայէն բերել տուած էր, արտաքոյ կարգի սիրուն ու ընտանի էին : Ասոնց սորվեցուցած էին պահանորդ զինուորներու պէս պահպանութիւն ընել, որոնք զարմանալի եղանակաւ աս պաշտօնը կը կատարէին : Թագաւորին անկողնոյն գլխուն վերեւը պատին մէջ կամար մը շինուած էր, եւ սկունդները առջեւի թաթիկնին կոթընցուցած՝

պահանորդութիւն կ'ընէին: Սուլելու ձայն մը պահանորդութեան փոխուելուն ժամանակը կ'որոշէր: Պահանորդութիւն ընող շնիկն աս ձայնը լսելուն պէս՝ շուտ մը վար կ'իջնար ու քնացող ընկերին ահանջէն խածնելով՝ կ'արթընցընէր: Այսպէսով Աիլի, Միմի ու Գիդի մինչեւ առաւօտ փոփոխակի իրարու կը յաջորդէին, եւ ասոնցմէ աւելի արթուն ու հաւատարիմ պահապան չունէր թագաւորը:

Անգղիացի մէջ գողերը բաւական չեն համարիր անձամբ գողնալ եւ ուրիշներն ալ գողութեան գրգռել, այլ նաեւ անմեղ անասուններն ալ աս վնասակար արուեստին մէջ կը կրթեն: Թէ շներն որչափ խոհեմութեամբ ու խարդախութեամբ աս բանս կը կատարեն, կը ցուցընէ հետեւեալ օրինակը՝ որն որ իրաւամբ շատերուն զարմացումը գրգռած է: Անգղիացի նաւապետ մը Նորուեկիա վաճառականի մը այցելութիւն կ'ընէ, հետը գեղեցիկ շուն մ'առած՝ զորն որ Անգղիա գնած էր: Նորուեկիացի վաճառականը շան վրայ շատ հաճելով՝ նաւապետը նոյնն իրեն կը պարգեւէ: Շունը նոր տան մէջ շուտով կ'ընտանենայ ու տիրոջը շատ սիրելի կ'ըլլայ: Օր մը երբ որ վաճառականը խանթին մէջ կը նստէր, շունն իրեն կը մօտենայ ու առջեւի ոտուրներն անոր ծնկուրներուն վրայ դնելով՝ բերանը բան մը բռնած՝ իրեն կ'երկընցընէ: Տէրը կ'առնէ բերնէն, կը նայի որ քսակ մըն է՝ մէջը տասուերկու արծաթով: Աւաճառականը չկրնալով իմանալ թէ աս ստակը շան ձեռքն ուսկից անցած է, օրն ու ստրկին տեսակը թղթի մը վրայ կը նշանակէ: Շունն աս կերպով ատեն ատեն ստակ կը բերէր, զորն որ ինք նոյն զգուշութեամբ կ'առնէր կը պահէր, եւ թէպէտ միտքը կու գար որ գուցէ աս ստակներն իր վաճառակցէն առած ըլլայ, որուն տունն ինք շատ կը յաճախէր, ի վերայ այս ամենայնի կը լռէր: Անգամ

մը մէկալ վաճառականն իրեն այցելութեան գալով՝
 կը պատմէ որ խանթէն ժամանակ ժամանակ ստակ
 կը պակսի. շեմ կրնար իմանալ, ըսաւ, ինչպէս ըւ-
 լալը, որովհետեւ ստրկին արկղն անվնաս մնացած է,
 ոչ ոք անոր կը մօտենայ, եւ ուրիշներուն առջեւ
 արկղը ոչ երբեք կը բանամ: Շան տէրն իր բարե-
 կամին աղաչեց որ իր շան աղէկ միտ դնէ: Աաճա-
 ռականին բարեկամը մտադիր եղաւ եւ արկղը սե-
 նեկին մէջ այնպէս մը դրաւ, որ ինք գրասեղանին
 առջեւ նստած ատեն՝ արկղը կոնակը կ'իյնար, իսկ
 սեղանը՝ որուն վրայ համրուած ստակները կը կե-
 նային, անկիւն մը դրուած էր: Երբ որ շունը խա-
 նութն եկաւ ու իր սովորութեան համաձայն ջեր-
 մարանին քով պառկեցաւ, խանթին տէրն արկղը
 բացաւ, քիչ մը ստակ հանեց ու սեղանին վրայ
 դնելէն ետքը՝ իր գրասեղանին քով այնպէս նստե-
 ցաւ որ շան ամէն շարժումները կրնար գիտել: Շու-
 նը քիչ մը ժամանակ հանդարտ կենալէն ետքը՝ սո-
 ղալով սեղանին քով գնաց ու քիչ մը ստակ առ-
 նելով՝ նորէն իր տեղը քաշուեցաւ: Քիչ մը ետքը
 շունը ջերմարանին քովէն ելլելով՝ զանազան շար-
 ժումներով կ'իմացընէր որ դուրս ելլել կ'ուզէ,
 խանթին տէրը զինքը թողուց, եւ շունը գողցած
 ստակը տարաւ տիրոջը տուաւ: Ասանկով գողու-
 թիւնն երեւան ելաւ, գողցուած ստրկին գումարն
 ալ շան բերածին հետ ճիշդ կը հաւասարէր: Ա'ե-
 բեւայ որ աս շունը յառաջագոյն գողի մը քով ե-
 ղած եւ անկից աս ճարտարութիւնը սորված ըլլայ:

Աւազակ մը իր արուեստն անանկ կերպով մը
 կը բանեցընէր, որուն նմանը քիչ կրնայ գտնուիլ:
 Ասիկա շուն մը վարժեցուցած էր, որ նշան տուա-
 ծին պէս՝ հանդիպած անձին վրայ կը յարձակէր ու
 կը կողոպտէր՝ առանց իր տիրոջը գործակցութեան:
 Անգամ մը աս աւազակը վաճառականի ծառայի մը

կը հանդիպի ու քովէն կ'անցնի կ'երթայ: Բայց հա-
ղիւ թէ քանի մը քայլ կը հեռանայ, մէկէն իր ե-
տեւէն եկող շունը ծառային վրայ յարձակելով՝
բռնելն ու գետին զարնելը մէկ կ'ընէ: սարսափած
մարդը կը կողոպտէ եւ բոլոր արժէք ունեցող բա-
ներն առնելէն ետքը՝ տիրոջն ետեւէն կը վազէ, որն
որ անտարբերութեամբ մը յառաջ գացած էր:

Ի՛նչոք շատ անգամ ալ առանց կրթութեան ու
վարժեցընելու՝ հաւատարմութիւնն ու սէրը կը քա-
ջալերէ զունը տիրոջը համար նոյնպիսի գործքեր
գործելու: Շատ դժբախտ օրինակներ կան՝ որ բա-
րեկամ բարեկամի հետ կատակի համար կռիւ կամ
սրախաղութիւն ըրած ժամանակ, մէջերնէն մէկուն
շունը զտէրը պաշտպանելու մտքով մէկէն հակա-
ռակորդին վրայ յարձակելով՝ չարաչար խածնէ:
Բայց շատ անգամ ալ իրենց տէրը մեծամեծ վտանգ-
ներէ ազատած են: Ալէսկոյ քաղքին մէջ մարդուն
մէկը գիշեր մը իր շան հետ մէկտեղ տուն դառնա-
լու ատեն՝ աւազակի մը կը հանդիպի, որն որ ձեռ-
քը բիր մ'ունէր: Աւազակը խեղճ մարդուն կուրծ-
քէն բռնելով ու գլուխը հարուած մը տալով՝ ստակն
ու ժամացոյցը կը պահանջէր: Մարդը զարհուրած՝
աւազակին պահանջմունքը կատարելու վրայ եղած
ժամանակ, մէյ մ'ալ հաւատարիմ շունը կը հասնի,
մէջը կը մտնէ ու աւազակին վրայ յարձակելով՝
վզէն կը բռնէ գետինը կը պառկեցընէ ու քանի մը
տեղէն ալ չարաչար կը խածնէ. կարծես թէ տիրոջն
ալ յորդոր կ'ըլլայ որ ան ալ բան մ'ընէ: Բայց
տէրն իր ողջ առողջ ազատելուն վրայ գոհ ըլլալով՝
աւազակին բիրը կ'առնէ, կը փախչի: Իսկ շունը
պատերազմը քիչ մ'ալ շարունակելէն ետքը, յաղ-
թանակի նշանի պէս՝ բերանն աւազակին զգեստէն
կտոր մ'առած՝ տիրոջը ետեւէն կը հասնի: Աս
զգեստի կտորին մէջ վեց թալեր կար:

Հիմակ աչուրնիս դարձրնենք շան տեսակներուն վրայ: Ստուգիւ մէկէն դիմացնիս արտաքոյ կարգի պէսպիսութիւններ կ'ելլեն, որոնք այնպէս մեծ են, որ չիկրնար ցուցուիլ շանց բուն կամ սկզբնական տեսակը, ուսկից որ ուրիշները յառաջ եկած են: Երկրիս գրեթէ ամէն կողմը շան զատ տեսակ մ'ունի, եւ աս ամէն տեսակներուն մէջ կամ իրական կամ կրթութենէ ծագած տարբերութիւն մը կայ:

Հիմակուան ատենս զանազան տեղեր գտնուող վայրենի շները՝ չենք կրնար իբրեւ շանց սկզբնական տեսակը դնել, ինչու որ անոնք աւելի քաղաքակա- նութենէ հեռացած են, քան թէ իրենց սկզբնա- կան վայրենութեան վիճակը պահած: Ոմանք, ինչ- պէս վերն ալ ըսինք, Ոսկեդոյն գայլը կամ հասարակ գայլը կը դնեն: Տնկուած ականջներուն նայելու ըլ- լանք, մեր հասարակ շները կէս մը վայրենի շանց կը նմանին. ոմանց գլխուն ձեւին նայելու որ ըլլանք, կը մօտենան Աւստրալիայի Տինկոյ շան, որն որ վայ- րենի եւ սկզբնական տեսակին ճիշդ ու որոշ նկարա- գիրը պահած է: Քիւլիէ ասոր աղէկ դիտողութիւն ընելով՝ շանց ցանկ մը շինած է, եւ անոնց գրե- խուն ձեւին, ցուկին ու ծնօտին երկայնութեան կամ կարճութեան նայելով, զիրենք երեք գլխաւոր ցե- ղերու բաժնած է: Ա. Սպանդաշներ, Բ. Սպանիա- կան շներ, Գ. Գամիոններ:

Ա. Յեղ. Սոյն-ը-ն-ի-ն-ը: Այս դասին անգամազննա- կան նկարագիրն ան է որ գլուխը քիչ կամ շատ երկայն կ'ըլլայ. գլխուն կողմնական ոսկրներն եր- թալով մէկմէկու կը մօտենան. վարի ծնօտներուն գլուխները՝ վերի կողմնական առամանց հետ հորի- ղունական գծի մէջ կ'իյնան:

1. Ըստ Բարաքայի շուն կամ Տինկոյ: (Տես էջ 15—17:)

2. Գաղղիական Սպանդաշուն: Ըստ Պիւֆոնի աս շունը բարեսառն օգարածնի շուն է. հիւսիսային ու հարաւային կողմերն որ տարուի, սեռը կը փոխուի. հիւսիսային կողմերունը՝ Գանիական ըսուած Գամիոի, իսկ հարաւայինը՝ Որսականաց Պառականի կը փոխուի, երկու դէպքերուն մէջն ալ օգարածնին ազդեցութենէն: — Աս շան գլուխն երկրնկէկ է. ականջները նախ վեր տնկուած կ'ըլլան, ետքը վար կը կախուին: Մազերը կարճ են ու պառկած, փորի կողմը՝ քիչ մը աւելի երկայն: Մորթին գոյնը մութ դեղին է, սեւով խառն, երբեմն ալ ձերմակ, գորշ կամ սեւ. դուն ուրեք խայտ կ'ըլլայ: Աս կենդանւոյն զարմանալի յատկութիւնն իր մեծ զօրութիւնն է, միանգամայն ճարպիկ ու հաւատարիմ ալ կ'ըլլայ: Հասարակօրէն մնալաճառք սպանդանոցի մէջ կը գործածեն, ուր ամենէն վայրենի ցուն ալ կանջէն խածնելով՝ սպաննուելու տեղը կը բերէ:

3. Գանիական Գամիո: Աս շան ձեւն ու բնութիւնը Գաղղիական սպանդաշան հետ շատ նմանութիւն ունի, միայն գոյնը հասարակօրէն ձերմակ կ'ըլլայ, շատ սեւ, մոխրագոյն կամ գորշ կըր բծերով: Աչքն ըստ մեծի մասին կանանչի կը զարնէ, ագին բարակկէկ է: Ասիկա կառաց ետեւէն վազելու եւ տուն պահպանելու կը գործածուի:

4. Պառական կամ Քերծէ: Աս սեռին տակ կ'ըլլան. Ա. Իրլանտայի, Բ. Սկոտլանդի, Գ. Ռուսիայի, Դ. Իտալիայի, Ե. Տաճկաց պառականները: Տաճկաց ու Իտալիայի պառականները երկչոտութեան ու շարունակ գողալու մէջ իրարու շատ կը նմանին: Ար կարծուի որ աս բանս իրենց արտաքոյ կարգի զգայուն ըլլալէն յառաջ գայ: Ռուսիայի պառականները գեղեցիկ շանց կարգը կրնան անցնիլ. ասոնք երկայն

բարակ մարմին մ'ունին, երկայն բարակ մազերով
 ծածկուած են, իրենց երկայն ազին շատ շնորհօք
 վեր կը բռնեն: Իրլանտայի պառականը երեք մին-
 չեւ չորս ոտք բարձր կ'ըլլայ: Հասարակ պառական-
 ները սիրուիլ ու շոյուիլ շատ կ'ախորժեն: Իրենց
 սրտին զարկը՝ աղէկ գիտուելու որ ըլլայ, շատ զօ-
 րաւոր ու փոփոխական է: — Ալպանիայի շունն աս
 սեռին տակ կ'երթայ:

Բ. Յէշ. Սդանի-ի-ան շներ: Ասոնց գլուխը չափաւոր
 երկայնաձեւ է. ըղբղի ու ճակտի խոռոչը՝ լայն ու
 ընդարձակ, ականջնին՝ երկայն ու կախուած է: Աս
 գասին վերաբերող շներն ամէնն ալ ճարպիկ, խե-
 լացի, գործունեայ ու օգտակար շներ են:

Ճ. Ալպանիական լորաշուն: Աս շան մարմնոյն մա-
 ղերը՝ երկայն, գանգուր ու մետաքսանման են, որմէ
 աղէկ գլխարկ ու զանկապան կը շինուի: Աս տեսա-
 կը Ալպանիայէն յառաջ եկած է ու լորամարգի որ-
 սալու կը գործածուի: Ասոր տակ կ'իյնան: Ա.
 Փոքր լորաշուն կամ լորասկունդ, Բ. կարճամազ լո-
 րաշուն, Գ. Շիկախայտ սկունդ. աս վերջնոյն մոր-
 թին գոյնը սեւ է, աչուրներուն, շրթունքներուն ու
 վզին վարի կողմը եւ ոտուրներուն ետեւի դին նա-
 րընջագոյն մազեր ունի: Գ. Մալգիկ սկունդ. ասի-
 կա կարճ ցուկ ու կլոր գլուխ ունի, մարմինը շատ
 երկայն ու բարակ եւ մետաքսանման մազերով ծած-
 կուած է. գլխուն մազերը երեսը բոլոր կը գոցեն,
 մարմնոյն մեծութիւնը միջակ կատուի չափ կ'ըլլայ:
 Ե. Առիւծաշնիկ կամ բարշաւոր շնիկ. ասիկայ մե-
 ծութեամբ ու ձեւով առաջնոյն կը նմանի: Կէս մէջ-
 քէն սկսեալ՝ մարմնոյն մազերը շատ կարճ ու բարակ
 են. իսկ գլխոյն կողմը երկայն մազերով ծածկուած
 է, որով առիւծի կերպարանք մը կը ստանայ: Պոչին
 ծայրը փնջաձեւ է. աս շունը յառաջ շատ յարգի էր:
 Չ. Կալարիկ սկունդ. գայլ որսալու կը գործածուի:

6. Լողակ շուն: (Տես էջ 78—86:) Ասոր տակ կ'երթան. Ա. Լողակ շնիկ, ասիկա առջինէն կը զանազանուի միայն մեծութեամբն ու մազերուն բարակութեամբը: Ար կարծուի որ Բուն Լողակ շնէն ու Սպանիական փոքր լորաշնէն յառաջ եկած ըլլայ: Բ. Խորթ ջրասպակ. բարակ ոտուրներով, նեղ գրկով, երկայն բարակ, մոխրագոյն ու գանգուր, երբեմն կարճ ու ողորկ եւ կոնրկի վրայ սեւ մազերով կ'ըլլայ: Հովուաց ու Լողակ շնէն յառաջ եկած է:

7. Հետավար շուն: (Տես էջ 63—72:) Աղուեսաշունն ասոր պղտիկ մէկ տեսակն է:

8. Հաւաշուն կամ հաւասպակ: Ասիկա մարմնոյն ձեւովը վերինին կը նմանի, միայն ցուկը՝ քիչ մը կարճ ու սուր է, պոչը՝ քիչ մը հաստ ու կարճ, ականջներն ալ կարճ ու նեղ, ոմանց կախուած, ոմանց վեր անկուած, քիթն ալ երբեմն ձեղքուած է: Մորթին գոյնը՝ կամ մաքուր ճերմակ է եւ կամ գորշ կամ դեղին բծերով: Աս շունը շատ խելացի է ու իր տիրոջը հաւատարիմ: Հոտառութիւնը շատ բարակ ըլլալուն՝ նապաստակ, կաքաւ ու փասիան բռնելու կը գործածուի: Ասոր տակ կ'երթայ Բենգալեան կամ Գաղմատեան հաւաշունը, որուն մորթին գոյնը ճերմակ է, սեւ ու դեղին փոքր բծերով գունաւորուած. շատ անգամ աս շունը խիստ պղտիկ պոչով կը ծնանի, եւ հասակն առնելէն ետքը՝ բոլորովին կը կորսընցընէ: Մազերը շատ կարճ են:

9. Համիրավար կամ Գորշկահան շուն: Ասիկա որսորդ շնէն՝ իր կարճ ու հաստ ոտուրներովը կը զանազանի, ականջները երկայն, լայն ու կախուած են, պոչն երկայն է, մազերը կարճ, ճերմրկի վրայ գորշ կամ սեւ բծերով, բայց շատ անգամ բոլորովին սեւ կամ գորշ ալ կ'ըլլայ: Աս շան գործքն է, գորշուկներուն խոռոջները մանելով՝ բռնել. ասոր աղէկ կը յարմարին իր կարճ ու հաստատուն

առուըները: Ասոր տեսակը երկուք է. Ա. Ծուռ
 առուըներով ու Բ. Ուղղասրուն. առաջնոյն առջևի
 առուըները գէպ ի առջև ծռած ու շատ կարճ են:

10. Հովուաց շուն: (Տես էջ 18—26:)

11. Գայլաշուն կամ Պոմերան շուն: Ասիկա
 աղուէսէն քիչ մը մեծ է. ականջները շիտակ ու
 սրածայր են, ցռուկը՝ երկայնաձև, պոչը՝ վեր տըն-
 կուած ու գէպ ի առջև քիչ մը գալարած. մար-
 մնոյն մեծ մասն երկայն ու փափուկ մազերով ծած-
 կուած է. գոյնը ճերմակ, գորշ կամ սև, խիստ
 քիչ պիսակ կ'ըլլայ:

12. Սիրերիկ կամ Սիրերիական շուն: Ասիկա
 վերինին նման է, միայն մարմինն երկայն ու գան-
 գուր մազերով ծածկուած է: (Տես էջ 38—46:)

13. Լաքիմական շուն: Աս ալ վերինին կը նմանի,
 բայց երկու տեսակ մազ ունի, վրայինը՝ հաստ, իսկ
 անմիջապէս մարմնոյն վրայ՝ բամբակի պէս բարակ:
 (Տես էջ 26—34:)

14. Լաքոյ ըսուած Բերուացւոց շնիկը:

Լս ցեղին տակ կ'իյնան նաև Ալբան կամ Ս.
 Բեռնարգոսի շունը, նոր ֆունտլանտիայի շունն ու
 Մենորս շունը: Քիւվիէ զասոնք կարգի մէջ դրած չէ,
 բայց երկու առաջինները Պէմարէ վրան կ'աւելցընէ:

Գ. Յէշ. Գ. Գ. (Ա. Գ. Գ.): Լսոնց ցռուկը քիչ
 կամ շատ երկայնաձև է. ըղեղին սկաւառակը վեր
 ցցուած. ճակտին խոռոչը բաւական մեծ: Վարի
 ծնօանին ատամանց հորիզոնական գծէն դուրս ելած
 է: Աս շանց ըղեղին սկաւառակը, ուսկից որ գըլ-
 խուն ձևէն ալ կախում ունի, մէկալ ցեղերուն հա-
 մեմատութեամբ պզտիկ է:

15. Սոլոսեան գամիտ կամ ցլասպակ: Ասոր
 մարմնոյն մեծութիւնը մեծկակ գայլու մը չափ է.
 խիստ ու աներկիւղ հայեցուած մ'ունի, թանձր ու
 վար կախուած շրթունքները և կտրուածի պէս

քիթն ու բերանն իրենն ահրելի տեսք մը կու տան : Ոտուրները հաստ ու մտտ են , պոչը վեր տնկուած ու գէպ ի առջեւ քիչ մը ծռած : Մորթին գոյնը հասարակօրէն մութ գեղին է : Աս տեսակին կը վերաբերի Գիպեղացուց ասպակը :

16. Բրիտանացուց գամփու կամ Բրիտանիկ ասպակ : Ասիկա շներուն մէջ ամենէն զօրաւորն է : Մարմնոյն բարձրութիւնը հասարակօրէն երեք տնաչափ կ'ըլլայ : Քիթն ծակերը խորունկ ճեղքով մը իրարմէ բաժնուած են : Ատելի ոտուրներուն վրայ՝ քիչ կամ շատ կերպաւորուած հինգերորդ մատ մը կը տեսնուի : Մորթին գոյնը երբեմն մութ գեղին շերտերով , երբեմն ճերմրկի վրայ գորշ կամ սեւ բծերով է : (Տես էջ 46—58) :

17. Հատահաջ ասպակ կամ Գամփուակ : Ասիկա մեծ գամփուին պղտիկն է . բայց վերի շթունքն ու քիթն աւելի կարճ կ'ըլլայ , մազերը կարճ ու գորշ են , բերնին չորս կողմը սեւ է : Ասոր գործքն է անցնողներուն վրայ հաջել առանց փնաս ընելու :

18. Իսլանդական շուն : Ասիկա կլոր գլխով , բարակ ցուկով , մեծ աչուրներով , կէս մը վեր ցցուած ու կէս մը վար կախուած ականջներով կ'ըլլայ : Մազերն երկայն ու ողորկ են :

19. Գանիական խայտաբղէտ շիկ կամ Հտպիտ շուն : Ասոր ոտուրները բարակ են , պոչը վեր տնկած կը բռնէ . մազերը կարճ եւ հասարակօրէն ճերմակ ու սեւ բծերով խառն են : Աս շունը թէպէտ Գանիական Գամփու կ'ըսուի , բայց անոր եւ ոչ մէկ յատկութիւնն ունի :

20. Խորթ Գամփուակ :

21. Բրիտանական շուն : Ասիկա դուրս ելած աչուրներ , երկայն ու սուր ցուկ , կէս մը կախուած ականջներ ու բարակ պոչ մ'ունի , զորն որ հորիզոնական կը բռնէ : Մազերն առհասարակ կարճ են .

գոյնը սեւ է, աչուրներուն ու ցուկին չորս կողմը, վզին ու սրունքներուն վրայ մութ դեղին բծերով է: Կ'երեւայ որ աս շունը Գանիական շնիկէն ու Շիկախայտ սկունդէն յառաջ եկած ըլլայ:

22. Ըրդուայի շուն: Ասիկա Գամիռակին մէկ տեսակն է, եւ ճետը հիմայ կորսուած է:

23. Ընտալուսիկ շուն: Ասոր գլուխը Գամիռակին գլխուն կը նմանի, իսկ մազերը Սպանիական շան պէս են: Ասիկա Քայնի շուն ալ կ'անուանի:

24. Սաւրիտանիկ շուն կամ հիւսիսային Ափրիկէի շուն: Աս շունը հաստ ու կլոր գլուխ ունի. ականջները լայն կ'ըլլան, շատ շարժուն ու հորիզոնական գիրքի մէջ. փորը ներս քաշուած, ոտուրները բարակ, պոչը չափաւոր: Երկու տեսակ է. մէկը մերկ ու վրան եղ քսուածի պէս, մորթին գոյնը սեւ է կամ մսի գոյն՝ մեծ գորշ բծերով. իսկ երկրորդ տեսակը բաշով կ'ըլլայ, որն որ Տաճկի պառականէն ու վերինէն յառաջ եկած է:



Շունը Իւր-ըն-Քիւն:

Շանց վրայ գրած ծանօթութիւննիս չենք ուզեր ըմբռնել, առանց իրենց կատաղութեան դրժբախտ վիճակը յիշեցընելու: Աս հիւանդութիւնն ամէն օդաբաժնից հասարակ չէ, որովհետեւ ըստ Պարրոյի՝ հարաւային Ափրիկէ անծանօթ է, իսկ արեւելք՝ Եւրոպայի համեմատութեամբ շատ քիչ է: Շուն մը աս հիւանդութեան սկիզբը հիւանդագին ու տկար, եւ հասարակօրէն ապուշ կ'ըլլայ, առանձնութիւն կը փնտռէ, կերակրէն եւ մանաւանդ ջրէն կը փախչի, հաջելու տեղ՝ կը մննչէ ու կը կաղկանձէ, շփոթած ու յիմարած կ'երեւայ, քալելու ժամանակ ոտքը կը սխալի: Օտարականաց վրայ նենգութեամբ կը յարձակի, բայց իր տիրոջը վրայ

դեռ մեծարանք ու սէր կը ցուցնէ: Խածուածքը դեռ վտանգաւոր չէ, բայց դժուարաւ կը բժշկուի: Հիւանդութիւնը յառաջ երթայ նէ՛ կը սկսի բերնէն թուք հանել, ջրէն կը վախնայ, լեզուն դուրս կը հանէ ու բերանը կը փրփրայ: Քալելու ատեն՝ գինովի պէս ասդին անդին կը թարթափի, ցատքելու ժամանակ միշտ կը սխալի: Աչուրները տխուր ու արցունքով լեցուն կ'ըլլան: Գլուխը, ականջներն ու պոչը կախած՝ մղոններով տեղ կը վազէ. բայց ասիկա զատ տեսակ կատաղութեան նշան մըն է, որն որ Ազգոյ կատաղութիւն կը կոչուի, եւ Զերմատենդ ու Գժնդակ ըսուած կատաղութեան չափ սաստիկ չ'ըլլար: Բայց միշտ թէ՛ մարդկան, թէ՛ անասնոց վտանգաւոր է: Շատ հեղ կրնայ ըլլալ որ շուն մը կատղի՝ առանց փրփրալու, պոչն ու ականջը կախելու եւ ջրէն վախնալու. մանաւանդ ջրավախութիւնը քիչ անգամ կը պատահի, անանկ որ կատաղի շունը շատ հեղ լողալով գետը կ'անցնի:

Ամէն դէպքի մէջ ինչ որ ըլլայ՝ լաւագոյն է շունն անմիջապէս մեռցրնել, որպէս զի մարդիկ եւ անասունք իրմէ չխածնուին, որովհետեւ նոյն տեսակ հիւանդութիւնն իր ամէն երեւոյթներովը խածնուողին վրայ կ'անցնի: Բնութեան մէջ ասոր խածուածքէն աւելի սարսափելի թոյն չկայ: Փոքր վէրք մը կամ վիրաց վրայ եկած լորձունքը՝ բաւական է ան ամէն երեւոյթներն յառաջ բերելու: Եղած է որ աս հիւանդութեան սերմը շատ տարի առանց իմացուելու մարմնոյն մէջ կենայ ու պարագաներուն օգնութեամբը մէկէն երեւան ելլէ ու իր գործքը յառաջ բերէ: Խածուած տեղը սաստիկ ցաւ մը կը զգայ դժբախտ խածուողը, ուռեցքը ցաւին հետ մէկտեղ կը տարածի կը սաստկանայ, ջղերը կը թոյլնան, քունը կը պակսի. ծանր հառաչանքներն ու մարդիկներէն վախնալը՝ նոյն զարհուրելի հիւանդու-

Թեան կարապետներն են : Հիւանդութեան աճելովը՝ հետեւութիւններն ալ կը սաստկանան : Աամաց կամաց կը սկսի խեղճը հեւալ, սրտի նեղութիւն ու դժուարաշնչութիւն կ'ունենայ, ջուր կամ փայլուն բան մը տեսնելուն պէս՝ մարմնէն վար պաղ քրտինք մը կը վաղէ, պրկունքներուն կամ լեզուին վրայ կաթիլ մը ջուր որ դայցուի, նեղութիւնն ու սարսափը կը սաստկանայ : Ար սկսի սեւ, պինդ ու մաղձային հեղուկ մը փոխել, ջերմն երթալով կ'աւելնայ : Բայց աս ալ բաւական չէ, խեղճ հիւանդը չորցած լեզուն դուրս կ'երկընցընէ, ձայնը կը մարի, հառաչանքները կը սաստկանան, ծարաւէն կը պապակի, եւ հեղուկ մը տեսնելուն պէս՝ վերջին աստիճանի կատաղութեան մէջ կ'իյնայ : Բերնին մէջ թուք կը ժողվուի, զորն որ անհրաժեշտ բաղձանք մը կ'ունենայ քովն եղողներուն վրայ նետել : Զարհուրելի եղանակաւ աղբաները կը կրճտէ, երեսէն վար սառուցի պէս պաղ քրտինք կը թափէ : Թէպէտ եւ կատաղութեան վերջին աստիճանը կը հասնի, բայց ի վերայ այսր ամենայնի այսպիսի ժամանակները հիւանդն իր խելքը չիկորսընցընէր, եւ իր հիւանդութեան վնասակարութիւնն իմանալով՝ քովն եղողներուն կ'աղաչէ որ հեռանան, որպէս զի մէկը նոյն հիւանդութենէ չընուի : Աւերջապէս ջղերուն քաշուելովն ու դողդողալովը, սրտի մեծ նեղութեամբ, հասարակօրէն հիւանդութեան չորրորդ օրը՝ բաղձացած մահը կը հասնի եւ վերջ կու տայ ան դժբախտութեան՝ որուն նմանը, բաց ի ողջ ողջ թաղուելէն, աշխարհքիս մէջ չիկրնար դանուիլ :

Շատ զարմանալի է որ աս փոխադրական թունաւոր հիւանդութիւնը՝ միայն ան կենդանեաց մէջ կ'ըլայ, որոնց տեսակը կոյր կը ծնանի. թէպէտ ուրիշ անասուններն ալ կ'ընդունին աս հիւանդութիւնը, բայց չեն փոխադրեր : Իսկ մարդս երբ որ

կատաղութեան վերջին աստիճանին կը հասնի, բեր-
նին մէջ կպչուն ճերմակ դեղին ու թանձրկէկ լոր-
ձունք մը կը ժողվուի, որն որ խիստ փոխադրական
է՝ թէ որ կամ բերան կամ աչք կամ ինչ եւ իցէ
մարմնոյ վիրաւոր տեղ մը գալու ըլլայ:

Արբեմն նաեւ առողջ շուն մը բարկութեան ա-
տեն խածնելով՝ նոյն տեսակ հիւանդութիւն կրնայ
յառաջ բերել: Այլիչ հեղինակը՝ որն որ երեսուն-
ուհինգ տարի աս հիւանդութեան ետեւէ ինկած է,
իբրեւ ականատես կը հաստատէ թէ անգամ մը ա-
ռողջ շուն մը տէրը զինքը ծեծելու ատեն՝ կը խաճ-
նէ: Գժբախտը ջրափախութեան հիւանդութեամբ
կը բռնուի ու կը մեռնի. իսկ շունն անվնաս առողջ
կը մնայ առանց ջրափախութեան երեւոյթ մը ցու-
ցընելու: Նոյն դէպքը լուծելու համար դիտեցի որ,
կըսէ, աս տեսակ խածնող շները՝ միշտ առջինեկ-
ներն են. եւ արդէն յայտնի բան է որ աս առջի-
նեկներուն՝ նաեւ կատակով ըրած ամենաթեթեւ
խաճուածքը՝ միշտ դժուարաւ կը բժշկուի. անոր
համար ասոնք թէ որ բարկութեամբ խածնեն, դիւ-
րաւ ջրափախութեան թոյնը կը հաղորդեն: Աւստի
հին ատենէն սովորութիւն կար որ թէ կատուի, թէ
շան՝ կուրածին առջինէկ լակոտները կը խղդէին:



